

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՆԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2007

1

Հրատարակվում է  
Հայաստանի Հանրապետության  
պետական կառավարման ակադեմիայի  
գիտական խորհրդի որոշմամբ

# ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլխավոր խմբագիր՝  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ տնտեսագիտության թեկնածու

Խմբագրական խորհուրդ՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր (նախագահ)
ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ	ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար
ՎԻԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ	ՀՀ Նախագահի օգնական
ՄԱՆՎԵԼ ԲԱԴՄԻՅԱՆ	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՎԱՅԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ	իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԼՅՈՒԲԱ ՄԵՂՐԱԲՅԱՆ	իրավագիտության թեկնածու, դոցենտ
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ԷԴՈՒԱՐԴ ՕՐԴՅԱՆ	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՐԱՆՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ	հոգեբանական գիտությունների դոկտոր
ՄԵԼՍ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ	հոգեբանական գիտությունների դոկտոր
ԳԱՐԻԿ ՔԵՆՅԱՆ	քաղաքագիտության դոկտոր
ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ	քաղաքագիտության դոկտոր
ԽԱՉԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՅԱՆ	կենսաբանական գիտությունների թեկնածու (պատասխանատու քարտուղար)

«ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»  
Երևան

**Академия государственного  
управления Республики Армения**

**ПУБЛИЧНОЕ УПРАВЛЕНИЕ**

*Главный редактор:*

**Оганес Арутюнян** кандидат экономических наук

*Редакционный совет:*

<b>Армен Арутюнян</b>	доктор юридических наук, профессор ( <b>председатель</b> )
<b>Армен Геворгян</b>	руководитель аппарата президента РА
<b>Виген Саргсян</b>	помощник президента РА
<b>Манвел Бадалян</b>	председатель Совета гражданской службы РА
<b>Гагик Арутюнян</b>	доктор юридических наук, профессор
<b>Ваге Степанян</b>	доктор юридических наук, профессор
<b>Ашот Хачатрян</b>	доктор юридических наук, профессор
<b>Люба Меграбян</b>	кандидат юридических наук, доцент
<b>Юрий Суварян</b>	доктор экономических наук, профессор
<b>Эдуард Ордян</b>	доктор экономических наук, профессор
<b>Грант Аванесян</b>	доктор психологических наук
<b>Мелс Мкртумян</b>	доктор психологических наук, профессор
<b>Гарик Керян</b>	доктор политических наук
<b>Мариам Маргарян</b>	доктор политических наук
<b>Хачатур Безирджян</b>	кандидат биологических наук ( <b>ответственный секретарь</b> )

---

**Public Administration Academy of the  
Republic of Armenia**

**PUBLIC ADMINISTRATION**

*Editor-in-Chief:*

**Hovhannes Harutyunyan** doctor of Economics

*Editorial Council:*

<b>Armen Harutyunyan</b>	Doctor of Sciences (Law), Professor ( <b>Chairman</b> )
<b>Armen Gevorgyan</b>	Chief of Staff to the President of the RA
<b>Vigen Sargsyan</b>	Assistant to the President of the RA
<b>Manvel Badalyan</b>	President of Civil Service Council of the RA
<b>Vahe Stepanyan</b>	Doctor of Sciences (Law), Professor
<b>Gagik Harutyunyan</b>	Doctor of Sciences (Law), Professor
<b>Ashot Khachatryan</b>	Doctor of Sciences (Law), Professor
<b>Lyuba Mehrabyan</b>	Doctor of Law
<b>Yuri Suvaryan</b>	Doctor of Sciences (Economics), Professor
<b>Eduard Ordyan</b>	Doctor of Sciences (Economics), Professor
<b>Hrant Avanesyan</b>	Doctor of Sciences (Psychology)
<b>Mels Mkrtyunyan</b>	Doctor of Sciences (Psychology), Professor
<b>Garik Keryan</b>	Doctor of Sciences (Political Sciences)
<b>Mariam Margaryan</b>	Doctor of Sciences (Political Sciences)
<b>Khachatur Bezirjyan</b>	Doctor of Biology ( <b>Executive Secretary</b> )



## СОДЕРЖАНИЕ

<b>Публичное управление</b>	<b>6</b>
<b>О. АРУТЮНЯН</b> <i>РОЛЬ МЕЖБЮДЖЕТНЫХ ОТНОШЕНИЙ В УСЛОВИЯХ БЮДЖЕТНОГО ФЕДЕРАЛИЗМА</i> .....	6
<b>В. БАКУМЕНКО</b> <i>СОВРЕМЕННЫЕ МОДЕЛИ-ПОДХОДЫ УПРАВЛЕНИЯ ОБЩЕСТВЕННЫМ РАЗВИТИЕМ</i> .....	15
<b>Р. МИКАЕЛЯН</b> <i>ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РЕФОРМ ПРАВОВЫХ ОСНОВ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ</i> .....	21
<b>Юридические науки</b>	<b>31</b>
<b>Г. АКОПЯН</b> <i>ОБЩЕСТВЕННЫЕ СВЯЗИ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ</i> .....	31
<b>Р. АКОПЯН</b> <i>ЦЕЛИ И ФУНКЦИИ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ</i> .....	43
<b>С. ЕРИЦЯН</b> <i>МЕЖДУНАРОДНО-ЮРИДИЧЕСКИЙ ОПЫТ ИНСТИТУТА ДВОЙНОГО ГРАЖДАНСТВА И ЕГО ПРЕМЕНЕНИЕ В РА</i> .....	56
<b>Экономика (управление)</b>	<b>65</b>
<b>Б. ЕГИАЗАРЯН</b> <b>А. ГЮРДЖЯН</b> <i>ФОРМИРОВАНИЕ СПОСОБНОСТИ ОСОЗНАННЫХ ДЕЙСТВИЙ- СТРАТЕГИЧЕСКОЕ НАПРАВЛЕНИЕ РАЗВИТИЯ ЧЕЛОВЕЧЕСКОГО РЕСУРСА</i> .....	65
<b>В. БОСТАНДЖЯН</b> <b>Л. МОВСИСЯН</b> <i>КОНСТИТУЦИОННЫЕ РЕФОРМЫ И КОНТРОЛЬ В СИСТЕМЕ СПЕЦИАЛИЗИРОВАННЫХ ГОСУДАРСТВЕННЫХ ОРГАНОВ РА</i> .....	77
<b>Политология</b>	<b>89</b>
<b>М. МАРГАРЯН</b> <i>ТИПЫ ЭЛИТЫ И ПРОБЛЕМА ЛЕГИТИМНОСТИ ВЛАСТИ</i> .....	89
<b>Обзор книг</b>	<b>100</b>
<b>Памятка автору</b>	<b>103</b>

# CONTENTS

<b>Public Administration</b>	<b>6</b>
<hr/> <hr/>	
<b>H. HARUTYUNYAN</b> <i>THE ROLE OF THE INTERBUDGETARY RELATIONS IN THE CONDITIONS OF BUDGETARY FEDERALISM.....</i>	<i>6</i>
<b>V. BAKUMENKO</b> <i>MODERN MODELS-APPROACHES TO SOCIAL DEVELOPMENT MANAGEMENT.....</i>	<i>15</i>
<b>R. MIKAYELIAN</b> <i>THE WAYS OF THE TAX LEGAL POLICY BASIC CHANGES.....</i>	<i>21</i>
<b>Law</b>	<b>31</b>
<hr/> <hr/>	
<b>H. HAKOBYAN</b> <i>PUBLIC RELATIONS OF THE NATIONAL ASSEMBLY.....</i>	<i>31</i>
<b>R. HAKOBYAN</b> <i>THE AIMS AND FUNCTION OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY.....</i>	<i>43</i>
<b>S. YERITSYAN</b> <i>ADOPTING AND ADAPTING THE INTERNATIONAL LEGAL EXPERIENCE OF DUAL CITIZENSHIP INSTITUTES IN THE RA.....</i>	<i>56</i>
<b>Economics (Management)</b>	<b>65</b>
<hr/> <hr/>	
<b>B. YEGHIAZARYAN</b> <b>A. GYURJYAN</b> <i>FORMATION OF THE CAPABILITY OF CONSCIENTIOUS ACTING AS A STRATEGIC ASPECT OF HUMAN RESOURCE DEVELOPMENT.....</i>	<i>65</i>
<b>V. BOSTANJYAN</b> <b>L. MOVSISYAN</b> <i>THE CONSTITUTIONAL REFORMS AND THE CONTROL IN THE SYSTEM OF INDEPENDENT AGENCIES OF THE REPUBLIC OF ARMENIA.....</i>	<i>77</i>
<b>Political science</b>	<b>89</b>
<hr/> <hr/>	
<b>M. MARGARYAN</b> <i>TYPES OF ELITE AND THE ISSUE OF LEGITIMACY OF THE POWERS.....</i>	<i>89</i>
<b>The review of books</b>	<b>100</b>
<hr/> <hr/>	
<b>Instruction to the author</b>	<b>103</b>
<hr/> <hr/>	

**ՀՈՎՅԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր,  
տնտեսագիտության թեկնածու*

**ՄԻՋՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ  
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԵԴԵՐԱԼԻՉՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Շուկայական տնտեսաձևին անցման պայմաններում կտրուկ բարձրացել է և շարունակում է աճել տեղական ֆինանսների դերը երկրի ֆինանսական համակարգում, որով էլ պայմանավորված ավելի է կարևորվում տեղական բյուջեների դերը: Տեղական ֆինանսները հատուկ դերակատարում ունեն զարգացած երկրներում, քանզի դրանք դառնում են պետության ֆինանսական ռեսուրսների ակտիվ մասը: Այս դեպքում առաջ են գալիս մի շարք բարդույթներ, որոնցից մասնավորապես առավել կարևոր նշանակություն են ստանում հետևյալները.

- ինչպիսի՞ մոտեցումներ կիրառել բյուջետային ֆեդերալիզմի համակարգը ձևավորելիս,
- ինչպե՞ս իրականացնել տարբեր մակարդակների բյուջեների միջև եկամուտների և ծախսերի արդարացի բաշխումը,
- ինչպե՞ս որոշել բյուջետային կարգավորման նպատակների ուղղվածությունը, որը պետք է իրականացվի բյուջետային կոնկրետ մակարդակում,
- ինչպե՞ս բյուջետային քաքականության մեջ բոլոր մակարդակներում հասնել միասնական ուղղվածության:

Միջազգային գործընթացում առանձնացվում են բյուջետային ֆեդերալիզմի ամերիկյան, գերմանական և կանադական մոդելները: Ամերիկյան մոդելը կառուցվում է համեմատաբար մեծ ինքնուրույնություն ունեցող նահանգների հիման վրա: Հաճախ այն դիտվում է որպես բյուջետային ֆեդերալիզմի դասական մոդել [6, c. 23]: ԱՄՆ-ում բացակայում է եկամուտների՝ ըստ մասնաբաժինների, բաշխման հորիզոնական համակարգը: Սուբսիդիաների հատկացումը նահանգներին պայմանավորված է նահանգային և տեղական իշխանության մարմինների կողմից բաժնային ֆինանսավորման ծավալներով: Այդպիսի քաղաքականությունը չի նպաստում տարբեր տարածաշրջանների միջև սոցիալ-տնտեսական համահարթեցմանը, այլ ընդհակառակը, նպաստում է հարուստ նահանգների զարգացմանը: Կանադական մոդելը հիմնականում կրկնում է ամերիկյանը: Կան ինչպես ընդհանուր նշանակության,

այնպես էլ իշխանության տարբեր մակարդակների համար անհատական հարկեր:

Գերմանիայի Դաշնությունում գործող սահմանդրությունը պարտավորեցնում է համահարթել համայնքների ֆինանսական հնարավորությունները: Դա իրականացվում է յուրաքանչյուր տարի ստորին օղակներում հրատարակվող օրենքներով, որոնք էլ որոշում են հարկային մուտքերում համայնքների ֆինանսական համահարթեցման բաժինը: Կիրառվող հարկատեսակներից են եկամտահարկը, կորպորացիաների, արհեստակցական և շրջանառության հարկերը: Ֆինանսական համահարթեցման միջոցով հաշվեկշռվում են համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը, որով հնարավորություն է ընձեռվում ֆինանսավորելու կենտրոնական ու տեղական իշխանության մարմինների գործառույթների կատարումը:

Դաշնության նահանգներին ֆինանսական հատկացումները հիմնականում լինում են ընդհանուր, լրացուցիչ և նպատակային նշանակության [7, c. 50]: Հատկանշական է, որ ընդհանուր նշանակության ֆինանսական հատկացումների ծավալը կախվածության մեջ է դրված բնակչության թվից և յուրահատուկ ծախսային ուղղություններից (օրինակ՝ մանկապարտեզները, դպրոցները և այլն): Դրանք հիմնականում կապված են որոշակի խնդիրների հետ և կարող են տնօրինվել համայնքի հայեցողությամբ՝ ելնելով համայնքի կոնկրետ սոցիալ-տնտեսական իրավիճակից: Եթե համայնքներում ընդհանուր նշանակության ֆինանսական հատկացումների հաշվին բյուջետային դեֆիցիտն ամբողջությամբ ծածկելու հնարավորություն չկա, ապա կիրառվում են նաև լրացուցիչ նշանակության հատկացումները: Դրանց էությունն այն է, որ որոշակի նպատակների հետ կապված չեն և պայմանավորված են համայնքում եկամուտի այլ աղբյուրների բացակայությամբ:

Նպատակային նշանակության ֆինանսական հատկացումների դեպքում համայնքները կարող են դրանք օգտագործել կոնկրետ նպատակների համար և պայմանավորված ուղղություններով: Այս դեպքում, կարծես, անտեսվում է տվյալ համայնքի ինքնուրույնությունը, քանի որ նպատակային ներդրումներ իրականացնելիս ծախսային ուղղությունները կայուն են և համայնքն ուղղակիորեն իրականացնում է պետության պատվերը:

Դաշնային կառուցվածք ունեցող պետությունների հիմնական բնութագրություններից է համարվում ինչպես դաշնային կառավարության, այնպես էլ դրա սուբյեկտների կառավարությունների գործողություններում տնտեսական քաղաքականության բազային ուղղվածության համապատասխանությունը: Այլ կերպ, եթե կենտրոնական իշխանության գործողություններն ուղղված են պետական ծախսերի կրճատմանը, ապա ամբողջ տարածաշրջանային քաղաքականությունը պետք է նպատակաւղղված լինի դաշնության կազմում գտնվող սուբյեկտների բյուջետային ծախսերի նվազեցմանը: Բայց այդպիսի հաշվեկշռվածություն հաստատելն անցումային փուլ ապրած երկրներում անչափ



բարդ խնդիր է, որի լուծման համար անհրաժեշտ է ազատ շուկայական դաշնային միտումների և խորը ճգնաժամի պայմաններում կենտրոնացվածության ձգտման միջև գտնել միակ փոխզիջման մոտեցումը: Մասնավորապես, շուկայական տնտեսակարգին համապատասխան միջբյուջետային նոր հարաբերությունների հաստատումը՝ հիմնված բյուջետային ֆեդերալիզմի սկզբունքների վրա, հանդիսացավ իրականացվող բարեփոխումների հաջողության բանալին [6]:

Բյուջետային ֆեդերալիզմի էությունը բացահայտվում է հետևյալ չորս հիմնական սկզբունքով՝

1. համապետական շահերի և բնակչության շահերի միասնությունը՝ որպես բյուջետային հարցերի գծով իշխանության բոլոր մակարդակների շահերի հաշվեկշռվածության հիմք,

2. կենտրոնացման և ապակենտրոնացման սկզբունքների համատեղումը հարկաբյուջետային իրավասությունների սահմանափակման, ծախսերի և եկամուտների բաշխման ու վերջիններս պետության սուբյեկտների բյուջեներ վերաբաշխման դեպքում,

3. բյուջեների ինքնուրույնության բարձր աստիճանը և իշխանության յուրաքանչյուր մակարդակի մարմինների պատասխանատվությունը բյուջեների հաշվեկշռվածության տեսանկյունով, որը բխում է տվյալ տարածաշրջանի կամ համայնքի հարկային ներուժից՝ նկատի ունենալով տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ ՏԻՄ) հարկային նախաձեռնության տրամադրումը,

4. ՏԻՄ-երի ակտիվ մասնակցությունը պետության հարկաբյուջետային քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացում՝ ընդգրկելով նաև միջբյուջետային հարաբերությունները:

Նշենք, որ վերոնշյալ չորս սկզբունքի միասնական դրսևորման դեպքում կարող է ապահովվել բյուջետային ֆեդերալիզմը: Ըստ Ա. Իգուդինի [8, շ. 6-9]՝ այն կարելի է բնութագրել որպես կենտրոնական իշխանության և ՏԻՄ-երի միջև պետության բյուջետային քաղաքականության ձևավորման ու իրականացման, հարկաբյուջետային իրավասությունների սահմանափակման, եկամուտների և ծախսերի բաշխման և վերաբաշխման միասնական սկզբունքներով գործող համակարգ՝ ելնելով ինչպես պետության, այնպես էլ կոնկրետ տարածաշրջանի բնակչության միասնական շահերից:

Բյուջետային ֆեդերալիզմի ձևավորման վերը բերված չորս սկզբունքից երկրորդի վերաբերյալ իրենց դիրքորոշումն են ցուցաբերել մասնավորապես Ռ. Բոուդվեյը [9, շ. 6-9], Մ. Կենը [10, շ. 6-9], Մ. Բերգը [3, շ. 146]: Ըստ Բոուդվեյի՝ ներկայումս դաշնային պետությունում հարկային իրավասությունների ապակենտրոնացումը հանգեցնում է ինչպես օգուտների, այնպես էլ վնասների: Նրա տեսակետում առաջ է քաշվել հորիզոնական արտաքին ֆիսկալ էֆեկտի առկայությունը, որը կապվել է հարկային իրավասությունների բարձր աստիճանի ապակենտրոնացման հետ:

Համատեղ, հետաքրքիր տեսակետ են առաջ քաշել Ռ. Բոուդվեյը և Մ. Կենը, մասնավորապես նշելով, որ չպետք է ծախսային իրավասությունների ապակենտրոնացումն արդյունավետ համարել հարկային իրավասությունների ապակենտրոնացումից, քանի որ ինչպես հարկային, այնպես էլ ծախսային իրավասությունների սահմանումը օրենսդրական խնդիր է և կարող է կարգավորվել բյուջետային ֆեդերալիզմի դաշտում:

Ըստ Մ. Բերգի տեսակետի՝ իշխանության կառավարման տարբեր մակարդակների բյուջեների հաշվին կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ֆինանսավորումն անհրաժեշտ է կատարել մեկ բյուջեի հաշվին՝ «մեկ ծախս, մեկ բյուջե» սկզբունքով, քանի որ հակառակը հակասում է իշխանության տարբեր մակարդակների իրավասությունների և դրանցից բխող ծախսերի սահմանազատման սահմանադրական սկզբունքին:

Վերոնշյալ ենթատեքստում առավել կարևորում և ամբողջական ենք համարում Վ. Հարությունյանի առաջ քաշած այն տեսակետը [1, էջ 44-46], որում նրա կողմից հստակեցվել են բյուջետային ֆեդերալիզմի ձևավորման հիմնական մոտեցումները: Դրանք են՝

1. բյուջետային կառուցվածքի ձևավորումը վարչատարածքային բաժանումների հիման վրա,

2. հարկային և ծախսային իրավասությունները բյուջեներին օրենսդրորեն ամրագրումը,

3. հարկման արդյունավետության բարձրացումը,

4. ստորադաս բյուջեներին այնպիսի հարկատեսակների ամրակցումը, որոնց մեծությունը կախված չէ տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության արդյունքներից կամ կախված է իշխանության կառավարման տվյալ մակարդակի մարմնի կողմից վարվող տնտեսական քաղաքականությունից,

5. ստորադաս բյուջեներին ամրակցված հարկատեսակների հարկման բազայի և տոկոսադրույքների, ինչպես նաև այլ մուտքերի հարկադրույքների նվազագույն ու առավելագույն մեծությունների սահմանումն օրենսդիր մարմնի, իսկ դրանց միջակայքում հարկման բազայի, տոկոսադրույքների և հարկադրույքի կոնկրետ մեծության որոշումը իշխանության ստորադաս մարմինների կողմից,

6. բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումը,

7. իշխանության կառավարման բոլոր մակարդակների բյուջեների կողմից ֆինանսավորվող միավոր աշխատանքների ու մատուցվող ծառայությունների, ինչպես նաև դրանց ծավալների օրենսդրորեն սահմանումը,

8. իշխանության կառավարման տարբեր մակարդակների յուրաքանչյուր բյուջեի հաշվին իրականացվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների համաֆինանսավորման բացառումը:

Բյուջետային ֆեդերալիզմի հիմնադրույթը կողմնորոշվում է դեպի երկու փոխլրացնող միտումների զուգակցումը.

- տարածաշրջանային մարմինների (այդ թվում նաև համայնքների) միջև սոցիալական ծառայությունների շուկայում մրցակցությունը,
- վերը նշված մրցակցության պայմանների հավասարեցումը և ամբողջ երկրի տարածքում ընդհանուր ազգային նվազագույն ստանդարտների ապահովումը:

Այսպիսով, բյուջետային ֆեդերալիզմը հանդես է գալիս որպես տնտեսական բարեփոխումների բարդ ուղղություններից մեկը, որը ներառում է տնտեսական, ֆինանսական և քաղաքական հարաբերություններ:

Հարկ է նշել, որ շուկայական հարաբերություններին անցման սկզբնական փուլում դաշնային կառուցվածք ունեցող երկրներում միջբյուջետային հարաբերությունների բարեփոխումը իրականացվել է բարդ պայմաններում, երբ դեռևս լիարժեք չեն գործել շուկայական տնտեսությանը և ժողովրդավարական պետությանը բնորոշ կառուցակարգը: Ճգնաժամային իրավիճակներում հաճախ անհրաժեշտություն է առաջանում կենտրոնացնել տնտեսական և քաղաքական իշխանությունները: Ակնհայտ է, որ այդ տեսանկյունով ունիտար պետության բյուջետային համակարգի պայմաններում կենտրոնական իշխանությունը ֆինանսական կայունացման կոշտ քաղաքականության իրականացման համար ունի ավելի քիչ սահմանափակ հնարավորություն: Ինչ վերաբերում է դաշնային բյուջետային համակարգին, ապա հարկաբյուջետային համակարգի կենտրոնացումը բավական բարդ է:

Նորանկախ երկրներում ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ձևավորվեց բոլորովին նոր բնույթի հարկաբյուջետային համակարգ: Հատկապես, տնտեսական և քաղաքական բարեփոխումները դարձան բյուջետային համակարգի տարբեր մակարդակների միջև հարաբերությունների վերակառուցման պատճառ: Բյուջետային, հարկային, տեղական ինքնակառավարման համակարգերի ձևավորման սկզբունքների մասին ենթաօրենսդրական ակտերով, իսկ ավելի ուշ նաև ընդունված օրենքներով դրվեցին այդ ոլորտների կարգավորման իրավական դաշտի հիմքերը: Վերջինս, շուկայական տնտեսակարգի պահանջներին համապատասխան, բյուջետային ֆեդերալիզմի ձևավորման գործընթացում ունեցավ վճռական դերակատարում: Բայց շուկայական հարաբերությունների անցման սկզբնական փուլում՝ քաղաքական և տնտեսական ճգնաժամի պայմաններում, միջբյուջետային փոխհարաբերությունների էվոլյուցիոն զարգացումը դուրս է եկել օրենսդրական կարգավորման շրջանակներից և տեղի է ունեցել բավականին հանգիստ ձևով՝ կրելով կենտրոնական և տարածաշրջանային իշխանությունների ու խավերի միջև քաղաքական դիրքորոշումների, վեճերի և փոխհամաձայնությունների ազդեցությունը [5]:

Ինչպես ցույց է տալիս հետսոցիալիստական երկրների փորձը, բյուջետային համակարգի ապակենտրոնացումը համարվում է շուկայական հարաբերությունների անցման սկզբնական փուլում դրսևորված ընդհանուր միտում: Այդ գործընթացի թույլ վերահսկումը, բյուջե-

տային բարեփոխումների նպատակային հիմնադրույթի բացակայությունը, տարածաշրջանների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կենտրոնական իշխանության վրա ճնշումները հանգեցրեցին բյուջետային համակարգի մակարդակների միջև անհաշվելիզ-վածության խորացմանը:

Դաշնային կառավարման շրջանակներում այդպիսի իրավիճակը եղել է անկայուն և ժամանակ առ ժամանակ առանձին տարածաշրջաններ, օրինակ՝ ՌԴ-ում քայլեր են ձեռնարկել բարելավել իրենց վիճակը բյուջետային հիերարխիայում կենտրոնական իշխանությանը ինքնավարության պահանջ ներկայացնելու ճանապարհով կամ դաշնային բյուջե հարկային հատկացումները դադարեցնելու վերաբերյալ որոշումներ ընդունելով: Շուկայական տնտեսակարգին անցման սկզբնական փուլում քաղաքականացման բարձր աստիճանը և միջբյուջետային հարաբերությունների անկանխատեսելիությունը բացասական ազդեցություն ունեցան բյուջետային համակարգի վիճակի վրա և սահմանափակեցին դաշնային կառավարության բարեփոխումներ իրականացնելու, ֆինանսական կայունություն հաստատելու և հարկերը հավաքագրելու հնարավորությունները:

Շուկայական հարաբերություններին անցում կատարած երկրներում բյուջետային համակարգի ապակենտրոնացումը սկսվեց 1990-ականի սկզբներից և ավարտվեց 1997-1998 թթ.: Մասնավորապես, ՌԴ-ում բյուջետային համակարգի մասսայական ապակենտրոնացումն ավարտվեց 1993-ին: Քաղաքական իրավիճակի համեմատական կայունությունը և դաշնային կենտրոնական իշխանության դիրքերի ամրապնդումը հնարավորություն ընձեռեցին 1994-ին իրականացնել վաղուց չավարտված միջբյուջետային հարաբերություններին վերաբերող բարեփոխումները: Կարևորում ենք հատկապես այն իրողությունը, որ տարածաշրջանային մարմիններին իրավունք վերապահվեց հաստատել կազմակերպությունների շահույթի նկատմամբ դրույքաչափ և այդ գանձումները մուտքագրվեցին տարածաշրջանների բյուջեները: Առաջին քայլերը կատարվեցին բյուջետային համակարգի մակարդակների միջև հիմնական դաշնային հարկերի միասնական համամասնական բաշխման հաստատման ուղղությամբ: Օբյեկտիվ հիմքերի հիման վրա մշակվեցին ու կիրառվեցին դաշնային օժանդակության՝ տրանսֆերտների բաշխման նորմատիվահաշվարկային մեթոդները, արդյունքում ձևավորվեց դաշնության սուբյեկտներին ֆինանսական օժանդակության հիմնադրամը: Այս ամենով Ռուսաստանի Դաշնությունում դրվեց բյուջետային ֆեդերալիզմի շուկայական տնտեսակարգին համապատասխանող մոդելի սկիզբը:

Այս փուլում իրականացված բարեփոխումների արդյունքները միանշանակ չեն եղել: Ահազանգող հանազամանք է ընդունվել այն իրողությունը, որ 1994 թ. հնարավոր չի եղել հասնել դաշնության սուբյեկտների միջև բյուջետային համակարգում իրատեսական համահարթեցմանը: Դաշնային մարմինները չեն ունեցել տարածաշրջանների

Ֆինանսական ռեսուրսների իրական պահանջի գնահատման համար հուսալի բազա, ինչը և հանգեցրել է դաշնային մարմինների կառավարման մարմինների կողմից ֆինանսական օժանդակության պահանջի արհեստական բարձրացմանը: Իշխանության տարբեր մակարդակների մարմինների միջև իրավասությունների և իրագործման գործիքների բաժանման թույլ կարգավորումը, կայուն նորմատիվաօրենսդրական բազայի բացակայությունը, բյուջետային համակարգի մակարդակների միջև եկամուտների և ծախսերի համամասնական բաշխման անորոշությունը դիմամիկայում հանդես են եկել ռուսական բյուջետային ֆեդերալիզմի կայացման հիմնական խոչընդոտներ: Ռուսաստանի Դաշնությունում կիրառվել է բյուջետային ֆեդերալիզմի սահմանադրական մոդելը, քանի որ հենց սահմանադրությունն է որոշում բյուջետային համակարգի այնպիսի ընդհանուր սկզբունքները, ինչպիսիք են՝ բոլոր մակարդակների բյուջեների տարանջատվածությունը, սահմանափակվածությունը և ինքնուրույնությունը: Բյուջետային ֆեդերալիզմի սահմանադրական մոդելի հատուկ օղակ է հանդիսանում դաշնության ու նրա սուբյեկտների համատեղ բյուջետային և հարկային իրավասությունները: Մի կողմից դրանք համատեղ սահմանափակում են կենտրոնի ու տարածշրջանների իրավասությունները, իսկ մյուս կողմից հաստատում են դրանց փոխադարձ կապը և փոխկախվածությունը՝ որոշելով բյուջետային և հարկային համակարգերի միասնությունը: Սահմանադրությամբ գործում է հարկման երեք համակարգ, բայց չի նախատեսվում բյուջետային և հարկային համակարգերի ամբողջական բաժանում, քանի որ Դաշնությունը և նրա սուբյեկտները համատեղ են գործում տնտեսական, հարկային բազայով՝ պետական սեփականության տեսքով, հողով, ջրային և այլ բնական ռեսուրսներով: Տարածաշրջանային զարգացման համար նախատեսված են նաև դաշնային հիմնադրամներ, հետևաբար առաջանում են միջբյուջետային կապեր և հարկային համակարգերի փոխադարձ գործունեություն [7]:

Այսպիսով, Ռուսաստանի Դաշնության փորձի ուսումնասիրությունը հավաստում է, որ բյուջետային ֆեդերալիզմի արդյունավետ մոդելի սահմանադրական հիմքեր, բոլոր դեպքերում, գոյություն ունեն: Բայց և այնպես, դրա էությունը բավական բարդ է և իրենից ներկայացնում է պետության կառուցվածքի ու իշխանության մակարդակների տնտեսական և քաղաքական հետաքրքրությունների փոխհամագործակցում, որը հարկային համակարգի, վճարների, գանձումների և բյուջետային հատկացումների ու ծախսերի միջոցով ուղղված է հասարակության դրամական ռեսուրսների ձևավորմանը, տնօրինմանը, բաշխմանը և օգտագործմանը: Հենց այդ համակարգի շրջանակներում է իրագործվում պետության ներսում ֆինանսական շրջանառության գործընթացը, որն արտացոլվում է բյուջետային դրամական ռեսուրսների յուրահատուկ ֆինանսական շրջանառությունների միջոցով՝ դրանց աղբյուրների, իշխանության մարմինների և ռեսուրսները տնօրինող սուբյեկտների միջև:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հարությունյան Վ. Լ.**, Բյուջետային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2003թ.:
2. **Подпорина И.**, Современные проблемы бюджетного регулирования, Экономист, № 7, 1998 г.
3. **Берг О.**, О программе развития бюджетного федерализма в Российской Федерации на период до 2005 года, Вопросы экономики, № 5, 2002 г.
4. Федеральный закон от 26 марта 1998 г. N 42-ФЗ “О федеральном бюджете на 1998 год”.
5. **Марченко Г. В., Мачульская О. В.**, Финансовые механизмы межрегионального выравнивания., Финансы и кредит., 2000 г.
6. **Лексин В., Швецов А.**, Бюджетный федерализм в период кризиса и реформ, Вопросы экономики, № 3, 1998 г.
7. **Игудин А. Г., Попанова Н. А.**, Некоторые проблемы межбюджетных отношений в Германии и России., Финансы, 1999 г.
8. **Игудин А. Г.**, О принципах реформирования в Российской Федерации, Финансы, № 8, 1998 г..
9. **Boadway R.**, Recent Developments in the Economics of Federalism in: Canada: The State of the Federation 1999/2000. Toward a New Mission Statement for Canadian Federalism. Lazar H. (ed.). Queens University (Kingston, Ont.), Institute of Intergovernmental Relations, 2000.
10. **Boadway R., Keen M.**, Efficiency and the Optimal direction of Federal State Transfers.- International Tax and Public Finance, vol. 3, 1996.

**HOVHANNES HARUTYUNYAN**

*Rector of the Public Administration  
Academy of the Republic of Armenia,  
Doctor in Economics*

### **THE ROLE OF THE INTERBUDGETARY RELATIONS IN THE CONDITIONS OF BUDGETARY FEDERALISM**

It has been a long time since the role of the local finance in economic transition has increased its influence on the financial system of the Republic of Armenia. While this process is still going on, the local finance, as an active part of financial resources of the developed countries, has the specific influence on budgetary federalism.

In this sense, the article deals with the models of budgetary federalism in the USA, Germany and Canada and highlights the main principles of this process. In particular, in economic transition the foundation of the interbudgetary relations is the key and important part for successful reforms. This article contains a detailed analysis of the mentioned issues and the author pays our attention to the problems of formation, distribution and application of the financial resources of the population, tax system and budgetary federalism.

**ВАЛЕРИЙ БАКУМЕНКО**

*Доктор наук государственного управления,  
профессор, проректор по научной работе  
Академии муниципального управления,  
г. Киев, Украина*

**СОВРЕМЕННЫЕ МОДЕЛИ-ПОДХОДЫ УПРАВЛЕНИЯ  
ОБЩЕСТВЕННЫМ РАЗВИТИЕМ**

Высокая степень разнообразия, чрезвычайная сложность современных проблем общественного развития, которые непосредственно связаны с существованием и возможностью развития человечества, нуждается в постоянном усовершенствовании действующих и поиска новых подходов, способов и средств их решения [1-10]. Такие проблемы обостряются противоречиями развития общества, масштабами влияния деятельности человечества на окружающий мир, значительной неравномерностью развития стран и регионов и приводят к существенным негативным последствиям, среди которых войны и международный терроризм, техногенные, демографические, экологические и гуманитарные катастрофы, истощение мировых ресурсов, обнищание значительной части населения планеты и др. На сегодня решение большинства таких проблем возможно только путем международного сотрудничества и поиска новых подходов. Как отметил известный русский ученый И.Капица, для выживания человечества необходимо думать не только системно, но и междисциплинарно.

Именно исходя с этих позиций выделено несколько новейших моделей-подходов современного управления общественным развитием, среди которых можно отметить синергетическую, глобализационную, которая охватывает ценностный, экологический, консенсусный и интеграционный подходы, информационно-инновационную, корпоративную и социальную модели-подходы (рис. 1). Их применение в процессах управления всегда усиливается средствами системного и ситуационного подходов, а также управления качеством.

В *синергетической модели-подходе* общество рассматривается как диссипативная система, движение (направление и скорость) которой к определенным стойким состояниям (аттракторам) определяется ее возможностями самоорганизации, качеством систем управления, которые выбирают пути дальнейшего развития на переломных моментах (точках бифуркации). Именно поэтому



эффективное общественное развитие возможно только при условиях успешного, высокопрофессионального управления.

Синергетика рассматривает будущее как паллиативное пространство возможностей, а современность - как напряженный процесс выбора. Распространение синергетической парадигмы стало одним из мощных факторов преодоления границы между естествознанием и обществоведением и построения универсальной эволюционной картины мира.




Рис. 1. Современные модели-подходы управления общественным развитием

*Глобализационная модель-подход* предусматривает усиление взаимосвязи и взаимозависимости разнообразных явлений и процессов в мире, который требует учета их последствий, и базируется на сочетании нескольких очень важных для современного общественного развития принципов, а именно:

- рост приоритета общечеловеческих ценностей и идеалов в системе ориентиров взаимоотношений между странами и народами (*ценностный подход*);
- обеспечение сохранения природных ресурсов, формирование общества устойчивого развития, в котором оптимально с точки зрения человека объединялись бы экономические, экологические и социальные факторы (*экологический подход*);
- стремление к мирному решению любых мировых (международных, региональных, локальных) конфликтов,

ограничение распространения ядерного и другого оружия массового поражения (консенсусный подход);

▪ интеграция государств, их экономики и культуры, сотрудничество стран и народов (интеграционный подход).

*Информационно-инновационный подход* в управлении общественным развитием выходит из реальной ситуации перехода к постиндустриальному обществу услуг и знаний, а в дальнейшей перспективе по мере роста части информационных услуг к его наиболее развитой стадии - информационному обществу. По мнению американского социолога Д.Белла, это превращение новой интеллектуальной технологии в ключевой инструмент анализа и теории принятия решений. В постиндустриальном обществе национальные информационные ресурсы, безусловно, являются его наибольшим источником богатства.

Реализация инновационной модели развития страны предусматривает необходимость роста и повышения эффективности регуляторной функции государства, которая касается науки, технологий и информации. Участие государства в организации научно-технологической и инновационной деятельности усиливается по мере роста научно-технического потенциала страны и повышения его роли и вклада в развитие общества. Среди приоритетов большинства передовых стран в той или иной форме можно встретить и разработку новых материалов, и исследование проблем энергетики, и сохранение природной среды, и разработку и внедрение новейших информационных технологий.

*Корпоративная модель-подход* является перспективным вариантом современной общественной доктрины. Она понимается как способ организации общественной жизни таким образом, что не только центр иницирует развитие, но и органы местной власти, органы местного самоуправления, общественные организации, хозяйственные субъекты, непосредственно территориальные общины, население активно привлекается к общественной жизни. Такой подход основан на принципах совместного владения и распоряжения корпоративной собственностью, реального местного самоуправления, договорных отношений между центральной и местной властью, возрождения духовности и культуры, делегирования центром на места прав распоряжения ресурсами.

*Социальный подход* исходит из того, что не политика и экономика являются главной целью развития общества и условием поддержки его равновесия, а постоянное повышение качества жизни его членов, непрерывное усовершенствование способа их жизни. Исходя из этого, развитые страны пришли к построению социальных государств, формированию социально-ориентированных рынков, к социальному партнерству.

При рассмотрении отмеченных моделей-подходов в сочетании с системным, ситуационным и качественным подходами фактически речь идет о новой методологической парадигме современного общественного управления, которая сосредотачивает общественную деятельность на инновационных процессах и технологиях развития и отодвигает на второй план исторически-формационную парадигму. Реализация отмеченных подходов в общественной практике, в первую очередь, проявляется в коммуникационной и управленческой деятельности разностатутных и разноуровневых субъектов общественного управления, среди которых наиболее существенную роль играют субъекты политического управления государством, субъекты государственного управления и субъекты гражданского общества.

Актуальность отмеченных подходов к развитию украинского общества признает современное руководство государства. В частности, Президент Украины В. А. Ющенко указал на необходимость быстрого переустройства архитектуры общественных отношений и механизмов взаимодействия различных общественных групп, в том числе и власти, которой положено изменить свои функции и качества. Ценностью, вокруг которой следует консолидироваться, является простая и прагматическая идея построения цивилизованного богатого общества на основах новых демократических форм социальной кооперации в государстве [4, 10].

## ЛИТЕРАТУРА

1. **Бевзенко Л.Д.**, Социальная самоорганизация. Синергетическая парадигма: возможности социальных интерпретаций. – К.: Ин-т социологии НАН Украины, 2002. - 437 с.

2. **Белл Д.**, Социальные рамки информационного общества //Новая технократическая волна на Западе. Под ред. П.С.Гуревича. М.: Прогресс, 1986. - С. 330.

3. Державне управління: Словн.-довід. /Укладачі: В.Д.Бакуменко (кер. творчого кол.), Д.О.Безносенко, С.М.Вазар та ін.; За заг. ред.. В.М.Князева, В.Д.Бакуменка. – К.: Вид-во УАДУ, 2002. - 228 с.

4. 10 кроків назустріч людям: Програма кандидата на пост Президента України **Ющенко В.А.**, 9 липня 2004. <http://www.yuschenko.com.ua/>

5. Методологія державного управління: Словник-довідник / Уклад.: В.Д.Бакуменко (кер. автор. кол), Д.О.Безносенко, С.В.Бутівченко та ін. – За заг. ред. В.І.Лугового, В.М.Князева, В.Д.Бакуменка. – К.: Вид-во НАДУ, 2004. - 196 с.

6. **Михненко А.М., Бакуменко В.Д., Борисевич С.О.**, Трансформація українського суспільства: перехід до нової моделі розвитку. - Вісник Нац. академії держ. управл. при Президентіві України. - 2006. - № 3. - С. 288 – 294.

7. Основы социального управления / [http://metal.antax.ru/library/policy/osnov\\_2.htm](http://metal.antax.ru/library/policy/osnov_2.htm)

8. Управління суспільним розвитком: Словник-довідник / За заг. ред. **А.М.Михненка, В.Д.Бакуменка**; Уклад.: В.Д.Бакуменко, С.О.Борисевич, О.А.Бутрін та ін. — К.: Вид-но НАДУ, 2006. - 248 с.

9. **Щёкин Г.В.**, Управління суспільним розвитком: Монографія. - К.: МАУП, 2005. - 184 с. Ющенко В.А.Тезиси о будущем // "[Зеркало Недели](#)", 9 февраля 2002.

**VALERI BAKUMENKO**

*Doctor of Public Administration, Professor,  
Pro-rector for Research of Academy  
for Municipal Administration  
Kiev, Ukraine*

**MODERN MODELS-APPROACHES  
TO SOCIAL DEVELOPMENT MANAGEMENT**

In the present article some modern models-approaches to social development management have been pointed out, from among are synergic and global that comprise value, ecological, consensus and integrated approaches, informative and innovative, corporative and social models. Their application for management processes are accompanied by means of systematic and situational approaches as well as quality management.

## ՈՒՐԲԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
հանրային կառավարման ամբիոնի հայցորդ*

### ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոցիալ-տնտեսական կյանքի յուրաքանչյուր ոլորտի իրավական հիմքերն օժտված են որոշակի առանձնահատկություններով, ինչը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ պետության ներքին և արտաքին քաղաքականությամբ, տնտեսության զարգացվածությամբ, ժողովրդավարության ավանդույթներով և այլն:

Պետության քաղաքականության իրավական հիմքերն ամրագրված են ինչպես սահմանադրությամբ, այնպես էլ օրենքներով ու ենթաօրենսդրական ակտերով: Տվյալ դեպքում խոսքը ոչ այնքան պետական քաղաքականության, որքան դրա իրականացման, պետական կամ հանրային կառավարման իրավական կարգավորման մասին է, որի հիմունքներն ամրագրվում են սահմանադրությամբ, իսկ դրանցից բխող մյուս հարաբերությունները՝ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով [1, էջ 102]:

Սահմանված կարգով ու չափով հարկեր, տուրքեր մուծելը և պարտադիր այլ վճարումներ կատարելը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (փոփոխություններով) ամրագրված պարտականություններից մեկը (45-րդ հոդված): Սույն հոդվածում մենք նպատակահարմար չենք գտնում անդրադառնալ հարկային հարաբերությունների իրավական հիմքերի համակարգին՝ առավել ևս դրանց թվարկմանն ու շարադրանքին, դրանցով ամրագրված հիմնարար սկզբունքներին ու դրույթներին, քանզի դրանք գիտության այլ ճյուղի խնդիրներ են և ուղղակիորեն չեն առնչվում մեր կողմից հետազոտվող թեմայի հետ: Նպատակահարմար ենք գտնում շեշտադրում անել հարկային ռազմավարության և հարկային քաղաքականության կառավարման կազմակերպական կառուցվածքի ձևավորման գործընթացում, հատկապես՝ գաղափարական ու իրավական գործոնների տնտեսագիտական հատկանիշների դերի բացահայտման վրա:

Նույն կերպ գաղափարական գործոններին անդրադառնալիս, նպատակահարմար չենք գտնում հանգամանորեն հետազոտելու ընդհանրապես հանրային քաղաքականության մշակման տրամաբանությանը՝ ինչպես բովանդակային, այնպես էլ կառուցվածքային առումով: Նշենք, որ միանգամայն համամիտ ենք հիշյալ տրամաբանության կա-

ռուցվածքի վերաբերյալ տեսական գրականությունում արտահայտված մոտեցումներին և այն համարում ենք կարևոր հարցադրում [2]:

Կարծում ենք, որ առավել շահեկան կլինի, եթե փորձենք հետազոտելու գաղափարական գործոնների ներազդեցությունը հարկային քաղաքականության վրա: Հիշյալ գործոնների ուսումնասիրությունը բերում է այն միանշանակ համոզմանը, որ դրանց գերակշիռ մասը հաճախ թելադրված է լինում սոսկ, այսպես կոչված, խմբային շահերով, իսկ դրանց իրավական ամրագրումն անհարկի հակասություն է առաջացնում հանրային և խմբային շահերի միջև:

Այս երկու գործոնի միասնական հետազոտությունն արդարացի է և թելադրված է այն հանգամանքով, որ հարկային քաղաքականության նկատմամբ ձևավորված հոգեբանական մոտեցումները, որպես կանոն, այս կամ այն կերպ իրենց արտացոլում են ստանում երկրի օրենսդրական ակտերում: Տվյալ դեպքում գիտագործնական նշանակություն ունեն ոչ միայն դրանցում ամրագրված դրույթները, դրանց ձևավորման նախադրյալներն ու զարգացման միտումները, այլև հիմնադրույթների ամրագրման եղանակներն ու սկզբունքները:

Այսպես, Սահմանադրության (փոփոխություններով) 45-րդ հոդվածում ամրագրված է, որ հարկերի հավաքման կարգն ու դրանց չափը կարող է սահմանվել բացառապես օրենքով: Այս դրույթից բնավ չի բխում, որ Սահմանադրությամբ պարագապես նախապատվությունը տրվում է առավել մեծ ուժ ունեցող իրավական ակտին: Յուրաքանչյուր դեպքում պետության գործադիր իշխանության մարմինները, օգտվելով օրենսդրական նախաձեռնության իրավունքից, պետք է Ազգային ժողովին ներկայացնեն հարկային օրենսդրությանն առնչվող օրենքների նախագծեր և փորձեն խորհրդարանում հիմնավորել իրենց մոտեցումները:

Ի դեպ, հիշյալ մոտեցումն իր ամրագրումն է ստացել նաև 1995թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությամբ (46-րդ հոդված), սակայն ընդհանուր գաղափարական մթնոլորտը չի նպաստել այդ մոտեցումն ամբողջությամբ իրագործելուն: Առկա են եղել նաև օբյեկտիվ բնույթի մի շարք գործոններ, որոնք իրենց զգացնել են տալիս նաև ներկայումս:

Այսպես, գաղտնիք չէ, որ օրենսդրական գործընթացները, ի տարբերություն գործադիր իշխանության կողմից իրականացվող իրավաստեղծ գործունեության, ժամանակատար են և միշտ չէ, որ կարող են օպերատիվորեն արձագանքել տնտեսության բնագավառում ծագող հիմնախնդիրների արագ ու արդյունավետ լուծմանը: Բացի այդ, քննարկման ներկայացված նախագծերը կարող են այն աստիճան փոփոխվել, որ ակնկալվող արդյունքը գրեթե հասնում է նվազագույնի, իսկ երբեմն էլ այն սոսկ առիթ է դառնում ճիշտ հակառակ քաղաքականություն իրականացնելու համար կոչված օրենսդրական ակտ ընդունելուն: Տվյալ դեպքում պատգամավորները, հաճախ յուրովի մեկնաբանելով գործադիր իշխանության ծրագրերը, փորձում են դրանք չե-

զոքացնել ոչ միայն քվերակությունների, այլև բոլորովին այլ դրույթներ նախատեսող օրենսդրական ակտեր քննարկման ներկայացնելով:

Ինչևէ, վերոհիշյալը խնդրի միայն մի կողմն է, սակայն պակաս կարևոր չէ նաև այն հարցը, թե որքանով է իրեն արդարացնում հարկային քաղաքականության մշակման և իրականացման ոլորտում երկրի գործադիր իշխանությանն այդպիսի սահմանափակ դերակատարում վերապահելը, որքանով է դա գործնականում նպաստում տնտեսության զարգացմանը ու ձեռնարկատիրության շահերի պաշտպանությանը: Ի դեպ, նկատենք, որ այս հարցադրումները հրատապ են նաև ԱՊՀ անդամ-պետությունների պարագայում, քանի որ դրանց մեծամասնությունում նույնպես սահմանադրական ամրագրում է ստացել հարկերը վճարելու կարգն ու չափերը միայն օրենքով սահմանելու վերաբերյալ դրույթը [3, c. 5-11]: Մասնավորապես, հիշյալ դրույթն իր ամրագրումն է ստացել Ադրբեջանի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Ուկրաինայի, Ուզբեկստանի Հանրապետության, Թուրքմենստանի օրենսդրությամբ: Սակայն գրեթե այդ երկրների օրենսդրությամբ, միաժամանակ սահմանված են դրույթներ, որոնք վերը նշված հարցերի առնչությամբ որոշակի լիազորություններ են վերապահում նաև կառավարություններին:

Ինչպես արդեն նշեցինք, հարկերը մուծելու կարգն ու չափը բացառապես օրենքով սահմանելու վերաբերյալ դրույթն իր ամրագրումն էր ստացել դեռևս 1995թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությունում, սակայն վերը հիշատակված պատճառներով այն բավարար հետևողականությամբ չէր իրագործվում: Դրությունը մասամբ փոխվեց 2002թ. ապրիլի 3-ին «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ: Նկատի ունենք այն, որ այդ օրենքի 9-րդ հոդվածով հստակ ամրագրվեցին բոլոր այն հարաբերությունները, որոնք կարող են կարգավորվել միայն օրենքով:

Եթե հիշյալ հարաբերությունները բանավեճի տեղիք չեն տալիս, ապա նույնը չի կարելի ասել նույն հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի առնչությամբ. «Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը»: Նախ, նկատենք, որ Սահմանադրությամբ խոսք է գնում միայն հարկեր մուծելու չափին և կարգին: Այսպիսով, Սահմանադրությունը չի պարտավորեցնում, որպեսզի նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմաններն ու կարգը սահմանվի միայն օրենքով:

Կարծում ենք, որ գործադիր իշխանությանը կարելի էր վերապահել ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու ու պաշտպանելու պայմանները և կարգը ենթաօրենսդրական ակտերով կանոնակարգելու լիազորություն, ինչը գործնականում կնպաստեր տնտեսության ոլորտում ձեռնարկատերերի իրավունքների պաշտպանվածությանը: Հակառակ դեպքում, ստացվում է, որ վերջին-



ներս չեն կարող որոշակի հարցադրումներով արդյունավետորեն իրականացնել իրենց իրավունքները և դրանց պաշտպանությունը, քանի դեռ դրանց առնչությամբ չեն ընդունվել հարաբերությունները հստակ կարգավորող օրենքներ:

Բնականաբար, զուտ գաղափարական տեսանկյունից այդ հարցում ևս վերապահում անելը պայմանավորված է այն միտումով, որ գործադիր իշխանության մարմինները չփորձեն իրավունքների իրականացման կարգի ու պաշտպանության եղանակների պատրվակով սահմանափակել ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքները: Սակայն չպետք է մոռանալ, որ այդպիսիք չեն կարող իրավական ուժ ունենալ, քանզի, ինչպես արդեն նշվեց, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով միանշանակ ամրագրված է, որ իրավունքների սահմանափակման վերաբերյալ կարող են ընդունվել միայն օրենքներ:

Այսպիսով, բացառապես օրենքով կարգավորվող հարցերի շրջանակն ընտրելիս, մեր կարծիքով, ցուցաբերվել է անհարկի պարզունակ մոտեցում, ինչի արդյունքում այդ հիրավի ժողովրդավարական ինստիտուտն որոշ իրավիճակում հանգեցնում է ի սկզբանե նախանշված խնդրի, այն է՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանվածության, լուծման խոչընդոտների: Այս առումով, չենք կարող համամիտ լինել այն գիտնականների հետ, որոնք հարկային հարաբերությունները բացառապես օրենքով կանոնակարգելն ամբողջությամբ համարում են միանշանակ դրական ինստիտուտ [4, էջ 208-209]:

Չպետք է անտեսել նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկային քաղաքականության ոլորտում իրավաստեղծ գործունեության որոշակի ինքնուրույնության հարցը: Վերջին հաշվով, հարկ է նկատել, որ օրենքներով հարկերի չափը սահմանելը բնավ չի ենթադրում, որ յուրաքանչյուր հարկատեսակի գծով որոշակի չափին առնչվող բոլոր հարաբերությունները կարող են կարգավորվել միայն օրենքով: Մասնավորապես, ինչպես արդեն նշվել է, «Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի» 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների մի մասը պետք է գոյանա տեղական հարկերի հավաքագրման հաշվին, որոնց չափերը տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն սահմանել *համապատասխան օրենքի շրջանակներում* (ընդգծումն իմն է)»: Ասվածից բխում է, որ տեղական հարկերի պարագայում օրենսդիր մարմինը, թերևս պարտավոր է տարբերակված մոտեցում ցուցաբերել և սահմանել միայն դրանց առավելագույն ու նվազագույն չափերը:

Եթե փորձելու լինենք համակարգված ներկայացնել հարկային ռազմավարության և հարկային քաղաքականության կառավարման ինստիտուտի ձևավորման իրավական հիմքերի առանձնահատկությունները, ապա այն կունենա հետևյալ տեսքը՝

1) հարկային իրավական կարգավորմանը բացառապես բնորոշ է բռնա (ինպերատիվ)-հրամայական մեթոդը, որի դեպքում ոչ թե կողմերն են փոխադարձ համաձայնությամբ որոշում իրենց իրավունքներն ու պարտականությունները (օրինակ պայմանագիր կնքելու եղանակով), այլ պետության իրավասու մարմինները սահմանում են հարկերն ու դրանց գանձման հետ առնչվող հարաբերությունները,

2) հարկային օրենսդրությունը, այլ խնդիրների հետ մեկտեղ, հիմնականում նպատակաուղղված է հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու երևույթի կանխմանը: Ինչպես ցույց են տալիս մի շարք երկրներում իրավասու կառույցների կողմից կատարված վերլուծությունների արդյունքները, հարկային պարտավորություններից խուսափելու երևույթի հետևանքով ազգային տնտեսություններին պատճառվում է էական վնաս, իսկ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները վեր են ածվել ազգային հիմնահարցի: Այսպես՝ միայն ԱՄՆ-ում չվճարված հարկերը կազմում են բյուջետային եկամուտների 15 տոկոսը [5, c.3]: Ռուսաստանի Դաշնությունում տարեկան արձանագրվում է շուրջ 400 հազար հարկային հանցագործություն, իսկ չվճարված հարկերը կազմում են շուրջ 44 մլրդ ռուբլի [6]:

Հիշյալ ուղղվածությունը բնորոշ է նաև Հայաստանի հարկային օրենսդրությանը, սակայն այս դեպքում այն ևս օժտված է ինքնատիպ հատկանիշներով: Մասնավորապես, մեր երկրի հայրենական օրենսդրությունում շեշտադրում է արված ոչ այնքան քրեական, որքան վարչական օրենսդրության վրա: Բնորոշ է այն, որ հարկային իրավախախտումների գերակշիռ մասը հանդիսանում են վարչական իրավախախտումներ:

Վարչական իրավախախտումներին ակնհայտ մեծ դեր տալը, թերևս, բացատրվում է մի շարք հանգամանքներով: Նախ, հայրենական քրեական օրենսդրությամբ, ի տարբերություն արևմտյան եվրոպայի երկրների, իրավաբանական անձինք չեն համարվում քրեական պատասխանատվության ենթակա սուբյեկտներ. վերջիններս կարող են ենթարկվել միայն վարչական պատասխանատվության:

Բացի այդ, վարչական պատասխանատվության ինստիտուտը հանդիսանում է հարկային պարտավորությունների կատարումն ապահովող առավել օպերատիվ ու գործնական եղանակ.

3) հաջորդ առանձնահատկությունն առնչվում է տնտեսական գործունեությանը պետության միջամտության սահմաններին ու մեթոդներին: Տնտեսության ազատականացման պայմաններում բնականաբար էապես նվազում են պետության միջամտության իրական հնարավորությունները, սակայն առանձին բնագավառներում այդ սահմանափակումները էական ներազդեցություն չեն ունենում, փոխվում են միայն պետական միջամտության եղանակներն ու մեթոդները: Այդպիսի բնագավառներից են հանդիսանում, հատկապես, բանկային ու հարկային ստուգումները: Սակայն, եթե առաջին դեպքում վերահսկողություն

իրականացնող մարմինները, որպես կանոն օժտված են երկակի կարգավիճակով, մասնավորապես, կենտրոնական բանկերն ունեն նաև իրավաբանական անձի կարգավիճակ, ապա հարկային մարմինները պետական մարմիններ են և զրկված են որևէ եղանակով առևտրային գործունեությամբ զբաղվելու իրավունքից: Այդպիսի կարգավիճակ ունի նաև ՀՀ կենտրոնական բանկը: Այսպես, համաձայն 1996թ. հունիսի 30-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը պետական գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է»:

4) հարկային մարմինների բոլոր իրավական ակտերն ենթակա են վիճարկման ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով: Այս հարցում միասնական մոտեցումներ դեռևս չեն ձևավորվել, ուստի առավել նպատակահարմար ենք գտնում ներկայացնելու՝ հիմնախնդրի իրավական կարգավորմանը նվիրված մեր երկրի առանձնահատկությունները, այդ ոլորտում առկա թերություններն և դրանց վերացման հնարավոր տարբերակները:

Նախ նշենք, որ Սահմանադրության (փոփոխություններով) 103-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն օրենքների, Ազգային ժողովի որոշումների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների սահմանադրականությունն որոշում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը: Տվյալ դեպքում, բնականաբար, խոսքը վերաբերում է նաև հարկային նորմեր պարունակող վերը նշված տեսակի իրավական ակտերին:

Մյուս բոլոր իրավական ակտերի օրինականության հարցը կարող է վիճարկման առարկա դառնալ վարչական կարգով կամ ընդհանուր իրավասության դատարաններում: Գործնականում հիմնականում վիճարկվում են ստուգման արդյունքներով կազմված իրավական ակտերն ու այդ ոլորտում իրականացված գործողություններն ու դրսևորած անգործությունը:

Կարծում ենք, խիստ խոցելի է հիշյալ իրավական ակտերի, հատկապես հարկային իրավախախտումների համար վարչական տույժ նշանակելու մասին որոշումների դատական քննության ընթացակարգը: Այսպես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն հիշյալ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ դիմում քննելիս, դատարանը, այլևայլ հանգամանքներից զատ, ստուգում է նաև. «պահպանվել է, արդյոք, անձին վարչական պատասխանատվության ենթարկելու սահմանված կարգը»: Առաջին հայացքից թվում է, թե օրենսդրությամբ սահմանված է միանգամայն իրավաչափ դրույթ, որը պարտավորեցնում է դատարանին ստուգելու նաև վարչական պատասխանատվության ենթարկելու կարգի պահպանումը: Սակայն

խնդիրն այն է, որ «կարգ» եզրույթը բավականին ընդարձակ է և ընդգրկում է ինչպես էական, այնպես էլ ոչ էական դրույթներ, ինչի արդյունքում ստացվում է, որ անգամ սոսկ տեխնիկական բնույթի խախտումները (օրինակ՝ ստուգող անդամներից մեկի ստորագրության բացակայություն և այլն) գործնականում հիմք են հանդիսանում միանգամայն հիմնավորված ստուգման ակտերի հիման վրա կայացված որոշումները վերացնելու համար:

5) հարկային քաղաքականության իրավական հիմքերի հաջորդ առանձնահատկությունն այն է, որ դրանց աղբյուրները բավարար չափով համակարգված չեն: Բոլոր այն երկրներում անգամ, որտեղ գործում են հարկային օրենսգրքեր, միևնույն է, զուգահեռ գործում են բազմաթիվ իրավական ակտեր, որոնք այս կամ այն չափով առնչվում են հարկային հարաբերությունների կարգավորմանը:

Ցավոք, համակարգվածության բացակայությունն առավել մեծ չափով է նկատելի մեր հարկային օրենսդրության պարագայում: Յուրաքանչյուր հարկի տեսակի առնչությամբ գործում է ինքնուրույն օրենսդրական ակտ և ենթաօրենսդրական ակտերի մի ողջ համակարգ:

Իրավական հիմքերի առնչությամբ անհրաժեշտ ենք համարում նկատել, որ հարցերի մի որոշ շրջանակ իրենց ամրագրումն են ստացել միջազգային պայմանագրերում և համաձայնագրերում: Ընդ որում, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը համեմատաբար կարճ ժամանակահատվածում կնքել է անհրաժեշտ երկկողմանի պայմանագրեր շահագրգիռ պետությունների հետ [7] և միացել է մի շարք բազմակողմ միջազգային պայմանագրերի, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը երկկողմանի համաձայնագրեր է կնքել Բուլղարիայի Հանրապետության, Ուկրաինայի, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Ռումինիայի, Ռուսաստանի Դաշնության, Թուրքմենստանի Հանրապետության, Վրաստանի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության և այլ պետությունների կառավարությունների հետ:

Ինչ վերաբերում է գաղափարական գործոններին, ապա դրանք առնչվում են իրավաստեղծ գործունեության հետ և կանխորոշում են վերջինիս բովանդակությունը: Կոնկրետ հայրենական հարկային քաղաքականության իրավական հիմքերի վերլուծությունը, մասնավորապես ցույց է տալիս, որ դրանց ձևավորման գործընթացում վճռորոշ նշանակություն ունեն հետևյալ սոցիալ-հոգեբանական տարրերը:

Նախ՝ հարկային քաղաքականության վրա էապես ազդում են սոցիալական հիմնախնդիրների և, հատկապես, սոցիալական անհավասարության իրավիճակի վերաբերյալ հասարակության պատկերացումները: Պետական քաղաքականության մեջ հնարավոր չէ շրջանցել այս հանգամանքը, ուստի փորձ է արվում հիմնականում մշակելու այնպիսի հարկային համակարգ, որը նպաստում է հասարակական բարիքների նպատակասլաց բաշխման և վերաբաշխման համակարգի ներդր-

մանր: Տվյալ դեպքում, հարկային քաղաքականությունը միտված է սոցիալական բևեռացման երևույթի ազդեցության թուլացմանը:

Ընդհանուր հոգեբանությունն այն է, որ հասարակության գերակշիռ մասը պատրաստ է խստորեն հետևելու հարկային օրենսդրության կանոններին միայն այն դեպքում, երբ դրանք գործնականում պարտադիր են դառնում բոլորի համար, երբ այդ կանոններին հետևելը չի դնում անհավասար մրցակցային իրավիճակի մեջ [8, p.187]: Այսպիսով, շատ հաճախ հարկային օրենսդրության դրույթները խախտվում են հոգեբանական այն միտումով, որն ուղղված է արհեստականորեն ապահովելու մրցակցության հավասար պայմանները:

Հաշվի առնելով վերը նշված գործոնը՝ հարկային քաղաքականությունը մշակելիս, պետք է ներդրվեն այնպիսի լուծումներ, որոնք պետության միջամտության արդյունքում կոչված կլինեն ապահովելու շուկայական հարաբերություններին հարիր անհրաժեշտ մրցակցային պայմաններ:

Ցանկացած երկրում, իսկ շուկայական հարաբերություններին միայն վերջին շրջանում անցած երկրներում՝ հատկապես, առկա են գիտության և մշակույթի մի շարք ոլորտներ, որոնց զարգացման հարցում հասարակությունը չափազանց շահագրգիռ է և ձգտում է այդ ոլորտներում տեսնել պետության նկատելի աջակցություն: Բնականաբար, սոցիալական այդ ոլորտների որոշ տարրեր արդեն իսկ ներառվել են շուկայական հարաբերությունների մեջ և ամբողջությամբ գործում են ինքնուրույն տնտեսավարության կանոններով, սակայն դրանով հիմնախնդիրը դեռևս ամբողջությամբ լուծում չի ստացել: Բացի այդ, կան գիտության և մշակույթի այնպիսի տարրեր, որոնք որևէ կերպ չեն կարող գործել շուկայական կանոններով, քանի որ զուտ տնտեսական առումով ակնհայտ անշահավետ են և ներդրողների շրջանում առանձին հետաքրքրություն չեն առանձնացնում:

Այս առումով, պետությունը դարձյալ պետք է մշակի հարկային քաղաքականության այնպիսի տարրեր, որոնք համահունչ կլինեն գիտության հիմնարար ճյուղերի և մշակույթի առանձին ոլորտների զարգացմանը կոչված խնդիրների լուծմանը:

Նույնաբնույթ սոցիալական նշանակություն ունի նաև բնապահպանության, շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդրի վերաբերյալ սոցիալ-հոգեբանական վերաբերմունքը: Պատահական չէ, որ, ինչպես արդեն նշվել է վերևում, բազմաթիվ երկրներ հիշյալ գործոնը հաշվի առնելով, ուղղակիորեն սահմանել են, այսպես կոչված էկոլոգիական հարկեր: Բնապահպանական հիմնախնդիրների նկատմամբ հասարակական կարծիքը գրեթե բոլոր երկրներում կանխորոշում է համապատասխան դրույթների առկայությունը հարկային օրենսդրությունում:

Ամփոփելով հարկային ռազմավարության և հարկային քաղաքականության կառավարման ինստիտուտի ձևավորման գաղափարական և իրավական գործոնների համակարգի, դրանց դերի ու զարգացման

միտումների վերաբերյալ հարցադրումները՝ անհրաժեշտ ենք համարում նկատել, որ դրանք մեր երկրի հարկային քաղաքականությունում դեռևս անհրաժեշտ համաչափությամբ հաշվի չեն առնվել: Եվ որքան, այդ գործոնները համահունչ են միմյանց, այնքան հարկային քաղաքականությունն առավել համարժեքորեն է արտացոլում հասարակության ու տնտեսության հիմնարար պահանջները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա.Շ. Հարությունյան, Յու.Ս. Սուվարյան**, Հանրային քաղաքականության վերլուծություն, Երևան, «Պետական ծառայություն» հրատ., 2005:

2. **William N.Dunn**, Policy Analysis: An introduction, Third Edition, Person Education, inc., Upper Saddle River, 2004.

3. **Бобоев М.Р., Мамбеталиев Н.Т., Тютюрюков Н.Н.**, Налоги и налогообложение в СНГ, Под ред. А.П. Починка, Л.П. Павловой, М.: Финансы и статистика, 2004г.

4. **Խաչատրյան Ա.Չ.**, «Հարկային իրավունք», Երևան, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2003:

5. **Кашубин Д.Ю.**, Налоговые преступления в уголовном праве России. Автореферат дисс. канд. юрид. наук. – М., 2002.

6. Краткая характеристика состояния преступности в России за 2000-2005гг. – М., ГИЦ МВД Российской Федерации.

7. «Հայաստանի հարկային համաձայնագրեր», Երևան, «Դար» հրատ., 2002թ.:

8. **Londero E.**, 1987. Benefits and Beneficiaries: An Introduction to Estimating Distributional Effects in Cost-Benefit Analysis. Inter-American Development Bank, Washington, DC. USA.

**RUBEN MIKAYELYAN**

*Applicant of the Chair of Public Administration  
of the Public Administration Academy of the  
Republic of Armenia*

## **THE WAYS OF THE TAX LEGAL POLICY BASIC CHANGES**

This article is dedicated to the ways of the basic changes in Armenian tax legal policy. The author, having researched the legal tax law, represented changes in the following way of system, which shows its more useable way. In the parts of the tax law the author tried to base partially on the facts, which give much more wide rights to the Armenian tax legal policy. As for the author the main strategic thing in the article is giving active leadership where the law acts are not so capable of living. At the same time taking into consideration the main role of law the author finds out, that it is possible to settle down the first steps such as the ways of taxes volumes, the tax advantages and etc. According to the governmental structures we have no rights to restrict the rights of as juridical so physical persons.

The author investigated the co-relations between the governmental law acts and international documents. The separate brunch of analyses has become the question related to the legal tax law policy. As for the author the rate of taxes are not fixed and according to the analyses they can be ruled by the laws. The author gives the following examples based on the European Charter Article 9 part 3.

The following conclusion are giving by the author:

1. tax law policy is based exclusively on imperative-ordered method;
2. tax legal policy with a lot of different questions is basically followed by the prevention to avoid the tax legal policy doing;
3. in liberalized economic conditions it is obvious that the political interference rises up;
4. all tax organ acts are liable to be challenged as in juridical so in non-judicial ways;
5. the next tax legal policy peculiarity is that the sources are not enough systematized.

In the article are analysed the further influences of the tax law and tax legal policy, which are based on the law policy.

To summarise tax strategical and tax legal policy system their rules and ways of usage in the life the author mentioned that they still have some points and factors to work on, which are not properly considered in our tax policy. And the most is the correspondence of these factors the best the tax policy expresses the social and economical demands.

**ՀՐԱՆՈՒՇ ՀԱՎՈՐՅԱՆ**

*ՀՀ Աժ գիտության, կրթության,  
մշակույթի և երիտասարդության հարցերի  
մշտական հանձնաժողովի նախագահ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր*

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐՈ**

Իրավական պետության կառուցումը և քաղաքացիական հասարակության ձևավորումը համարվում է տրանսֆորմացիայի ենթարկված հետխորհրդային երկրների հիմնական նպատակը: Այս իմաստով առաջնային է դառնում իրավական տեղեկատվության մատչելիության ու ազատ տնօրինման ապահովման համակարգի ստեղծման հարցը:

Պառլամենտարիզմի և ժողովրդավարության սկզբունքներից է բխում այն, որ պառլամենտի և հասարակության հետ կապերը լինեն ոչ միայն սերտ, այլև՝ համակարգված: Եվրախնտեզրման ճանապարհին Հայաստանի Հանրապետությունը, ստանձնելով որոշակի պարտավորություններ, աշխատում է ձևավորել և ամրապնդել քաղաքացիական հասարակություն ու տեղեկացված, ազատ հասարակություն:

Պառլամենտի հանրային կապերը հասարակության, ընտրողների հետ համեմատաբար ազատական դարձան վերջին շրջանում: Ընտրությունների միջոցով ժողովուրդն իր ներկայացուցիչներին պատվիրակելով պետական իշխանության իրացում՝ ապահովելով վերջիններիս մասնակցությունն օրենսդիր իշխանության իրականացմանը, միաժամանակ, պահանջ է առաջադրում հաշվետու լինելու, քաղաքացիներին լսելու, հասարակության մեջ տեղի ունեցող հիմնախնդիրները ժամանակին բացահայտելու և դրանց լուծումներ տալու համար: Պառլամենտի հանրային կապերը, այդ թվում հետադարձ կապերն ենթադրում են նաև քաղաքացիների լայն մասնակցություն քաղաքականության մշակմանը, իրականացմանը, ինչպես նաև իշխանության իրականացմանը, վերահսկողությանը:

Որքան կայացած է քաղաքական համակարգը, բաց և թափանցիկ է պառլամենտի գործունեությունը, այնքան ակտիվ են ներկայացուցիչները, իրատապ են նրանց բարձրացրած հարցերը, արդյունավետ են փոխադարձ կապերը:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում երաշխավորվում է «լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը, ինչպես նաև «տեղեկատվական, կրթական, մշակութա-



յին և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»: Իսկ հոդված 27.1-ում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով ունի իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և «ողջամիտ ժամկետում» պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Թե՛ Սահմանադրությամբ, թե՛ ՀՀ ԱԺ Կանոնակարգով և հատկապես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթներում ամրագրված են պետական իշխանության մարմինների և հանրության փոխադարձ կապի ապահովման կառուցակարգերն ու սկզբունքները:

Եական է նաև պատգամավորների կապը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ժողովրդի և պառլամենտի միջև կապի գոյությունը, դրա արդյունքները պայմանավորված են նրանով, թե ինչպես են ընթանում երկրում իրականացվող բարեփոխումները, ինչպես է հասարակությունը վերաբերում դրանց, ինչպիսի դժվարություններ կան այդ գործընթացում: Առանց նման կապի հնարավոր չէ լուրջ բարեփոխումներ իրականացնել և ցանկալի արդյունքներ ունենալ:

Հայ իրականության մեջ այս հիմնահարցը մանրակրկիտ ուսումնասիրված չէ՝ ո՛չ գործնական և ո՛չ էլ տեսական առումով: Խնդիրն այն է, որ վարչահրամայական մեթոդներով տասնամյակներ շարունակ դեկավարվող հասարակությունը, պետական կառավարման մարմինները, դեռևս սովորում են ժողովրդավարության այբուբենը, և պառլամենտը հանրային կապերի աշխուժացման, պառլամենտական ավանդույթների ստեղծման առումով նոր է սկսել բարեփոխել իր գործունեությունը: Քաղաքագիտական գրականության մեջ մշակվել են դասական մոդելներ՝ հանրային կապի համակարգային մեթոդի վերաբերյալ, կան նաև գիտնականներ, որոնք օգտագործում են «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» կապի գաղափարը:

ԱԺ-ի հանրային կապերի ակտիվությունը նախ և առաջ պայմանավորված է պառլամենտի լեգիտիմությամբ, նրա արդյունավետ գործունեությամբ, պետական մարմինների համակարգում ունեցած դերով: Պառլամենտն այն մարմինն է, որը մշտապես կապի մեջ է բնակչության հետ, ձևավորվում է նրա կողմից, հետևաբար, ընտրողների հետ նրա աշխատանքը պետք է լինի ամենօրյա, թափանցիկ, արդյունավետ, խնդիրների վերհանման ու դրանց լուծման նկատմամբ ունենա հետևողական վերաբերմունք: Ըստ այդմ, ներկայացուցչական ժողովրդավարության զարգացումներն առանձնահատուկ կարևորում են հասարակության քաղաքական կառուցակարգերի կատարելագործումն ու մարդկանց քաղաքական իրավունքների պաշտպանությունը [1, էջ 41-42]:

ՀՀ օրենսդրությունը բովանդակում է դրույթներ, որոնք վերաբերում են հանրային, հետադարձ կապերի ապահովմանը, դրանց ձևերին

ու մեթոդներին: Այսպես, հայտնի է, որ հանրաքվեի անցկացումը լավագույն ձև է ցանկացած որոշման օրինականացման, ժողովրդի կամքի հաշվառման համար: Սակայն դրա կազմակերպումը լուրջ և բարդ գործընթաց է, որը ոչ միշտ է հնարավոր կիրառել: Այդ առումով, այս խնդրին մեծապես օգնում են խորհրդարանական լուսմները, որոնց նախաձեռնության մենաշնորհը պատկանում է մշտական հանձնաժողովներին (Կանոնակարգի 32-րդ հոդված): Լուսմները հնարավորություն են տալիս ճշտելու հասարակության կարծիքը, կատարելու իրատեսական եզրահանգումներ: Աժ-ի յուրաքանչյուր հերթական նստաշրջանում յուրաքանչյուր հանձնաժողով առնվազն մեկ անգամ կազմակերպում է խորհրդարանական լուսմներ, որոնց հրապարակայնությունը, մասսայականությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ լուսմների անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ դրա կազմակերպման մասին տեղեկատվություն է տրամադրվում զանգվածային լրատվության միջոցներին: Խորհրդարանական լուսմների ինստիտուտն օգնում է քաղաքացիական հասարակության կայացմանը, դրա ձևավորմանը, հնարավորություն է տալիս քննարկել հրատապ խնդիրներ և ժողովրդավարական ավանդույթ ձևավորել: Պակաս կարևոր չէ նաև հասարակական երկխոսության ապահովման, երկրում քաղաքական լարվածության թուլացման հանգամանքը, քանի որ ընդդիմության այն շերտերը, որոնք պառլամենտում ներկայացված չեն, հնարավորություն են ունենում իրենց տեսակետները, առաջարկությունները լուսմների ընթացքում քննարկել և հիմնավորել դիրքորոշումները: Գաղափարների ազատ մրցակցությունը հնարավորություն է տալիս ստեղծագործաբար մոտենալ հարցերին, հաշվի առնել կուտակված փորձը, նախանշել, ծրագրավորել ապագան՝ հաշվի առնելով անցյալը: Ինչպես նշում է Ս. Ուայլդմանը, «Կալիֆորնիայում կարևոր նշանակություն ունեցող օրենքներ ընդունելու համար անհրաժեշտ է լայն հասարակական աջակցություն: Այդ աջակցությունը ներառում է հանձնաժողովների հանրային լուսմների ժամանակ վկայություններ տալը, ՁԼՄ-ներում համանախանգային լուսաբանման ապահովումը և այլ ընտրատարածքներ ներկայացնող օրենսդիրների վրա լոբիստական միջոցներով ճնշում գործադրելը» [2, էջ 101]:

Խորհրդարանական լուսմների պրակտիկան հարկ է մեզանում առավել հաճախակի դարձնել, և հիմնարար օրենքների ընդունումից առաջ պետք է այդ փաստաթղթերն անցկացնել հասարակական լայն լսարանի «քուրայի» միջով: Դա կօգնի հստակեցնելու օրենքի նախագծի հայեցակարգը, օրենքի ընդունման նպատակը, խնդիրները: Սակայն խորհրդարանական լուսմների կազմակերպման ընթացքում մեծ է սուբյեկտիվ գործոնի դերը, քանզի հանձնաժողովը, լինելով լուսմների կազմակերպիչը, կարող է հրավիրել միմիայն նրանց, ում ցանկանում է և ընդհակառակը՝ չհրավիրել ոչ ցանկալի մարդկանց կամ հակառակ տեսակետ ունեցողներին: Յետևաբար, լուսմների ժամանակ ներկայա-

ցուցչությունն այդ դեպքում լիովին չի ապահովվում և հարկ կա ձեռնարկել օբյեկտիվությունն ապահովող միջոցներ:

Բավական կարևոր է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը ժողովրդավարացման գործընթացում և պետական մարմինների ու բնակչության փոխադարձ կապի ամրապնդման համար: Ինտերնետի (համացանցի) և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը զգալի չափով նպաստեցին պաշտոնական գրագրությունների, դրանց շրջանառության կրճատմանը: Ինտերնետը կրճատում է նաև բյուրոկրատական քաջբշուկը, մարդկանց համար իրավաբանական փաստաթղթերը դառնում են մատչելի: Այսպիսով, նման փաստաթղթերին ձեռնահաս լինելը (օրինակ՝ ինտերնետում զետեղված պաշտոնական տեղեկատվությանը) խոսում է իրավունքի մատչելիության մասին [3, էջ 28-31]: Այս մոտեցումը տարածվել է մի շարք զարգացած երկրներում, օրինակ՝ Ֆրանսիայում, և բացի պառլամենտի ընդունած փաստաթղթերից բնակչությանը տեղեկացվում է նաև կառավարության գործունեության մասին: Էլեկտրոնային ընթացակարգերը և տեղեկատվության տարածումը Ֆրանսիայում այս կամ այն չափով կապված են «էլեկտրոնային պետության» կազմակերպման ևս մեկ ուղղության հետ. դա՝ վարչական ինտերնետի զարգացումն է (ինտերնետ-տեխնոլոգիաների օգտագործումը), որի սկիզբը դրվել է 1996-ին: Նոր տեխնոլոգիաները թույլ են տալիս խոսել տեղեկատվական իշխանության մասին՝ հնարավորություն է ստեղծվում տեղեկատվության միջոցով ներազդել հասարակության վրա: Տեղեկատվությունը վերածվում է տնտեսական գործակալների միջև մրցակցության մի տարրի և առաջ է գալիս տեղեկատվական մրցակցությունը [4, էջ 2-11]: Եվրոպական քաղաքականությունը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում իր արտահայտությունն է գտել «էլեկտրոնային Եվրոպա» ծրագրում [5]:

Ի տարբերություն շատ երկրների՝ Հայաստանի Հանրապետությունը չունի համացանցային հիմնախնդիրները կարգավորող օրենսդրություն, որը կարող է և պետք է ապահովի էլեկտրոնային վստահության, տեղեկատվության անվտանգության, տեղեկատվական հասարակության մեջ հեղինակային և հարակից իրավունքների պահպանման, դրա ազատ օգտագործման մասին հարցերի լուծումը: Համացանցային կայքը և էլեկտրոնային ճանապարհով տեղեկատվություն ստանալու իրավունքը նոր երևույթներ են, որոնք, սակայն, մեր երկրի բնակչության մեծ մասին հասանելի չեն: Համացանցային կապը հանրության և պետական կառավարման մարմինների միջև կդառնա ամենաիզոր կապը, եթե այն մատչելի դառնա յուրաքանչյուր ընտրողի: Չնայած ԱԺ-ում մշակվել են տեղեկատվական տեխնոլոգիաների արդիականացման քաղաքականությունը և էլեկտրոնային հաղորդակցությունների ռազմավարական ծրագիրը, որի արդյունքում վերաշահագործվել է [www.parliament.am](http://www.parliament.am) համացանցային կայքը, այնուամենայնիվ, ո՛չ պետական պաշտոնյաները և ո՛չ էլ հասարակության անդամները տեղեկատվություն տալու և ստանալու գործընթացում ներդաշնակության

չեն հասել: Պառլամենտական տեղեկատու կայքը թույլ է տալիս ապահովել պառլամենտի ներկայացուցիչների գործունեության թափանցիկությունը, պետական իշխանության մարմինների, միջազգային խորհրդարանական կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների օրենսդիր մարմինների և քաղաքացիների միջև տեղեկատվական արդյունավետ փոխհարաբերությունները: Այս էջում տեղադրվում են ոչ միայն արդեն ընդունված, այլև շրջանառության մեջ դրված բոլոր որոշումների և օրինագծերի տեքստերը՝ նախագծային տեսքից մինչև ԱԺ նիստում 3-րդ ընթերցմամբ ընդունվելու տարբերակներով, ինչը նպաստում է պառլամենտ-հասարակություն հարաբերությունների ակտիվացմանը: Այսինքն՝ հնարավորություն է ընձեռվում քաղաքական իրադարձություններին և օրինաստեղծ գործունեությանը «լայն հանդիսատեսի» մուտքի ապահովման համար: Ինչպես նշում է Թ. Ջեֆերսոնը, «Իրազեկ քաղաքացիները նրանք են, ովքեր քաջ տեղյակ են ազգային և միջազգային իրադարձություններին» [6, էջ 10]:

ԱԺ-ի հանրային կապերի «ողնաշարը» ընտրողների հետ հանդիպումներն են: Սա առավել ցանկալի, սակայն դժվար իրականանալի գործընթաց է: ԱԺ-ի խմբակցությունների հանդիպումները բնակչության հետ, առավելապես կրում են իրավիճակային բնույթ, միտված են միայն նախընտրական քարոզչությանը և ակտիվանում են այդ շրջանում, իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների տարածքների մեծությունը, ընտրողների թվի ավելացումը սկզբունքորեն հնարավորություն չեն տալիս հաճախակի հանդիպումներ կազմակերպել: Այս խնդրին դրական լիցք կարող են հաղորդել տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքապետերն ու ավագանիները, որոնք, ամենօրյա կապի մեջ լինելով բնակչության հետ, կարող են վերջիններիս կողմից վեր հանվող հարցերը խմբավորել և ներկայացնել պատգամավորին: Կանոնակարգի 5-րդ հոդվածի համաձայն՝ պառլամենտում և ընտրատարածքներում կազմակերպվում են ընդունելության օրեր: Իրենց պատգամավորների հետ հանդիպումների ընթացքում ևս բնակչությունը բարձրացնում է հարցեր, անում առաջարկությունները: Այս աշխատանքներն էականորեն կբարելավվեն, եթե տարածքներում ստեղծվեն պատգամավորների գրասենյակներ: Արևմտյան երկրներում բնակչության հետ պատգամավորների կապը հիմնականում իրականացվում է գրասենյակների միջոցով, և բնակչության այն դժգոհությունը, որ չեն կարող հանդիպել իրենց ընտրյալին, փոխանցել տեղեկատվությունը՝ ամբողջությամբ բացառվում է:

Ընտրողի հետ անմիջական կապը հանրային կարծիքի հաշվառման և պառլամենտում աշխատանքների կազմակերպման արդյունավետ ձևն է: Անշուշտ, քաղաքացիների հետ նման հանդիպումները կարևոր են, բայց դրանց ընթացքում արժարժված հարցերը, առաջարկությունները, նույնպես ԱԺ-ում պետք է անցնեն համապատասխան մշակման և վերլուծության փուլով, իսկ հիմնախնդիրների հաճախա-

կանության դեպքում հարկ է ցուցաբերել նախաձեռնություն՝ դրանք օրենսդրական ճանապարհով կարգավորելու համար:

Անգնահատելի է հեռուստատեսության ազդեցությունը հասարակական կարծիքի ձևավորման և, հատկապես, տեղեկատվության փոխանցման առումով: Կանոնակարգի 112-րդ հոդվածի համաձայն՝ եթե ԱԺ-ն այլ որոշում չի ընդունում, ապա նրա դմբաց նիստերը հեռարձակվում են Հանրային ռադիոընկերության ուղիղ եթերով, իսկ նիստերին պատգամավորների մասնակցության և անհատական քվեարկությունների արդյունքները տեղադրվում են ԱԺ-ի համացանցային կայքում:

Ձանգվածային լրատվության միջոցներով ԱԺ-ի աշխատանքի լուսաբանումը, ինչպես նաև ճեպագրույցներն ու մամուլի ասուլիսները կազմակերպում է ՀՀ ԱԺ աշխատակազմի հասարակության հետ կապերի վարչությունը: ԱԺ-ի, նրա հանձնաժողովների, խմբակցությունների և պատգամավորական խմբերի խորհրդարանական գործունեության լուսաբանումը նույնպես իրականացնում է Աշխատակազմը՝ «Խորհրդարանական շաբաթ» հեռուստահաղորդաշարի միջոցով: «Օրվա թեմայով» տեղեկություններ հաղորդելու, հայտարարություններ կատարելու համար, հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորական խմբերին, ինչպես նաև դրանցում չընդգրկված պատգամավորներին տրամադրվում է 3-ական րոպե (Կանոնակարգի 112-րդ հոդված): Հեռարձակվում են նաև Կառավարությանն ուղղված պատգամավորական հարցումներն ու հայտարարությունները:

Սակայն շաբաթվա ընթացքում խմբակցություններին կամ պատգամավորական խմբին երեք րոպեով ելույթ ունենալու հնարավորություն ընձեռելը որևէ խնդիր չի լուծում՝ հասարակությանն ամբողջապես չի տեղեկացվում օրենսդիր մարմնի կողմից տարվող քաղաքականության, իրականացվող ծրագրերի, մշակվող օրենքների մասին: Վ. Ստետովիչը նշում է. «... հեռուստատեսությամբ ամեն օր մենք ունենք «Պառլամենտի խրոնիկան. էքսպրես ռեպորտաժ»: Բացի դրանից ամեն օր ունենք «Խորհրդարանական ժամ» հաղորդումը, որը հեռարձակվում է պառլամենտում տեղակայված ստուդիայից» [7, էջ 100]: Պետական իշխանության մարմինների և, հատկապես, ժողովրդի ներկայացուցիչների գործունեության հրապարակայնությունն ապահովելու հզոր միջոցը կարող է լինել այն, որ ժամանակի ընթացքում ստեղծվի պառլամենտական հեռուստաալիք, ինչպիսիք գործում են, օրինակ՝ Իտալիայում, Ուկրաինայում: Ի դեպ, Մոլդովայում խորհրդարանի լիազույժար նիստերը, բացառությամբ փակ նիստերի, ուղիղ հեռարձակվում են հանրային հեռուստառադիոալիքներով (Կանոնակարգի 83.3-րդ հոդված), Խորվաթիայում՝ պառլամենտի աշխատանքների հրապարակայնությունն ապահովվում է տեսալսողական ձայնագրման մեթոդներով՝ դարձյալ նիստերի ուղիղ հեռարձակմամբ: Նման ալիքի առկայությունը ոչ միայն կապահովի պառլամենտի ողջ աշխատանքի, նրա բազմազան և բազմաշերտ կողմերի լայն լուսաբանումը, այլև կնպաստի քաղաքացիական հասարակության կայացմանը, ժողովր-

դավարության խորացմանը, պառլամենտական մշակույթի արմատավորմանը: Միանշանակ կարելի է նշել, որ ժողովրդի «սուր աչքի» և բնակչության խստապահանջ վերահսկողության պայմաններում պատգամավորների խոսքը, գործը, առաջարկները կլինեն առավել մտածված, հասուն, չափավոր. սա էլ իր հերթին կնպաստի պառլամենտարիզմի ձևավորմանը և խորացմանը, պառլամենտական ժողովրդավարության հաստատմանը:

Հասարակության լայն շերտերի մասնակցությունն օրենսդրության մշակմանն ամբողջապես չի իրականանում, քանի որ մինչ ԱԺ-ի քննարկման փուլ մտնելն օրենքների նախագծերի շուրջ չեն կազմակերպվում հասարակական լուսններ, դրանք հիմնականում չեն հրապարակվում: Այս առումով բացառություն էր Սահմանադրության փոփոխությունների մասին քննարկումները: ԱԺ-ում ընդունվելուց հետո, այն իրոք դարձավ հասարակության լայն ուսումնասիրության նյութ, ինչին մեծապես օգնեցին թերթերը, հեռուստատալիքները, Նախագահի ներկայացուցիչը, կոալիցիան, պատգամավորները, միջազգային փորձագետները, հասարակական գիտական-մշակութային կազմակերպությունները, մասնագետները: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ նման լայնամասշտաբ քննարկումները կարելի էր կազմակերպել սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի շուրջ, լսել հասարակության «ծայրը» և հետո միայն ձեռնամուխ լինել դրանց մշակմանը:

«Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2003 թ. դեկտեմբերի 13-ին) համաձայն [8, էջ 35-41] ԱԺ-ում հավատարմագրված լրագրողների համար մշակվել և իրականացվել է նախապատրաստական ծրագիր ու տրամադրվել են տեղեկատվական նյութեր: Լրագրողների համար ստեղծվել են աշխատավայրեր, որտեղ նրանք կարող են մշակել ԱԺ գործունեության վերաբերյալ իրենց նյութերը, դրանք մուտքագրել համակարգիչ, որի արդյունքում հանրությանը հնարավորություն է ընձեռվում առավել արագ ծանոթանալ խորհրդարանի օրվա իրադարձություններին:

Հանրային կարծիքի ձևավորման գործընթացի վրա դրական ազդեցություն է ունենում պատգամավորների կողմից Կառավարությանը հարցերով դիմելու ինստիտուտը: Կառավարության առջև պատգամավորների բարձրացրած հարցերի մեծամասնությունը ընտրողներին հուզող հիմնախնդիրներն են, որոնք գրավոր կամ բանավոր հասցեագրվում են իրենց ներկայացուցիչներին:

Ձարգացած երկրներում պառլամենտի և հասարակության միջև կապի լավագույն միջոց է սոցիոլոգիական հարցումների կազմակերպումը: Սոցիոլոգիական հետազոտությունները հիմնականում պատվիրվում են պետության, կազմակերպությունների, միջազգային կառույցների կողմից: Մեզանում դրանք հազվադեպ են իրականացվում: Սոցիոլոգիական հարցումները չեն դարձել պառլամենտի համար տեղեկատվություն հաղորդելու, հնարավոր տեսակետների վրա ազդելու, պատգամավորներին կողմնորոշելու, հասարակական կարծիքը ձևա-

վորելու միջոց: Պառլամենտը գրեթե չի օգտվում այս կարևոր «գենքից» և, կարծում ենք, որ օրենսդիր մարմնի քաղաքական գործունեության «զինանոցում» այն պետք է ունենա իր առանձնահատուկ տեղը:

Հանրային կապերի վրա իր ազդեցությունն է ունենում իրավական ակտերի տպագրությունը և դրանք բնակչությանը մատչելի դարձնելը: «Իրավական ատերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ-ում իրավական ակտերն ու նորմատիվ ակտերն ուժի մեջ կարող են մտնել միայն «ՀՀ պաշտոնական տեղեկագրում» կամ «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Վիճակագրության համաձայն՝ պաշտոնական տեղեկագրի միջին տպաքանակը 1000 օրինակ է, որից 400-ը՝ պետպատվեր է, 500-ը՝ բաժանորդային, իսկ 100-ը հանվում է վաճառքի: Եթե հաշվի առնենք, որ ՀՀ բնակչության ընդհանուր թիվը 3 մլն է, ստացվում է, որ այս տեղեկագիրը բաժին է ընկնում 3000 բնակչից միայն 1-ին: Մարզերում մարդիկ օրենքների կարող են ծանոթանալ միայն մարզպետարաններում, որոնք ստանում են պաշտոնական տեղեկագրի համարներից մեկական օրինակ:

ԶԼՄ-ների միջոցով հիմնահարցերի քննարկումները ևս լավագույն ձև են մարդկանց տեղեկացնելու ընդունվող օրենքների մասին: Սակայն դրանց տպաքանակի սղությունը, շատ հաճախ մարզեր չհասնելը հնարավորություն չեն տալիս բնակչությանը իրազեկ լինել պառլամենտի գործունեությանը և տեղեկատվության տիրապետմանը: Եվրոպական երկրներին բնորոշ է, որ անց են կացվում հիմնախնդիրների բաց քննարկումներ, հրապարակային զեկուցումներ, գերատեսչությունների և անհատների կողմից արված առաջարկությունների ամփոփման հիման վրա ձևավորվում է հասարակական կարծիք: Քաղաքացիների առաջարկությունների շուրջ կատարվող աշխատանքը ձևական չէ, այն իրականում մեծ նշանակություն ունի:

Պառլամենտական գործընթացի թափանցիկությունը թույլ է տալիս հասարակությանը հասկանալ պառլամենտական քննարկումների բնույթը և հնարավորինս ազդել որոշումների բովանդակության վրա: Բնակչությունն իրավունք ունի ուղղակի ազդեցություն ունենալ ընդունվող օրենսդրական որոշումների վրա, ստանալ տեղեկատվություն պատգամավորների կողմից ընտրողների նկատմամբ պարտավորությունների կատարման ընթացքի մասին: Այստեղ կարևոր է, թե պառլամենտականներն ունեն արդյո՞ք պատրաստակամություն՝ իրենց գործունեության և աշխատանքների մասին քաղաքացիներին թարմ ու ամբողջական տեղեկատվություն տրամադրելու համար: «Մենք պետք է շատ ինֆորմացիա հաղորդենք ընտրողին և երկրորդ՝ պետք է կրթենք ընտրողին» [9, էջ 107]: Թափանցիկ աշխատանքի, տեղեկացված բնակչություն ունենալու դեպքում մեծանում է պառլամենտի, պառլամենտականների նկատմամբ վստահության աստիճանը:

Հանրության հետ ԱԺ-ի կապերի ապահովման արդյունավետ ձև է նաև հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքի ճիշտ կազմակերպումը: Անշուշտ, օրենքների ընդունման վրա, տար-

բեր ձևերով և մեթոդներով կարելի է ազդել ու ազդում են, ինչպես պետական մարմինները, այնպես էլ հասարակական կազմակերպությունները: Վերջիններիս ներկայացուցիչներին, կարծում ենք, առաջարկներ ունենալու դեպքում պետք է թույլ տալ մասնակցելու հանձնաժողովների, ենթահանձնաժողովների նիստերին, ամենատարբեր քննարկումներին, գրավոր և բանավոր ձևով իրենց ասելիքը փոխանցելու պատգամավորին:

Եվ, վերջապես, պառլամենտական կուսակցությունների համագործակցությունը ժողովրդի հետ պետք է դառնա ամենաազդեցիկ կապերից մեկը: Կուսակցություններն իրենց մարզային, տարածքային կառույցներով անընդհատ կապի և հարաբերությունների մեջ պետք է լինեն ժողովրդի հետ, ուսումնասիրեն ժողովրդին հուզող հիմնահարցերը, լսեն նրանց առաջարկները, բողոքներն ու դիտողությունները և դրանք հասցնեն ԱԺ-ի իրենց խմբակցությանը: Այսպիսով, ներկայացուցչական մարմինն ականջալուր է դառնում հասարակության մեջ տեղի ունեցող խնդրումներին, եղած տեսակետներին և փորձում է դրանց որոշակի մասին լուծումներ տալ, բարձրացնել օրենքի աստիճանի, կանոնակարգել անհրաժեշտ հարաբերությունները: Ցավոք, կուսակցությունների մեծ մասը չունեն անհրաժեշտ կառույցներ, չեն կարողանում ողջ երկրում իրենց գաղափարները տարածել:

ԱԺ-հասարակություն հետադարձ կապի ապահովման, տեղեկատվության լայն տարածման համար անհրաժեշտ է շտկումներ և լրացումներ կատարել Կանոնակարգում՝ ինչպես քաղաքացիներից ստացված բազմաբնույթ տեղեկությունների, նամակ-բողոքների, առաջարկությունների ընդունման, մշակման, այնպես էլ պատգամավորների տեսակետները բնակչությանը հասցնելու առումներով:

Եթե պառլամենտի ընդունած որևէ օրենքի շուրջ առկա է հասարակության անհամաձայնությունը, դժգոհությունը, ապա ակնհայտ է, որ այն արդյունավետ գործել չի կարող: Կարծես, օրենքն այս դեպքում տեղ չի հասնում: Թվում է, որ պատգամավորներն անհաղորդ են մնում հասարակության ձայնին և անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ իրավիճակային լուծումներ տալիս է Կառավարությունը, քան՝ պառլամենտը: Սակայն, վերջինս որպես ժողովրդի ներկայացուցչական մարմին՝ մեծապես պետք է ազդի հասարակական հարաբերությունների վրա՝ քաղաքացիներից համապատասխան կարծիքներ, առաջարկներ ստանալու և դրանց համարժեք արձագանքելու միջոցով:

Համաշխարհայնացման և ազատականացման պայմաններում ամենաարժեքավորը դառնում է օբյեկտիվ, մշակված տեղեկատվության տիրապետումը, որն այսօր աշխարհում լրջագույն գործոն է քաղաքականության, տնտեսության, սոցիալական հարցերը մշակելու և լուծելու համար: Պատահական չէ, որ ձևավորվում և փորձում են իրավունքի առանձին ճյուղի հայտ ներկայացնել այնպիսի ինստիտուտներ, ինչպիսիք են տեխնոլոգիաների իրավունքը, ինտերնետի իրավունքը, տեղեկատվական իրավունքը ու ՁԼՄ-ների իրավունքը և այլն:



Մշակվում են ուսումնական առարկաներ, որոնք հանդիսանում են ռուսաստանյան տեղեկատվական իրավունքի համանման օրինակը՝ նոր տեխնոլոգիաների իրավունք, ինտերնետի իրավունք, տեղեկատվության և ՁԼՄ-ի իրավունք [10]: Եվրոպական երկրների պառլամենտներում լուրջ ուշադրություն են հատկացնում այս հիմնահարցերին: Եվրոպական հանձնաժողովում ստեղծվել է «տեղեկատվական հասարակության» գլխավոր տնօրինություն, որտեղ ամփոփվում են «էլեկտրոնային պետության» զարգացման տվյալներն այդ երկրներում:

Արդեն երեք տարի մեր երկրում կիրառվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը և արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ կառավարման մարմինների կողմից հանրության հետ կապերի ապահովման խոչընդոտ կարող է համարվել նաև ֆինանսական միջոցների բացակայությունը: Այն ազդում է պառլամենտի, Կառավարության պարտականությունների ոչ լիարժեք կատարման վրա, նվազեցնում իրազեկությունը, գործունեության հրապարակայնությունը և սահմանափակվում է տեղեկատվության մատչելիությունը: Հետևաբար, անհրաժեշտ է յուրաքանչյուր բյուջետային տարվա համար այս նպատակով ևս կատարել համապատասխան ֆինանսական հատկացումներ:

Եվրոպական խորհրդարանական ասամբլեայի 1979 թ. փետրվարի 1-ի որոշման մեջ գրված է, որ «ժողովրդավարությունը կարող է պատշաճ գործել միայն, եթե ողջ ժողովուրդը և նրա կողմից ընտրված ներկայացուցիչները լիովին իրազեկված են»: Այնուհետև նշված է, որ «ցանկալի որոշ բացառություններից բացի, հասարակությունն իրավունք ունի ստանալ պաշտոնական ինֆորմացիա: Ինֆորմացիայի նման ազատությունը կօգնի հաղթահարել կաշառակերությունը և պետական միջոցների վատնումը» [11, էջ 195-244] :

Չնայած նոր ձևավորվող պառլամենտական ավանդույթներին, այնուամենայնիվ մեր պառլամենտն այսօր դեռևս չի դարձել ժողովրդի պահանջների, ցանկությունների և շահերի լիարժեք արտահայտիչը: Եթե պատգամավորները լինեն պրոֆեսիոնալներ, աշխատեն միայն պառլամենտում, ժողովուրդն էլ ամբողջապես վստահի պառլամենտին, ունենա անհրաժեշտ տեղեկատվություն, ապահովվի բոլոր միջոցներով, արդյունավետ լինեն փոխադարձ կապերը, ապա այդ դեպքում կհասնենք ժողովրդավարության զարգացման բարձր մակարդակի, սոցիալական զարգացման ներդաշնակության, իշխանության ճյուղերի փոխընթերցման և արդյունավետ համագործակցության, իսկ պառլամենտարիզմը կդառնա գործող իրողություն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հարությունյան Գ.**, Անհնարին է ցատկել դարերի վրայով, «Հանրային կառավարում», 2004, N 1-2:
2. **Ուայլդման Ս.**, Օրենսդրի աշխատանքների առանձնահատկությունները, Սեմինար-քննարկում նյութերի ժողովածու, Երևան, 2003:
3. **Poulin D.**, La démocratisation de l'accès au droit: nouveaux acteurs et nouvelles technologies in Variations sur le droit de la société de l'information, Coordonné par C. Monville. Bruxelles, 2001.
4. **Ihépaud Y.**, Pouvoir, information, économie. Paris, 2002.
5. [www.europa.eu.int](http://www.europa.eu.int).
6. **Ջեֆերսոն Թ.**, Մամուլի ազատության օր, մայիսի 3, UNDPPI Armenia, 1997:
7. **Ստենտոլիչ Վ.**, Օրենսդրի աշխատանքների առանձնահատկությունները, Սեմինար-քննարկում նյութերի ժողովածու, Երևան, 2003:
8. Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2004, N 6, էջ 35-41:
9. **Հակոբյան Յ.**, Օրենսդրի աշխատանքների առանձնահատկությունները, Սեմինար-քննարկում նյութերի ժողովածու, Երևան, 2003:
10. **Linant de Bellefonds X., Hollande A.**, Pratique du droit de l'information. Logiciels, systemes, Internet, Paris, 2002.
11. **Civil Liberties**, Legal Principles of Individual Freedom, Edwin Shortt & Claire de Than, Sweet & Maxwell, 1979.

**HRANUSH HAKOBYAN**

*Member of Parliament  
National Assembly of the Republic of Armenia,  
Doctor of Sciences ( Law)*

**PUBLIC RELATIONS OF THE NATIONAL ASSEMBLY**

The establishment of a system of access to legal information and its disposal is becoming an important and great issue. The public relations of the Parliament with the society, voters, other bodies of state government and local self-government are a significant matter.

In the Armenian legislation there are provisions relating to public relations and feedback, their forms and methods. Parliamentary hearings, the Internet, direct links with the voters, the registration of the public opinion, the coverage of the activity of the National Assembly, briefings and holding of press-conferences are the most effective ways of the organization of parliamentary work. The institute of the questions to Government posed by the members of parliament has a positive impact on the shaping of the public opinion. An efficient form of the relations of the National Assembly with the public is the correct organization of the work with NGOs.

To ensure the feedback National Assembly-public and dissemination of information the Rules of Procedure need to be revised. The right to information technologies, right to information and media rights start their way in life.

## ՈՌԻՋԱՆԱ ԶԱԿՈՒՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի ռեկտոր,  
իրավաբանական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ՊԿԱ դոկտորանտ*

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Սահմանադրական պատասխանատվության ելության և սոցիալ-իրավական նշանակության լիարժեք բացահայտման համար անհրաժեշտ է պարզել այդ ինստիտուտի նպատակներն ու գործառնությունները:

Ընդհանրապես ցանկացած գիտակցված գործունեություն նպատակ ունի: Նպատակաուղղված է նաև կարևոր հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը, և անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում՝ իրավաբանական պատասխանատվության կիրառումը:

Սահմանադրական պատասխանատվության նպատակները հստակ ձևակերպելու համար անհրաժեշտ է պետության իրավական քաղաքականության նպատակների հստակեցում, իրավակիրառ գործունեության նպատակների ամրագրում, որով և կսահմանվեն ընդհանրապես իրավաբանական պատասխանատվության և, մասնավորապես, սահմանադրական պատասխանատվության նպատակները: Հենց սահմանադրական պատասխանատվությանը վերաբերող իրավանորմեր սահմանելու, ինչպես նաև դրանք կիրառելու գործընթացը նպատակային է:

Փիլիսոփայական գրականության մեջ նպատակները բաժանում են որոշակիի (կոնկրետի) և վերացականի (աբստրակտի) [1, էջ 459]: Տարբերակում են նաև մասնավոր և ընդհանուր նպատակներ, որոնք միմյանցից զանազանվում են բովանդակությամբ ու ծավալով: Գործունեության այս կամ այն ուղղությամբ բոլոր մասնավոր նպատակների համակցությունը հավասար է մի ընդհանուր նպատակի [2, էջ 29]:

Կարծում ենք, որ մի կողմից իրավաբանական պատասխանատվության ընդհանուր նպատակից բխում են իրավաբանական պատասխանատվության տեսակներին բնորոշ նպատակները, իսկ մյուս կողմից, ինչպես նշում է Ի. Ա. Գալագանը, առանց բացառության իրավաբանական պատասխանատվության բոլոր տեսակներն ունեն համակարգային, այսինքն՝ բոլորի համար ընդհանուր նպատակներ՝ նրանց համակարգվածության և խնդիրների ընդհանրության ուժով: Այդ ընդհանուր նպատակները չեն բացառում իրավաբանական պատասխա-

նատվության միայն առանձին ճյուղային տեսակներին բնորոշ անմիջական նպատակները [3, էջ 137]:

Ա. Պ. Զիրկովը նպատակները դասակարգում է վերջնականի և միջանկյալի: Նրա դիրքորոշումն այն է, որ նպատակների հիերարխիան կառուցվում է՝ պայմանավորված պատասխանատվության տեսակներով. հարկադրական, չափավոր-պոզիտիվ, ակտիվ-պոզիտիվ [4, էջ 11-12]: Իսկ Ա. Պ. Սիրոտինի կարծիքով, իրավաբանական պատասխանատվության նպատակները կարելի է բաժանել ընդհանուրի և հատուկի [5, էջ 16]: Ընդ որում, նա հնարավոր է համարում նման բաժանումը ինչպես ողջ իրավաբանական պատասխանատվության մակարդակում, այնպես էլ իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակների մակարդակում:

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրավաբանական գրականությունում բացակայում է իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ սահմանադրական պատասխանատվության նպատակների դասակարգման հիմնախնդրի վերաբերյալ միասնական դիրքորոշումը: Մենք առաջարկում ենք տարբերակել իրավաբանական պատասխանատվության ընդհանուր կամ համաիրավական նպատակներ և հատուկ նպատակներ, որոնք բնորոշ են իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակներին:

Ըստ իրականացման ժամկետի՝ կարող ենք տարբերակել մոտակա, միջանկյալ և հեռանկարային նպատակներ, որոնք անմիջապես չեն իրականացվում և որոնց համար ժամանակ ու այլ պայմաններ են անհրաժեշտ:

Երբեմն տարբերակվում են մոտակա և գլխավոր կամ վերջնական նպատակներ:

Կարծում ենք, որ «վերջնական նպատակ» հասկացությունը պայմանական է, քանի որ, հասնելով որոշակի նպատակի, պետությունը կառաջադրի նոր խնդիրներ և իրավաբանական պատասխանատվության նոր նպատակներ:

Իրավաբանական պատասխանատվության ընդհանուր նպատակները փոխկապված են իրավաբանական պատասխանատվության առանձին տեսակների նպատակներին և համատեղ միտված են հասարակական հարաբերությունների պատշաճ իրավական կարգավորման ապահովմանը, օրինականություն և ամուր իրավակարգ հաստատելուն, մարդու իրավունքները և ազատությունները պաշտպանելուն, խախտված իրավունքները վերականգնելուն, իրավախախտին պարսավելուն, զրկանքներ պատճառելուն և նոր իրավախախտումները կանխելուն:

Սահմանադրական պատասխանատվության նպատակներն այն փաստացի արդյունքներն են, որոնց հասնելու համար պետությունը նախատեսում է սահմանադրական պատասխանատվության միջոցներ:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այն հարցին, թե ինչպե՞ս են հարաբերակցվում սահմանադրական պատասխանատվու-

յան «գործառույթ», «խնդիր» և «նպատակ» հասկացությունները: Նկատենք, որ նշված կատեգորիաները փոխկապակցված են:

Համամիտ ենք Տ.Ն. Ռադկոյի հետ, ըստ որի «Իրավունքի խնդիրները գործառույթների համեմատ արտաքին (որոշիչ) գործոններ են, որոնց համապատասխան իրականացվում են գործառույթները» [6, էջ 23]:

Շարունակելով Տ. Ն. Ռադկոյի միտքը՝ նշենք, որ խնդիրների առաջացումը հանգեցնում է սահմանադրական պատասխանատվության գործառույթների իրականացմանը, ինչի արդյունքում իրագործվում են սահմանադրական պատասխանատվության նպատակները:

Կարծում ենք, որ սահմանադրական պատասխանատվության նպատակն է այնպիսի սոցիալապես օգտակար արդյունքների առաջացումը, ինչպիսին են՝ քաղաքացիների և իրավունքի մյուս սուբյեկտների իրավունքների և ազատությունների իրականացման համար պայմանների ստեղծումը, սահմանադրական կարգի կայունությունը, սահմանադրական իրավախախտումների ընդհանուր և հատուկ կանխումը:

Սահմանադրական պատասխանատվության նպատակ կարելի է համարել սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցների իրավունքների պաշտպանությունը, Սահմանադրության հիման վրա պետական իշխանության համակարգի արդյունավետ գործունեության ապահովումը, պետական իշխանության բաժանման, «զսպումների և հակակշիռների» կառուցակարգերի ճիշտ գործարկումը, սահմանադրական կարգի և օրինականության հաստատումը: Այս նպատակով՝ պարսավվում են սահմանադրական պարտականությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած կամ սահմանադրական լիազորությունները չարաշահած սուբյեկտները, նրանց նկատմամբ կիրառվում են որոշակի սահմանափակումներ: Սահմանադրական պատասխանատվության նպատակն ամենից առաջ պետք է լինի մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, սոցիալական արժեքների, ինչպես նաև սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանությունը, առանց որի կտուժի թե՛ անհատը և թե՛ հասարակությունն ու պետությունը: Ն. Վ. Վիտրուկը, որպես սահմանադրական պատասխանատվության նպատակ, նշում է սահմանադրության գերակայության և ուղղակի գործողության ապահովումը, սահմանադրական իրավակարգի և օրինականության պահպանությունը, վերականգնումը, արդար փոխհատուցումը [7, էջ 441-442]:

Սահմանադրական պատասխանատվության ընդհանուր նպատակը սահմանադրական կարգի, օրինականության և ընդհանրապես հասարակական կարգի պահպանումն է:

Այս նպատակների իրականացմանն են միտված սահմանադրական պատասխանատվության գործառույթները:

Տասնամյակներ շարունակ խորհրդային իրավագիտության մեջ գերակշռող տեսակետն այն է եղել, որ իրավաբանական պատասխանատվությունն ունի երկու հիմնական գործառույթ՝ պատժիչ և իրավավերականգնողական [8, էջ 151]:

Օ. Է. Լեյստը XX դարի 80-ական թվականներին լույս ընծայած աշխատության մեջ նշում է, որ «պոզիտիվ պատասխանատվությունը կատարում է սահմանադիր (կոնստիտուտիվ), գործառույթային (ֆունկցիոնալ) և անձնական (պերսոնալ) գործառույթներ»[9, էջ 227]:

Ճյուղային իրավաբանական գիտություններում բազմաթիվ տեսակետներ կան իրավաբանական պատասխանատվության տեսակների նպատակների և գործառույթների վերաբերյալ:

Իրավունքի որոշ ճյուղերի համար պատասխանատվության այս կամ այն գործառույթը համարվում է գլխավոր, մյուսների համար՝ երկրորդական: Քաղաքացիական պատասխանատվության դեպքում վճռորոշ է համարվում իրավավերականգնողական գործառույթը, իսկ քրեական պատասխանատվության դեպքում առաջնային է դիտվում պատժիչ գործառույթը: Սակայն, պատժիչ գործառույթը ինքնանպատակ չէ և ծառայում է որպես իրավախախտին ուղղելու, վերադաստիարակելու, նոր իրավախախտումները կանխելու միջոց:

Պատժիչ գործառույթի հետ իրավաբանական պատասխանատվությունն իրականացնում է իրավավերականգնողական գործառույթ, այսինքն՝ ծառայում է անհատի կամ պետության խախտված իրավունքների վերականգնմանը [10, էջ 542]:

Իրավաբանական պատասխանատվությունը կատարում է պրևենտիվ, կարգավորիչ, վերականգնողական գործառույթներ: Մեր կարծիքով, ճիշտ չէ նվազեցնել կամ ավելացնել իրավաբանական պատասխանատվության այս կամ այն գործառույթի դերը կամ գործառույթները հակադրել միմյանց: Իրավաբանական պատասխանատվության գործառույթները, տարբերություններով հանդերձ, ունեն նաև շատ ընդհանրություններ: Իրավաբանական պատասխանատվության իրավավերականգնողական և պատժիչ գործառույթները գործում են միասնաբար: Դա դրսևորվում է և նրանում, որ իրավաբանական պատասխանատվության ցանկացած միջոց միաժամանակ նպաստում է խախտված իրավունքի (խախտված հասարակական հարաբերությունների) վերականգնմանը և ստեղծում պատժելիության վիճակ: Իրավաբանական պատասխանատվության գործառույթների միասնությունն արտահայտվում է նաև նրանում, որ գործառույթներից յուրաքանչյուրն իր ձևով նպաստում է ընդհանուր առմամբ իրավաբանական պատասխանատվության նպատակների իրականացմանը:

Հայաստանի Հանրապետության զարգացման ժամանակակից փուլում իրավաբանական պատասխանատվության, այդ թվում՝ սահմանադրական պատասխանատվության նպատակները պայմանավորված են հասարակության սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական, հոգևոր-մշակութային զարգացման նոր պահանջներով: Իրավաբանական գրականության մեջ սահմանադրական պատասխանատվության գործառույթների վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Օրինակ՝ ելնելով գործառույթային նշանակությունից, սահմանադրական պատասխանատվությանը վերագրվում են ռեպրեսիվ և վերա-

կանգնողական գործառույթներ: Սակայն, գտնում ենք, որ սահմանադրական պատասխանատվությունը՝ որպես իրավաբանական պատասխանատվության տարատեսակ, ունի ոչ միայն պատժիչ և վերականգնողական, այլև կարգավորիչ, կանխիչ, դաստիարակիչ գործառույթներ: Սահմանադրական պատասխանատվության գործառույթներն ու նպատակները փոխկապակցված են, քանի որ, ինչպես վերը նշվեց, գործառույթները ծառայում են նպատակների իրականացմանը, իսկ իրենց հերթին նպատակները կարող են հանդես գալ որպես գործառույթների դասակարգման չափանիշ, գործառույթների իրականացման արդյունք:

Գործառույթների միջոցով նպատակը՝ որպես սուբյեկտիվ կատեգորիա վերածվում է օբյեկտիվ իրողության: Այս գործընթացը կարելի է բանաձևել հետևյալ կերպ. խնդիր-գործառույթ-նպատակ-արդյունք:

Սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ գործառույթը կոչված է ամրագրելու և կանոնակարգելու սահմանադրական իրավահարաբերությունների շարժընթացը, ձևավորելու սուբյեկտների իրավաչափ վարքագիծ: Սահմանադրական պատասխանատվության կանխիչ գործառույթի նպատակը սահմանադրական իրավախախտումների նախականիտումն է՝ ընդհանուր և հատուկ պրևենցիայի ձևով: Հատուկ պրևենցիան ուղղված է իրավախախտում կատարած անձանց իրավաչափ վարքագծի ձևավորմանը, իսկ ընդհանուր կանխումն այլ անձանց իրավաչափ վարքագծի ապահովումն է, նրանց կողմից սահմանադրական իրավախախտումների կանխարգելումը:

Սահմանադրական պատասխանատվության պատժիչ գործառույթն ուղղված է իրավախախտներին պատժելուն, պատժի անխուսափելիության սկզբունքի իրականացմանը, սուբյեկտների նկատմամբ տարբեր բնույթի զրկանքների և սահմանափակումների կիրառմանը: Պատժիչ գործառույթն իր հերթին կոչված է իրականացնելու խախտված հասարակական հարաբերությունների վերականգնման, իրավախախտումների կանխման նպատակներ:

Դաստիարակիչ գործառույթը կոչված է հաղթահարելու հակասոցիալական դիրքորոշումները, իրավական նիհիլիզմը, ձևախեղված պահանջումները, ձևավորելու հանրորեն օգտակար կողմնորոշիչներ, հարգանք իրավունքի նկատմամբ, նպաստելու իրավագիտակցության և իրավական կուլտուրայի բարձրացմանը:

Սահմանադրական պատասխանատվության վերականգնողական գործառույթն ուղղված է սահմանադրական հարաբերությունների խախտված կարգի վերականգնմանը, սոցիալական կայունության հաստատմանը, սահմանադրական կարգի և օրինականության ամրապնդմանը: Սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ գործառույթը կոչված է կանոնակարգելու հասարակական հարաբերություններն այնպես, որպեսզի սահմանադրական իրավահարաբերությունների մասնակիցները ճանաչեն և պաշտպանեն մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պահպանեն ժողովր-



դավարության, Սահմանադրության գերակայության սկզբունքները և պետության սահմանադրական կարգի մյուս հիմունքները:

Ինչպես նշել է Ս. Ա. Ավագյանը, սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ գործառույթը կարևոր միջոց է՝ պետական իրավասու մարմինների, պաշտոնատար անձանց աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար, որն ապահովում է պետաիրավական հարաբերությունների սուբյեկտների պատշաճ վարքագիծը [11, էջ 18]:

Սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ գործառույթն իրականացվում է սահմանադրական պարտականությունների կատարման, արգելքների պահպանման, լիազորությունների իրականացման ձևով:

Հենց սահմանադրական պարտականությունների, արգելքների, լիազորությունների ամրագրման միջոցով ձևավորվում է սահմանադրական իրավաչափ վարքագծի կազմը:

Սահմանադրությունը բովանդակում է պարտականություններ, որոնք արտահայտում են պետության, պաշտոնատար անձանց պատասխանատվությունը քաղաքացիների առջև: Օրինակ՝ բարեփոխված ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:

Սահմանադրության կառուցման իրավաբանական տեխնիկան ունի առանձնահատկություններ. սահմանադրական նորմերում կարող է անմիջական ցուցում չլինել պատասխանատվության մասին, և դա պետք է եզրակացնել տրամաբանական վերլուծության միջոցով: Օրինակ, ըստ ՀՀ Սահմանադրության 11.3-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գտնվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո»: Այս դրույթից բխում է պետության սահմանադրական պատասխանատվությունը՝ պաշտպանելու ՀՀ քաղաքացիներին պետության ներսում և նրա սահմաններից դուրս:

Սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ գործառույթը վերաբերում է ոչ միայն պետական մարմինների, այլև պետության և քաղաքացիների միջև հարաբերություններին:

Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի պահպանության կարևոր երաշխիքն է:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Այսինքն՝ այս նորմը սահմանում է պետության սահմանադրական պատասխանատվությունը՝ պաշտպանելու մարդու արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները: Եվ ինչպես նշում են Ռ. Լ. Խաչատու-

րովը և Ռ. Գ. Յաղուտյանը, «Իրավական պետության հատկանիշներից մեկը պետության և անհատի փոխադարձ պատասխանատվությունն է: Իրավական հասարակության մեջ քաղաքացին պետք է ունենա պաշտոնատար անձանց իրավանորմերի կատարմանը հարկադրելու այնպիսի հնարավորություն, ինչպիսին ունեն պաշտոնատար անձինք քաղաքացիների նկատմամբ: Երբ այդ հնարավորությունն իրականություն դառնա, այդ ժամանակ իրավաբանական պատասխանատվությունն իսկապես կարևոր սոցիալական արժեք, հասարակության զարգացման գործոն կլինի:

Իրավական է այն պետությունը, որի համար նույնպես պարտադիր են ճանաչվում օրենսդիր մարմնի ընդունած իրավաբանական պատասխանատվության նորմերը: Նման պետությունն իր գործառույթներն իրականացնելիս կապված է իրավական պատասխանատվության հետ» [12, էջ 195-196]:

Որպես կանոն, կամավոր պատասխանատվությունն իրացվում է ընդհանուր կարգավորիչ իրավահարաբերությունների շրջանակում: «Ընդհանուր կարգավորիչ իրավահարաբերությունների բնորոշ օրինակ է քաղաքացիությունը,– գրում է Ն. Ի. Մատուզովը,– որն արտահայտում է անձի իրավաքաղաքական կապը պետության հետ: Եթե հաշվի չառնենք քաղաքական ասպեկտը, ապա կմնա սոսկ իրավահարաբերություն երկու «բարձր կողմերի» միջև, որը հենվում է երկու կարևորագույն ակտի՝ սահմանադրության և քաղաքացիության մասին դաշնային օրենքի վրա» [13, էջ 43]:

Քաղաքացին ևս սահմանադրական պարտականություններ է կրում և պատասխանատու է պետության առջև, մասնավորապես պարտավոր է պահպանել սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը (ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդված), վճարել օրենքով սահմանված հարկեր և տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ (45-րդ հոդված), օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը (46-րդ հոդված) և այլն:

«Անհատի և պետության փոխադարձ պատասխանատվությունն իր իրավաբանական արտահայտությունն է ստանում ամենից առաջ սահմանադրորեն ամրագրված պարտականություններում»,– գրում է Ն. Վ. Վիտորուկը [14, էջ 21]: ՀՀ Սահմանադրությունը հռչակում է սահմանադրության գերակայությունը՝ 6-րդ հոդվածի առաջին մասում սահմանելով, որ սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Այս սկզբունքից բխում է բոլոր իրավասու մարմինների պարտականությունը՝ ընդունելու սահմանադրությանը համապատասխանող իրավական ակտեր: Համաձայն 6-րդ հոդվածի վերջին պարբերության՝ «Նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով»: Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի դերն այն է, որ պարտավորեց-

նուն է օրենսդիր մարմնին, երկրի նախագահին, կառավարությանը՝ բարեխղճորեն կատարելու իրենց պարտականությունները:

Ինչպես նշում է Տ. Դ. Զրաժևսկայան, «Սահմանադրական պատասխանատվության էությունը կայանում է իշխանության մեկ ճյուղի կամ մեկ բարձրագույն պաշտոնատար անձի ձեռքում իշխանության կենտրոնացման դեմ իրական երաշխիքների համակարգի ստեղծման մեջ՝ պատժի միջոցներ սահմանելու ճանապարհով» [15, էջ 26]:

Կարծում ենք, սահմանադրական պատասխանատվության առաջնային խնդիրը ոչ թե պատժամիջոցների սահմանումն է, այլ սահմանադրական պատասխանատվությունն իր կարգավորիչ գործառույթով կոչված է կանոնակարգելու սահմանադրաիրավական հարաբերությունները, սուբյեկտներին մղելու՝ իրավաչափ գործողություններ կատարելուն, պոզիտիվ պատասխանատվություն կրելուն, իսկ հակառակ դեպքում՝ նախատեսում է սահմանադրաիրավական սանկցիաներ:

Սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ գործառույթն ունի որոշակի առանձնահատկություն, որով տարբերվում է իրավաբանական պատասխանատվության մյուս գործառույթներից: Այն կանխորոշում է օրենսդրի գործունեությունը՝ սահմանելու իրավաբանական պատասխանատվության այլ տեսակներ՝ դրանով իսկ նպաստելով ընդհանուր առմամբ իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի ձևավորմանը և գործողությանը: Համամիտ ենք այն կարծիքին, որ «Սահմանադրական օրենսդրության հիման վրա ձևավորվում են իրավաբանական պատասխանատվության մյուս ճյուղային ինստիտուտները և որոշվում է նրանց զարգացումը՝ պետության և հասարակության համար անհրաժեշտ ուղղությամբ: Սրանում է կայանում սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ գործառույթը» [16, էջ 181]:

Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածին համապատասխան՝ «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»: Այստեղից բխում է պետության պարտականությունը՝ սահմանելու պատասխանատվություն շրջակա միջավայրի դեմ ուղղված իրավախախտումների համար, նախատեսելու վարչական, քրեական պատասխանատվության միջոցներ:

Կարգավորիչ գործառույթին զուգահեռ սահմանադրական պատասխանատվությունն իրականացնում է նաև պրևենտիվ գործառույթ: Ներգործելով սահմանադրական իրավահարաբերությունների մասնակիցների կամքի և գիտակցության վրա՝ վերջին հաշվով այն նպաստում է իրավաչափ վարքագծի դրսևորմանը և կանխում է հանրորեն վնասակար հարաբերությունների զարգացումը:

Սահմանադրական պատասխանատվության պրևենտիվ գործառույթը կոչված է կանխելու սահմանադրական կարգի խախտումները: Նշված գործառույթի իրականացման ինքնուրույն ձև է սահմանադրական սանկցիայի կիրառման սպառնալիքը: Օրինակ՝ սահմանադրա-

կան պատասխանատվության միջոց է Ազգային ժողովի պատգամավորին մանդատից զրկելու կամ կառավարության անդամին պաշտոնազրկելու սպառնալիքը, եթե վերջիններս, խախտելով ՀՀ Սահմանադրության 65-րդ և 88-րդ հոդվածները, զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնում իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարում այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Սահմանադրական պատասխանատվության պրևենտիվ գործառույթը նպատակաուղղված է՝ սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ թույլ չտալուն, հնարավոր սահմանադրական իրավախախտումները կանխելուն: Երբ սուբյեկտը խախտում է սահմանադրական նորմը, սկսում է կիրառվել սահմանադրական պատասխանատվության պատժիչ գործառույթը:

Պատժիչ գործառույթի իրականացումը շատ դեպքերում դժվարացնում է պրոցեսուալ կանոններով, որոնց գոյությունը պայմանավորված է պետական իշխանության մարմինների և բարձրագույն պաշտոնատար անձանց՝ որպես սահմանադրական պատասխանատվություն կրող սուբյեկտների հատուկ կարգավիճակով:

Օրինակ՝ ՀՀ Նախագահի պաշտոնանկության գործընթացն ունի բարդ բնույթ: Մասնավորապես, ըստ ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի, ՀՀ Նախագահը կարող է պաշտոնանկ արվել, եթե.

- կատարել է պետական դավաճանություն կամ այլ ծանր հանցագործություն,
- Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունել է որոշում՝ Սահմանադրական դատարան դիմելու մասին,
- Սահմանադրական դատարանը տվել է եզրակացություն ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին,
- այդ եզրակացության հիման վրա Ազգային ժողովը կայացրել է որոշում՝ ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու մասին,
- ԱԺ-ն որոշում է կայացրել պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Սահմանադրական պատասխանատվության պատժիչ գործառույթը բացառում է իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների հետագա մասնակցությունը սահմանադրաիրավական հարաբերություններին: Պատժիչ գործառույթի փաստացի իրականացման արդյունքում դադարում է իրավահարաբերությունը նշված սուբյեկտի հետ, փոխվում է վերջինիս սահմանադրաիրավական կարգավիճակը, և նա վերածվում է իշխանական լիազորություններ չունեցող ֆիզիկական անձի:

Սահմանադրական պատասխանատվության պատժիչ գործառույթի իրականացումը հանգեցնում է նաև սուբյեկտի գույքային ոլորտի սահ-

մանափականանը, քանի որ վերջինս զրկվում է արտոնություններից, նյութական բարիքներից՝ պայմանավորված իր զբաղեցրած պաշտոնով:

Սահմանադրական պատասխանատվության պատժիչ գործառույթի իրականացումը կարող է նախապայման հանդիսանալ իրավաբանական պատասխանատվության մյուս տեսակների (վարչական, քրեական, քաղաքացիական և այլն) կիրառման համար:

Օրինակ՝ պաշտոնատար անձի պաշտոնանկությունը կարող է հետևել վերջինիս նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառումը: Սահմանադրական պատասխանատվության պատժիչ գործառույթի հետ միաժամանակ իրացվում է վերականգնողական գործառույթը: Դ. Ի. Նազարովը և Ի. Ս. Նազարովան գտնում են, որ սահմանադրական պատասխանատվությունը զուրկ է վերականգնող - փոխհատուցող գործառույթից [17, էջ 16]:

Այս դիրքորոշմանը հակառակ տեսակետն այն է, որ սահմանադրական պատասխանատվության համար առաջնային է վերականգնողական գործառույթը, իսկ պատժիչ գործառույթը ֆակուլտատիվ է [18, էջ 11]:

Երրորդ կարծիքի համաձայն՝ սահմանադրական պատասխանատվության միջոցների մի մասն ունի պատժիչ, իսկ մյուս մասը՝ վերականգնողական գործառույթ [19, էջ 30]:

Սակայն, չենք կարող համաձայնել այս դիրքորոշմանը, քանի որ ինչպես իրավաբանական պատասխանատվության ցանկացած տեսակ, այնպես էլ սահմանադրական պատասխանատվությունն ունի ինչպես վերականգնողական, այնպես էլ պատժիչ գործառույթներ: Օրինակ՝ Նախագահի պաշտոնանկությունը, խորհրդարանի արձակումը, կառավարությանն անվստահություն հայտնելը սահմանադրական պատասխանատվության սուբյեկտներին պատժելուց զատ նաև թուլացնում են քաղաքական լարվածությունը, վերականգնում սոցիալական հանդարտ վիճակը, բարելավում բարոյահոգեբանական մթնոլորտը, փոխում քաղաքական ուժերի հարաբերակցությունը, պայմաններ ստեղծում վիճակի շտկման համար: Սահմանադրական պատասխանատվության վերականգնողական գործառույթի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն կապված է ոչ թե նյութական վնասի փոխհատուցման հետ, ինչպես քաղաքացիական իրավունքում, այլ ոչ իրավաչափ վարքագծի վերացման, իրավական պատշաճ վիճակի վերականգնման, սահմանադրական իրավունքների և ազատությունների իրականացման, սահմանադրական պարտականությունների կատարման, պետական իշխանության մարմինների նորմալ գործունեության ապահովման հետ: Սահմանադրական պատասխանատվության վերականգնողական գործառույթը կոչված է ապահովելու քաղաքական հանգստություն, հավասարակշռություն և կայունություն հասարակության և պետության մեջ:

Սահմանադրական պատասխանատվությունը նպատակաուղղված է տարբեր մարմինների միջև ընթացող ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված հարա-

բերությունների կարգավորմանը, պետության սահմանադրական կարգի հիմունքների, մարդու և քաղաքացու խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

Սահմանադրական պատասխանատվության դաստիարակիչ գործառույթն ուղղված է իրավահարաբերությունների սուբյեկտների իրավագիտակցության և իրավական մշակույթի, մասնավորապես՝ սահմանադրական մշակույթի մակարդակի բարձրացմանը, պաշտոնատար անձանց և քաղաքացիների մոտ Սահմանադրության նկատմամբ հարգանքի ամրապնդմանը, մարդու արժանապատվության, իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների ըմբռնման ձևավորմանը:

Սահմանադրական պատասխանատվության դաստիարակիչ ներգործության հիմնական ուղղություններն են հանրորեն օգտակար արժեքային կողմնորոշումների, Սահմանադրության և օրենքների նկատմամբ հարգանքի, հակաիրավական երևույթների նկատմամբ անհանդուրժողականության արմատավորումը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, պետական ու համայնքային ծառայողների մոտ պատշաճ իրավագիտակցության ձևավորումը:

Այսպիսով, սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ գործառույթը կանխորոշում է օրենսդրի գործունեությունը՝ սահմանելու սահմանադրաիրավական սանկցիաներ՝ դրանով իսկ նպաստելով սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի զարգացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Սահմանադրական պատասխանատվության կարգավորիչ, պահպանիչ, վերականգնողական, կանխիչ, դաստիարակիչ գործառույթները իրավաբանական պատասխանատվության համապատասխան գործառույթների դրսևորումն են սահմանադրական իրավահարաբերությունների ոլորտում, իսկ իրավաբանական պատասխանատվության գործառույթներն իրենց հերթին համապատասխանում են իրավունքի գործառույթներին: Այսպիսով, սահմանադրական պատասխանատվության բոլոր գործառույթները միասին նպաստում են սահմանադրական պատասխանատվության նպատակների, այն է՝ բարձրագույն արժեքների՝ մարդու, նրա արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, պետության ինքնիշխանության, ժողովրդավարության, իշխանության բաժանման, մի խոսքով՝ սահմանադրական կարգի կարևորագույն տարրերի, սահմանադրական օրինականության և իրավակարգի ապահովմանը:

## ՉՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Философская энциклопедия. Т. 5. с.459.
2. **Базылев Б.Т.**, Цели и функции юридической ответственности // Вопросы теории права и государственного строительства. Томск, "Изд-во Томского ун-та", 1978. с.29.
3. **Галаган И. А.**, Административная ответственность в СССР. Воронеж, "Изд-во Воронежского ун-та", 1970. с.137.
4. **Чирков А.П.**, Ответственность в системе законодательства: Автореф: дисс. к.ю.н., М., 1989. с.11-12.
5. **Сиротин А.С.**, Юридическая ответственность по советскому праву // Проблемы ответственности и наказания в советском праве: Сб. науч. тр. М., "ВЮЗИ", 1990. с.16.
6. **Радько Т. Н.**, Основные функции социалистического права. Волгоград. 1970. с. 23.
7. **Витрук Н.В.**, Конституционное правосудие в России (1991-2001 гг.): Очерки теории и практики. М., 2001. с.441-442.
8. **Алексеев С.С.**, Механизм правового регулирования в социалистическом государстве. М., 1966. с. 151.
9. **Лейст О. Э.**, Санкции и ответственность по советскому праву. М., 1981. с. 227.
10. Теория государства и права. Курс лекций. Под ред. **Н.И. Матузова и А.В. Малько**. М., 1997. с. 542.
11. **Авакьян С.А.**, Государственно-правовая ответственность // Советское государство и право. 1975. N10. с.18.
12. **Хачатуров Р.Л., Ягудян Р.Г.**, Юридическая ответственность. Тольятти, 1995. с.195-196.
13. **Матузов Н.И.**, Права человека и общерегулятивные правоотношения // Правоведение. 1996. N 3. с. 43.
14. **Витрук Н.В.**, Проблемы правовой ответственности государства, его органов и служащих ("Круглый стол" журнала "Государство и право") // Государство и право. 2000. N 3. с.21.
15. **Зражевская Т.Д.**, Проблемы правовой ответственности государства, его органов и служащих ("Круглый стол" журнала "Государство и право") // Государство и право. 2000. N 3. с. 26.
16. **Зражевская Т.Д.**, Реализация конституционного законодательства. Проблемы теории и практики. Воронеж, 1999. с.181.
17. **Назаров Д. И., Назарова И. С.**, Ответственность в конституционном праве // Конституционное и муниципальное право. 2000. N1. с.16.
18. **Барциц И. Н.**, Федеративная ответственность. Конституционно-правовые аспекты. М., 1999. с. 11.
19. **Кондрашев А.А.**, Конституционно-правовая ответственность субъектов федерации: вопросы теории и проблемы реализации // Журнал российского права. 2002. N2. с. 30.

**RUZANNA HAKOBYAN**

*Rector of Gavar State University,  
Doctor of Law*

## **THE AIMS AND FUNCTION OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY**

Abstract. The article concerns the aims and functions of constitutional responsibility. There the objectives of constitutional responsibility are discovered, they are the protection of rights of constitutional and legal relations parties, providence of effective activity of state power institutions, affirmation of constitutional course of action and its legality.

The following analyzed: the regulative, protective, rehabilitative, preventive, and improving functions of constitutional responsibility. The author reasonably states the close relationship between aims of constitutional responsibility.



**ՍԱՐԳԻՍ ԵՐԻՑՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ*

**ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ՓՈԽԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մարդու և քաղաքացու իրավունքներն առաջին անգամ իրավական ամրագրում են ստացել 1789 թվականին «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» ֆրանսիական հռչակագրում: Ֆրանսիական հռչակագրի ընդունումից հետո մարդու իրավունքները տեղ գտան գրեթե բոլոր առաջադեմ և զարգացած երկրների սահմանադրություններում (հետագայում՝ միջազգային իրավական փաստաթղթերում): «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» փաստաթուղթը հռչակում էր մարդու կյանքի, ազատության, անվտանգության, սեփականության, ֆիզիկական, հոգևոր անվտանգության, անձեռնմխելիության, արժանապատվության, անձնական, ընտանեկան այլ իրավունքներ [1, շ.12-28]: Ժամ-ժակ Ռուսոն քաղաքացիությունը դիտարկում էր որոշակի մարդկանց անդամության դրսևորում հասարակությանը, որը նրան իրավունք է տալիս մասնակցել իշխանությունների ձևավորմանը: Հաշվի առնելով ժամանակի իրողությունները՝ Եվրոպան, որպես խոշոր տնտեսական, քաղաքական միավոր, տնտեսապես ձգում էր մարդկանց հոսքերի մեծ քարավաններ, առաջացնելով էթնոկրոնական զանգվածներ, որոնք աստիճանաբար ձգտում էին դերակատարում ունենալ տարբեր երկրների հասարակական, քաղաքական կյանքում: Հետևաբար, պետք էր որոշ կարևորագույն քաղաքական իրավունքներ տրամադրել միայն քաղաքացիներին, իսկ օտարերկրյա քաղաքացիներին, ըստ նրանց մեկնման նպատակի, սկսեցին տրամադրել կեցության կարգավիճակ՝ առանձին իրավունքներով և պարտականություններով: Միգրանտներին տրամադրվում էին հիմնականում սոցիալական բնույթի իրավունքներ, քանի որ նրանց առաջնային անհրաժեշտ էր կեցության սոցիալ-տնտեսական երաշխիքներ:

Ժամանակակից իրավահարաբերություններում շատ հարցեր՝ կապված քաղաքացու իրավունքների և պարտականությունների հետ, արտացոլվելով միջազգային իրավունքում՝ ուղղորդիչ դեր են կատարում պետությունների համար և կազմելով տվյալ երկրի ներպետական իրավունքի բաղկացուցիչը՝ արդյունավետ ձևով կիրառվում և պաշտպանվում են դատական համակարգերի միջոցով: Այդ իրավական փաստաթղթերը կարող են գործել ինչպես առանձին վավերացվելով և

մաս կազմելով ներպետական իրավական համակարգին, այնպես էլ տրանսֆորմացվելով կամ ուղղակի նախատեսվելով օրենսդրությունում: Ի դեպ, միջազգային իրավունքը հստակ սահմանում է, որ պետությունները, իրենց օրենսդրությամբ, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները պետք է ներառեն անձի և քաղաքացու միջազգայնորեն ընդունված իրավունքները: Օրենսդրությունը չպետք է հակասի միջազգային իրավական հիմնական սկզբունքներին [2, c.120-141.]:

Չնայած այս սկզբունքների հռչակմանը՝ դրա արդյունավետ կիրառումը կախված է տվյալ երկրի իրավական (քաղաքական, ժողովրդավարական ինստիտուտների) համակարգի կայացվածությունից և կենսունակությունից, ինչպես նաև պրակտիկայում առկա մարդու իրավունքների նկատմամբ մոտեցումներից [3, c. 43-57]:

Եթե դիտարկենք քաղաքացիության իրավական բովանդակությունը, բնականաբար քաղաքացին պետության կողմից ստանում է ամենամեծ սոցիալ-տնտեսական քաղաքական երաշխիքները, քանի որ իր իրավունքներից ելնելով՝ քաղաքացին ունի որոշակի պարտավորություններ, որոնք չունեն այլ կարգավիճակ ունեցող անձինք:

Երկքաղաքացիները կամ երկու և ավելի քաղաքացիություն ունեցող անձինք բոլոր երկրների հանդեպ ունեն օրենքով կամ երկրների միջև կնքված համաձայնագրերով սահմանված իրավունքներ և պարտականություններ: Միջազգային պրակտիկայում հաճախ հանդիպում ենք «հպատակություն» տերմինը, որը զարգացած ժողովրդավարական երկրներում «քաղաքացի» տերմինի հոմանիշն է, իսկ օրինակ արաբական երկրներում՝ ոչ: Նիդերլանդներում գահի հպատակը ոչնչով չի տարբերվում Գերմանիայի քաղաքացուց, իսկ Սաուդյան Արաբիայում գահի հպատակը պարտավոր է նվիրվել և անկեղծ ծառայել գահին՝ պահպանելով որոշակի բարոյական նորմեր, որոնց խախտման դեպքում կարող է պատժվել:

Միգրացիոն գործընթացների հետ առնչվում է նաև անձանց քաղաքացիության ընդունման մասը: Հատկապես արևմտյան երկրներում դա իրականացվում է նատուրալիզացման մեթոդով: Միջազգային իրավունքում ընդունված են նաև քաղաքացիության ընդունման հողի և արյան սկզբունքները: Նատուրալիզացումը մեծ տարածում է գտել աշխարհում՝ քաղաքացիության ընդունող երկրում սեփական շահը վերագտնելու համար: Այդ գործողությունները նախատեսված են սովորաբար օրենսդրությամբ, դրանք են՝ անուսնությունները, որդեգրումները, կամ ուղղակի հայցադիմումը երկրի ղեկավարին (ԱՄՆ-ում դատարանին): Այս դեպքում անձն որոշ ժամանակ պետք է բնակվի այդ երկրում (ոչ մի հակաիրավական գործողություն չծավալի), այնուհետև իրավունք ստանա քաղաքացիություն ձեռք բերելու:

Միջազգային իրավունքում հայտնի է քաղաքացիության փոփոխման, օպտացիայի ինստիտուտը, որը կիրառվում է որոշակի տարածք մի պետությունից մյուսին փոխանցման դեպքում կամ միջազգային

իրավունքի սկզբունքներին համապատասխան անկախության հռչակման դեպքում: Անձը կարող է նաև վերականգնել իր քաղաքացիությունը, որը վերաբերում է նախկինում տվյալ պետության քաղաքացիություն ունեցող անձանց [4, Ը. 18-56]:

Այս հիմնական սոցիալ-տնտեսական իրավունքները դիտարկելով՝ կարելի է եզրակացնել, որ որոշ բացառություններով պետությունները ուշադրություն են դարձնում քաղաքացիների և օտարերկրացիների իրավունքներին, նրանց գործունեությանը, սոցիալական պաշտպանվածության խնդրին:

Քաղաքացիներն անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, արտոնությունները և պարտականությունները: Քաղաքացի է համարվում այն անձը, ով օրենքով սահմանված կարգով ձեռք է բերել քաղաքացիություն [5, Ը.118-126]:

Քաղաքացիության ինստիտուտին զուգահեռ XX դարում ստեղծվեց երկքաղաքացիության ինստիտուտը, որը պետությունների քաղաքական իրավական ինտեգրման, միգրացիոն շարժերի կանոնակարգման գաղափարի արդյունքն է [6, Ը.173-174]:

Երկքաղաքացիություն սահմանել են հիմնականում այն երկրները, որոնք սփյուռք ունեն: Օրինակ՝ Իսրայելը, Իսպանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ռուսաստանի Դաշնությունը, Թուրքմենստանը, Տաջիկստանը և այլն:

Աշխարհում միանշանակ չի ընդունվում երկքաղաքացիության ինստիտուտը, քանի որ պետություններն ունենում են ընթացակարգային բազմաթիվ խնդիրներ կապված նրանից, թե ինչ ծավալի խնդիրներ են լուծում այդ ինստիտուտով: Պետությունների մեծ մասը խնդիր ունի երկրի տարածքից դուրս ապրող հայրենակիցներին առավել մոտեցնելու մայր հայրենիքին, հիմք ստեղծել նրանց տնտեսական գործունեության համար: Երկքաղաքացիությունը կարող է դիտարկվել նաև, որպես տնտեսական զարգացման ռազմավարության մաս:

Երկքաղաքացիության ընկալման հետ կապված աշխարհում այժմ ավելի բարենպաստ իրադրություն է: Պետությունների գլոբալ ինտեգրման պայմաններում, հիմք ունենալով հատկապես Լատինական Ամերիկայի երկրների փորձը երկքաղաքացիությունը դիտարկվում է պետությունների հասարակությունների ինտեգրման, իրավական համակարգերի ներդաշնակեցման միջոցներից մեկը:

Երկքաղաքացիության հիմնական միջազգային իրավական փաստաթուղթը 1930 թվականի «Քաղաքացիության օրենքների ընդհարումների շուրջ կոնկրետ հարցերի մասին» Յապոնիայի համաձայնագիրն է: Երբ ընդունվեց փաստաթուղթը, երկքաղաքացիության ինստիտուտը, որպես այդպիսին գոյություն չուներ, սակայն այդ փաստաթուղթն առաջին անգամ նախատեսեց մարդու մեկից ավելի պետու-

յան քաղաքացի լինելու իրավունքը: Ըստ Ամերիկայի Միացյալ Նահանգների անձնակազմի կառավարման վարչության 2001 թվականի հաշվետվության տվյալների երկքաղաքացիության ինստիտուտը լիովին կամ մասնակի գործում է աշխարհի 53 երկրում [7]:

Երկքաղաքացիության ինստիտուտը տարբեր երկրներում իրավական բովանդակությամբ տարբեր կերպ է արտացոլված. կնքվում են միջպետական պայմանագրեր, որտեղ մանրակրկիտ անդրադառնում են և՛ պետությունների, և՛ քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների ծավալին: Միջպետական պայմանագրերով կարգավորվում են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ պարտադիր զինվորական ծառայությունը, ընտրական իրավունքը, որոշակի հաստատագրված հարկեր, տուրքեր մուծելու իրավունքը: Երկրների մեծ մասը թույլատրում է այն երկրների քաղաքացիներին ընդունել երկքաղաքացիություն, որ երկրի հետ գոյություն ունի գործող միջպետական պայմանագիր: Օրինակ՝ Իսպանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, ՌԴ-ում, Տաջիկստանում, Մոլդովայում:

Ընդհանրապես գործում է երկքաղաքացիության ինստիտուտի մի քանի տեսակ: Այդ ինստիտուտների նպատակը նույնն է, սակայն խնդիրների լուծման ճանապարհները տարբեր:

Գործում է տարբերակ, երբ երկքաղաքացիությունը չի ընդունվում տվյալ երկրի տարածքում, սակայն պետությունը թույլատրում է իր քաղաքացիներին այլ երկրներում ընդունել քաղաքացիություն: Այս տարբերակով են առաջնորդվում Շվեյցարիան, Յունաստանը, Խորվաթիան, Սլովենիան:

Մեկ այլ դեպքում պետությունը երկքաղաքացիությունը ճանաչում է իր պետության տարածքը հարկադիր լքած և օտարերկրյա պետություններում բնակվող իր քաղաքացիների համար: Օրինակ՝ Ղազախստանը թույլատրում է իր նախկին քաղաքացիներին վերականգնելու քաղաքացիությունը: Այս ձևն առանձնահատուկ է նրանով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո խնդիր էր դրված վերականգնել կապը ԱՊՀ տարածքով սփռված նախկին հայրենակիցների հետ:

Նոր և առանձնահատուկ մոդել է Լիտվայի և Ուզբեկստանի կիրառած տարբերակը, երբ հայրենակիցը երկքաղաքացիության կարգավիճակ կարող է ձեռք բերել միայն տվյալ երկրին մատուցած բացառիկ ծառայությունների համար: Ուզբեկստանի դեպքում կարող է տրամադրվել, երբ նաև հայրը, մայրը, տատը կամ պապը բացառիկ ծառայություններ ունեն պետության առջև [8, c.139-157]:

ՀՀ Սահմանադրության՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով մեզ մոտ ևս թույլատրվում է ընդունել երկքաղաքացիությունը: Մինչև Սահմանադրության փոփոխությունները Հայաստանում արգելվում էր երկքաղաքացիությունը: Երկքաղաքացիության ինստիտուտի ներդրումը մեզ մոտ ավելի շատ քաղաքական նպատակներ ունի, բայց որպես ինստիտուտ մեզ համար նոր է, չուսումնասիր-

ված, հետևաբար իրավական շատ կանոններ, խնդիրներ դեռևս ուսումնասիրության կարիք ունեն:

ԽՍՀՄ փլուզումից հետո մենք հնարավորություն ստացանք առավել անկաշկանդ հարաբերվել սփյուռքի հետ (հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԽՍՀՄ օրենսդրությունն արգելում էր երկքաղաքացիությունը): Հայաստան-Արցախ-Սփյուռք փոխգործակցությունը տարեցտարի առաջադրում է նորանոր խնդիրներ, որն էլ, բնականաբար, հանգեցնում է մոտեցումների անընդհատ փոփոխության: ՀՀ-ն երկքաղաքացիության ինստիտուտի հիմնադրմամբ առաջին հերթին կատարում է բարոյական քայլ՝ հնարավորություն տալով աշխարհասփյուռ հայերին օգտվել մայր հայրենիքի դիվանագիտական պաշտպանությունից, իսկ այլ երկրներ մշտական բնակության մեկնող ՀՀ քաղաքացիներին՝ չկորցնել քաղաքացիությունը և կապ պահպանել մայր հայրենիքի հետ: Երկքաղաքացիությունը հնարավորություն է տալիս տնտեսական գործունեության ծավալման, ներդրումների ներգրավման: Երկքաղաքացիությունը կարող է լուծել սփյուռքում հայապահպանության հետ կապված խնդիրներ: ՀՀ քաղաքացիները մեկնելով արտերկիր համոզված են մեծ մասամբ ցանկություն չունեն կորցնելու ՀՀ քաղաքացիությունը և եթե երկքաղաքացիության ուժով հնարավորություն տրվի նրանց պահպանել ՀՀ քաղաքացիներին համահավասար որոշ իրավունքներ, ապա նրանց և մայր հայրենիքի միջև կապը չի կտրվի, ավելին՝ այսպես կոչված «նոր սփյուռքը» կխթանի սփյուռքի մայր հայրենիքին ինտեգրման գործընթացը:

Երկքաղաքացիության ինստիտուտը դրական, առաջընթաց գործոնների հետ միասին իր մեջ ներառում է խնդիրներ, որն իր լուծումը չգտնելու դեպքում կարող է վտանգներ պարունակել ոչ միայն ուղղակի ազգային անվտանգության շահերի, այլև հենց քաղաքացու կամ երկքաղաքացու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Նախքան երկքաղաքացիության հարցերը կարգավորող օրենք ընդունելը, պետք է հաշվի առնել միջազգային առկա փորձը, այն երկրների համապատասխան օրենքները, որտեղ գործում են հայկական համայնքներ:

«Երկքաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ընդունումը պիտի հստակ կարգավորի նախ, թե ովքեր երկքաղաքացի դառնալու իրավունք ունեն: Մեր կարծիքով որևէ սահմանափակում ըստ համայնքների պատմական ձևավորման, նրա թվաքանակի առաջնահերթության չպետք է լինի: Երկքաղաքացիություն կարող են ստանալ սփյուռքում բնակվող բոլոր ազգությամբ հայերը (ազգությամբ հայ պետք է ճանաչել նաև այն անձանց, ովքեր կիսով չափ հայրական կամ մայրական կողմից հայ են): Երեխաները մինչև տասնութ տարին լրանալը կարող են երկքաղաքացիություն ձեռք բերել միայն ծնողների համաձայնության դեպքում [jussanqinis] [9.p.463]: Այս սկզբունքը կիրառվում է Իսրայելում, Հունաստանում, Իռլանդիայում, Գերմանիայում:

Երկքաղաքացիներին պետք է տրամադրել անարգել երկիր մուտք գործելու, բնակվելու, աշխատելու իրավունք: Բազմաթիվ վեճեր կան հո-

դի սեփականության իրավունքի հետ կապված, արդյոք երկքաղաքացիներին հողի նկատմամբ սեփականության իրավունք պետք է տրամադրել, թե՛ ոչ: Մեր մոտեցմամբ հողի սեփականության իրավունք նրանց կարելի է տրամադրել միայն կենցաղային խնդիրների լուծման համար:

Երկքաղաքացիներին պետք է տրամադրել ՀՀ քաղաքացիներին համահավասար դիվանագիտական պաշտպանության իրավունք: Խնդիրներ կարող են առաջանալ, երբ երկքաղաքացին պաշտպանության դիմի իր քաղաքացիության երկրներից մեկին մյուսի դեմ, որը կարող է դիվանագիտական բարդություններ առաջացնել կամ այլ երկրների կողմից տվյալ երկրի ներքին գործերին միջամտելու փորձ դիտվել: «Քաղաքացիության օրենքների ընդհարումների շուրջ կոնկրետ հարցերի մասին» Հասագայի 1930 թվականի կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն երկքաղաքացիություն ունեցող անձը չի կարող դիմել իր քաղաքացիության երկրներից մեկին մյուս երկրից պաշտպանություն գտնելու համար, իսկ մյուս երկրները պիտի հաշվի նստեն երկքաղաքացիության փաստի հետ: Այս նորմը թույլ է տալիս նաև խուսափել միջազգային իրավական կոլիզիաներից: Երկքաղաքացիներին տրամադրված իրավունքներից զատ նրանք պետք է ունենան որոշակի պարտավորություններ երկքաղաքացիության ձեռքբերման հետ կապված: Մեր կարծիքով երկքաղաքացին պարտավոր է իր կարգավիճակը ձեռք բերելիս վճարել պետական տուրք (բոլոր երկրներում կա նման պրակտիկա), իսկ այն պահպանելու համար երկու տարվա ընթացքում նվազագույնը մեկ շաբաթ լինել հայրենիքում: Այս պարտավորությունը կարճնացնի հոգևոր կապը հայրենիքի հետ :

Երկքաղաքացիների իրավունքները իրավացիորեն մեծ մասամբ սահմանափակվում են ընտրական իրավունքի հետ կապված: Ընտրական իրավունքի սահմանափակումը կապվում է պետությունների **ներքին գործերին չմիջամտելու** միջազգային իրավական սկզբունքի հետ, բացի այդ փոքր պետություններն ընտրական իրավունքի սահմանափակման միջոցով ներքին քաղաքական կայունության խնդիր են լուծում[10, էջ 91-93]:

Երկքաղաքացու համար կարելի է սահմանել հինգ տարի ՀՀ-ում մշտական բնակության ժամանակ ընտրական իրավունք ձեռք բերելու համար կամ միջպետական պայմանագրով նախատեսված հնարավորության դեպքում երկու տարի պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն ՀՀ զինված ուժերում (հաշվի առնելով սփյուռքահայերի սովորության տարբերությունները կարելի է ստեղծել հատուկ զինված միավորումներ նրանց համար): Երկքաղաքացիության երկրորդ՝ առավել արժարժող և վիճահարույց խնդիրներից մեկն էլ ժամկետային զինծառայության խնդիրն է: Քաղաքացու զինվորական ծառայության հարցերը հիմնականում կարգավորվում են միջպետական պայմանագրերով: Ցանկալի է, որ զինապարտության հարցերը կարգավորվեն և՛ օրենքով, և՛ միջպետական կնքվելիք պայմանագրերով: Պայմանագրով պիտի կարգավորել նաև պատերազմական իրավիճակներում երկ-

քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես երրորդ երկրի կողմից հարձակման ենթարկվելու, այնպես էլ միմյանց միջև ռազմական գործողությունների դեպքում: Այլապես կողմերից մեկի զինված ուժերում երկքաղաքացու մարտական ծառայությունը կարող է դիտվել, որպես հայրենիքի դավաճանություն և քրեորեն հետապնդվել: Կամ մասնակի և համընդհանուր զորահավաքներին երկքաղաքացու չներկայանալը կարող է դիտվել, որպես դասալքություն [11, p. 438-450]:

Այսպիսով առկա խնդիրները կապված երկքաղաքացիության ներդրման, կիրառման հետ, ունեն իրենց իրավաբանական մեկնաբանությունները: Պետք է հաշվի առնել այլ երկրների տնտեսական և քաղաքական հնարավոր շահերը: Բոլոր խնդրահարույց հարցերը կապված զինապարտության, որոշակի հարկեր մուծելու, ընտրական իրավունքի հետ պարտադիր պետք է կարգավորել միջպետական պայմանագրերով, որովհետև գործ ունենք քաղաքացիների իրավունքների հետ:

Կարելի է փաստել, որ երկքաղաքացիության ինստիտուտի ներդրումը ոչ միայն պետություններում ժողովրդագրական խնդիրներ լուծելու, ներդրումներ ներգրավելու, միջպետական հարաբերություններում քաղաքական, տնտեսական խնդիրներ լուծելու միջոց է, այլ ամենից առաջ բնակչության տեղաշարժերի քաղաքակիրթ կազմակերպման և վերահսկման ձև:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Лукашева Е.А.**, Права Человека. М. 2004.
2. **Авдеенкова М.П.**, Дмитриев Ю.А., Основы Теории Конституционного Права, М., 2005.
3. **Desjarlais R., Eisenberg L.L.**, World mental health: Problems and priorities in low income countries.: Oxford University Press. 1995. P. 37-43.
4. **Авакян С.А.**, Россия: Гражданство, иностранцы, внешняя миграция. Санкт-Петербург, 2003.
5. **Чумаков А.Н.**, Глобализация, контуры целостного мира, М. 2005.
6. **Lukashuk I.I.**, Globalization, State, Law, XXI Century Moscow, 2000.
7. OPM 2001 "Citizenship Laws of the World" United States Office of Personnel Management, Investigations Service. <http://www.opm.gov/extra/investigate/IS-01.pdf>.
8. **Тухомиров Ю.А., Пиголкин А.С.**, Глобализация и Развитие Законодательство, Москва, 2004.
9. **Gustafson P.**, "Globalization, Multiculturalizm and Individualizm: The Swedish Debate on Dual Citizenship," Journal of Ethnic and Migration Studies, Vol.28. No.3. New-York, 2002, p. 43-51.
10. **Քնչարյան Վ.**, Միջազգային իրավունք , Երևան, 2002թ:
11. **Hammar Tomas**, "Dual Citizenship and Political Integration" International Migration Review, Vol.19, No. 3. Special Issue: Civil Rights and the Sociopolitical Participation of Migrants. 1985, p.11-17



**Sargis Yeritsyan**

*Post-graduate Student of the  
Public Administration Academy  
of the Republic of Armenia*

**ADOPTING AND ADAPTING THE INTERNATIONAL LEGAL  
EXPERIENCE OF DUAL CITIZENSHIP INSTITUTES IN THE RA**

The first part of this scientific article is devoted to the institute of the citizenship and to its international, judicial and interstate problems. Analysis of international judicial documents connected with the institute of the citizenship and research of socio-economic rights as well as the right to work are realized. The analysis of the dual citizenship has been completed on the correlation of the citizenship and law. The international judicial sources of the dual citizenship institute have been pointed out. The contents of the rights of dual citizens have been subjected to a scientific analysis. The international judicial practice was analyzed according to its possible application in the Republic of Armenia.

## ՏՆՈՒՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (Կառավարում)

**ԲԵՆԻԱՄԻՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

*ՀՀ ՖԷՆ ՏՀԻ փոխտնօրեն,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*

**ԱՐԱ ԳՅՈՒՐՅԱՆ**

*Հայաստանի Հանրապետության Նախագահի  
աշխատակազմի ղեկավարի տեղակալ,  
տնտեսագիտության թեկնածու*

### **ԳԻՏԱԿՑՎԱԾ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ**

Բնությունը մարդուն օժտելով բարձրագույն շնորհով՝ գիտակցված վճիռներ ընդունելու և գործելու կարողությամբ, նրան հնարավորություն է ընձեռել ընկալել շրջակա միջավայրը և դրանում առկա երևույթները, վերլուծել և ճանաչել տեղի ունեցող փոփոխությունները, համեմատել ու գնահատել դրանք: Դա հիմք է դարձել մտածված, այսինքն՝ մարդու կողմից նպատակադրված և գիտակցված գործողություններ կատարելու, ապա նաև, որպես դրանց միատեղում, շարունակական գործունեություն իրականացնելու, վերջինի արդյունքներն իր պահանջմունքների բավարարմանը ծառայեցնելու համար:

Գործունեություն իրականացնելու այս կարողության, առավել ևս դրա ստեղծագործական տարրի, լայն օգտագործումն էր, որ օգնել է մարդկությանը շարունակաբար զարգանալ, ձևավորել բարձր մակարդակի մեթոդային քաղաքակրթությունը: Անկասկած է, որ այս գործընթացը շարունակվելու է նաև հետագայում, քանի որ անհամեմատ աճել է նաև մարդ-էակի գիտակցված գործելու կարողությունը: Մարդկությունը կհասնի զարգացման բարձր մակարդակի, եթե, իհարկե, մարդու կամքից անկախ, անկանխատեսելի կամ անհաղթահարելի հանգամանքներ, այդ թվում նաև հենց մարդկային գործունեությամբ պայմանավորված պատճառներ չխաթարեն այդ գործընթացը:

Եթե մարդկային հասարակության անշեղ զարգացման հիմքը մարդու գիտակցված գործունեությունն է, որն իրողություն է դառնում մարդու մտածելու և ստեղծագործաբար գործելու ընդունակության շնորհիվ, ապա հետագա զարգացումն ապահովելու համար ամենից առաջ պահանջվում է ըստ ամենայնի աջակցել այդ ընդունակության զարգացմանը և դրա հիմքի վրա ձևավորված կարողության հնարավոր

լրիվ օգտագործմանը: Որքան մեծ է այդ կարողությունը և բարձր է դրա օգտագործման աստիճանը, այնքան համապատասխանաբար մեծ կլինի նաև մարդկության հետագա զարգացման ինտենսիվությունն ու մասշտաբը:

Այս եզրակացությունն իրական է ինչպես ողջ մարդկության, այնպես և նրա առանձին հատվածների համար: Ավելին, այն մեծապես կարևորվում է զարգացման այժմյան հետինդոլուստրիալ փուլում, երբ մարդկության առաջընթացն ուղղակիորեն կախված է գործունեության գիտելիքային հենքի որակից, այսինքն՝ մտավոր կապիտալի մասշտաբից, հետևաբար և այդ ոլորտներում կատարվող ներդրումների ծավալից և արդյունավետության մակարդակից: Ասվածից հետևում է, որ *հասարակության զարգացման քաղաքականությունում, դրա հեռանկարային կանխատեսումներում, պլաններում և ծրագրերում կարևոր ռազմավարական ուղղություն պետք է համարվի մարդուն շնորհված այդ առավելության՝ ստեղծագործաբար գործելու կարողության նպատակային ձևավորմանը, ինտենսիվ զարգացմանը և արդյունավետ օգտագործմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրագործումը:*

Հասարակության զարգացումը հիմնականում մարդկային ստեղծագործական գործունեությամբ պայմանավորված լինելու հանգամանքը հուշում է նաև, որ այդ զարգացումը հետագայում ապահովելու տեսանկյունից աշխատանք իրականացնող *մարդու կարևորագույն բնութագիր պետք է համարվի իր աշխատանքը ստեղծագործաբար կատարելու համար անհրաժեշտ կարողության առկայությունը և այն բազմակողմ ու լիարժեք օգտագործելու ցանկությունը:*

Ինչպես ողջ մարդկության, այնպես և դրա ցանկացած առանձին հատվածի համար առաջնային համարվող նպատակի իրագործումը՝ հասարակության հետագա շարունակական և ինտենսիվ զարգացման ապահովումը, ինչպես պարզորոշ հետևում է վերը ներկայացված դատողություններից, մեծապես պայմանավորված է հասարակության անդամների մոտ գիտակցված գործելու կարողության մակարդակով և այն հասարակության պահանջումների բավարարմանն ուղղված գործունեություններում լիարժեք օգտագործելու աստիճանով: Դրանով իսկ այդ խնդիրների գիտագործնական բարձր հիմնավորվածություն ունեցող և տվյալ հասարակության ու դրա զարգացման փուլի առանձնահատկություններին ադեկվատ լուծումների մշակումը, փորձարկումը և կիրառությունը պետք է համարվի մարդկային գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը:

Այդ լուծումներում հաշվի պետք է առնվեն ժամանակի տարբեր հատվածներում և հասարակության տարբեր սուբյեկտների մոտ գիտակցված գործունեություն իրականացնելու հնարավորությունների զգալի տարբերությունները: Վերջինը պայմանավորված կարող է լինել ինչպես բնածին ընդունակությունների տարբերություններով, այդ ընդունակությունները գործելու կարողության վերածելու գործընթացների /դաստիարակություն, կրթություն, ինքնազարգացում և այլն/ նպա-

տակայնությունով և արդյունավետության մակարդակով, այնպես և ձևավորված կարողությունները կիրառելու հնարավորություններով, դրա նկատմամբ հասարակությունում առկա պահանջարկով:

Այս հանգամանքը, մի կողմից, պահանջում է մարդկային գիտակցված գործունեություն իրականացնելու կարողության ձևավորման և օգտագործման ընդհանրական գիտամեթոդական և կազմակերպական սկզբունքների մշակում և կիրառություն: Մյուս կողմից, անհրաժեշտ է դարձնում մշակված սկզբունքների օգտագործումը նաև հասարակության առանձին սուբյեկտների կամ դրանց խմբերի համար՝ ստացված լուծումների կիրառությունը հնարավորինս հասցեական դարձնելու համար: Նկատի պետք է առնվի նաև դիտարկվող /ծրագրավորող/ ժամանակահատվածում ձևավորվող կարողության նկատմամբ հասարակության պահանջարկը: Այսինքն՝ պետք է կատարվի այդ պահանջարկի գործնականորեն հավաստի կանխատեսում, ընդ որում՝ դիֆերենցված ըստ գործունեության ուղղությունների:

Այս ամենը, նկատի ունենալով մարդկային գիտելիքահենք գործունեության պարադիգմի իրականացման և դրան ադեկվատ պայմանների ստեղծման անհրաժեշտությունը, նպատակահարմար է դարձնում մարդու ստեղծագործական գործունեություն իրականացնելու կարողության ձևավորման և արդյունավետ օգտագործման ամբողջական համակարգի ստեղծումը երկրում, ներառելով դրա տեսագործնական հիմքերի մշակումը, կազմակերպական ձևավորումը, շարունակական գործունեությունը, նպատակային կառավարումը: Դա կպահանջի պետական համապատասխան քաղաքականության ձևավորում և կյանքում կիրառում՝ կոնտրոլինգի սկզբունքների օգտագործումով:

Համակարգում, դրա արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակադրումով, պետք է մշակվեն և առանձին ենթահամակարգ-շտեմարանի ձևով ներկայացված լինեն գիտակցված գործունեություն իրականացնելու բարձր կարողություն ձևավորվելուն ծառայող գիտելիքային հիմքերը, այդ թվում՝ հիմնարար սկզբունքները: Ենթահամակարգում ներառված պետք է լինեն նաև դրանց էության միանշանակ մեկնաբանությունները, ձևավորման հիմքերը և մոտեցումները, կիրառման դեպքերը և մանրամասնեցված մեթոդական ցուցումները, ոլորտների և պայմանների նկարագրերը: Դրանցից յուրաքանչյուրի բազմակողմ հետազոտությունը և կիրառման ազդեցության հաշվառումը, ինչը, կարծում ենք, մեծածավալ գիտագործնական աշխատանքի իրականացում է ենթադրում, մեծապես կնպաստի մարդ-կենդանակերպին պարզևկված մեծագույն շնորհի՝ մտածելու ընդունակության էության և օգտակարության ճիշտ ըմբռնմանը, դրա հնարավոր լայն կիրառման միջոցով առավել մեծ ծավալի արդյունքներ ստանալուն ուղղված ճիշտ քայլեր նախատեսելուն և նպատակահարմար ձևով դրանք իրագործելու միջոցառումներ մշակելուն: Դա, վերջին հաշվով, որպես կանոն ծառայելու է ինչպես անհատի, այնպես և մարդկանց այն խմբի

կամ հանրության բարեկեցության ապահովմանը, որում ապրում և գործում է տվյալ անհատը:

Ստորև փորձ է արված ձևակերպել և ընդհանրական ձևով ներկայացնել այդպիսի ուղղվածություն ունեցող մի շարք, կարծում ենք, կարևոր սկզբունքային դատողություններ: Դրանք հիմնականում ուղղված են երևույթի տնտեսական, ուստի և տնտեսագիտական կողմի բացահայտմանն ու բացատրությանը, բայց հիմքում ունեն նաև սոցիալական բնույթի խնդիրներ: Դա կարծում ենք, զարմանալի չէ, քանի որ մարդու ընդունակությունները, որպես երևույթ, առաջին հերթին, կենսաբանական-սոցիալական բնույթ ունեն: Սակայն դրանց հիմքի վրա է ձևավորվում մարդու գիտակցված գործունեության ֆենոմենը, որի կազմում, մեր կարծիքով, խիստ զգալի է երևույթի տնտեսական բաղադրիչը՝ ինչպես իր բովանդակության այնպես և ծավալային առումով: Հնարավոր է, որ ստորև ներկայացվող որոշ դրույթներ վիճահարույց թվան, բայց այդ դեպքում ևս դրանց քննարկումն այստեղ անօգուտ չէ, քանի որ այն նոր հետազոտությունների առիթ կարող է դառնալ, ինչն արդեն ինքնին օգտակար արդյունք է:

1. Մարդկությունը թևակոխել է գիտելիքի ինտենսիվ զարգացման, կյանքի բոլոր ոլորտներում տարբեր ձևերով ներդրման և օգտագործման, մարդկային գործունեությունն ամենուրեք և մշտապես գիտելիքահենք դարձնելու, այսինքն՝ գիտելիքի դարաշրջան: Գիտելիքը կարելի է տարատեսակել տարբեր բնութագրերով: Արժևորման և կիրառման տեսանկյունից կարծում ենք նպատակահարմար է տարանջատել գիտելիքի հետևյալ տարատեսակները.

ա. Շտեմարանված գիտելիք, որպես կենսամիջավայրի, երևույթների, հասկացությունների և կյանքին ու գործունեությանն առնչվող տեսությունների և հետազոտությունների արդյունքների ամբողջություն, որոնք նկարագրված և ներկայացված են գրականությունում, տարատեսակ տեղեկագրքերում, տեղեկատվական բանկերում (այդ թվում նաև համացանցային կայքերում) և այլն: Այն հանդես է գալիս որպես նախկինում ստեղծված կամ ձևավորված գիտելիքների համակարգ, որն ընկալվելու է ինչպես որ կա իր ստեղծված տեսքով, այդ տեսքով էլ կիրառվելու ակնկալիքով:

բ. Մարդկային գիտակցությունում շտեմարանված և պահվող գիտելիք, որը տվյալ անձի գիտելիքի պաշարն է, կարող է նրա կողմից կիրառվել տարբեր պայմաններում և հանգամանքներում, ընդ որում ոչ միայն իր սկզբնական պաշարված տեսքով, այլև ստեղծագործաբար, համապատասխանեցվելով կիրառման պայմաններին կամ իրականացվող գործունեության պահանջներին: Այն առավելապես օգտագործվում է մարդկային աշխատանքային գործունեությունում, այդ թվում ուսուցման կամ փորձի փոխանակման գործընթացներում:

գ. Նյութականացված գիտելիք, որը հանդես է գալիս տեխնիկայի, տեխնոլոգիայի, կազմակերպական և այլ կառուցակարգերի ձևով, որ-

պես նորարարություն կամ նորամուծություն՝ նախկինում ստեղծված գիտելիքի հիման վրա:

դ. Նոր ձևավորվող գիտելիք, որում կարելի է առանձնացնել.

- յուրաքանչյուր զարգացող անհատի կողմից իր փորձի, դիտումների, այլոց փորձի ուսումնասիրության, ինքնուսուցման ու մտորումների միջոցով իր գիտելիքի ավելացում,

- որպես գիտելիքաստեղծ գործունեության արդյունք՝ հենվելով նոր մոտեցման, նոր պատկերացումների, նոր տվյալների ու երևույթների և այլ հետաքրքրություններ կայացնող օբյեկտների շուրջ նոր հետազոտությունների միջոցով ձևավորվող գիտելիք:

Տնտեսության զարգացման համար նախկինում, ներառյալ և ինդուստրիալացման փուլը, առավել կարևորվել է նյութականացված գիտելիքը, որը գիտելիքի այլ տեսակների համեմատությամբ, նաև ավելի առևտրայնացված է եղել: Այժմ այդ գիտելիքի զարգացումը և տարածումը մեծ չափով կախված է նոր ձևավորվող գիտելիքից, որը ստեղծագործաբար մտածող մարդու գործունեության արդյունքում է ստացվում: Ուստի առաջնային է դառնում նաև այդ գիտելիքը ստեղծող սուբյեկտի՝ ստեղծագործող անհատի դերը: Դա իր հերթին անհրաժեշտ է դարձնում մարդու մոտ ստեղծագործելու կարողության զարգացումը և այդ հիմքի վրա մարդու մտավոր կապիտալի ձևավորումը: Այն իրավացիորեն համարվում է հասարակության զարգացման հիմք և կարևորագույն արտադրողական ուժ:

2. Մարդու գիտակցված գործունեության արդյունքները, ինչպես նշեցինք վերը, օգտակար կարող են լինել ոչ միայն այդ գործունեությունն իրականացնող անհատի և նրա մերձավորների, այլև այն հանրության համար, որում ապրում և գործում է տվյալ անհատը: Դա նշանակում է, որ նրա մոտ մտածելու ընդունակության առկայությունը, այն ստեղծագործ գործունեության կարողության վերածելու և արդյունավետ օգտագործելու գործընթացները հետաքրքրություն պետք է ներկայացնեն ոչ միայն այդ անհատի ու նրա մերձավորների համար: Դրանցում մեծապես շահագրգռված պետք է լինի և անհատի կյանքի որոշակի շրջաններում ու պայմաններում դրանց իրականացմանն իր մասնակցությունն ու հնարավոր օժանդակությունը պետք է ցուցաբերի նաև հասարակությունը: Դրա անհրաժեշտությունը, օգտակարությունը և արդարացի լինելը ընդհանրապես, և առավելապես այժմ՝ գիտելիքահենք գործունեության և դրանում մարդկային կապիտալի առաջնայնության պայմաններում, կարծում ենք, կասկած չի կարող հարուցել և պետք է հաստատագրվի օրենսդրորեն: Դրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ այդպիսի մոտեցումը թելադրվում է նաև շուկայական հարաբերությունների գործողությամբ, որի պայմաններում է գտնվում այժմ մարդկային հասարակությունը: Այլ է այն խնդիրը, թե ո՞վ, ե՞րբ, ո՞ւմ, ինչպիսի պայմաններով և ի՞նչ չափով պետք է ցուցաբերի այդ օժանդակությունը: Յուրաքանչյուր հասարակություն

դրա լուծումը գտնելու է բազմապիսի գործոնների և պայմանների, ինչպես նաև այլ երկրների փորձի հաշվառումով, խորը գիտական հետազոտությունների արդյունքում: Այն պետք է դառնա հասարակության, գիտելիքահենք կառավարման մեծ կարևորություն ունեցող ռազմավարական խնդիրներից մեկը, քանի որ ստացված լուծման հիմնավորվածությունից և ճիշտ կիրառությունից զգալի չափով կախված կլինի նաև տվյալ հասարակության զարգացման հեռանկարը:

3. Մտածված գործունեությունն ենթադրում է, որ մարդու կողմից կատարվող ցանկացած առանձին գործողություն, ինչպես նաև դրանց որոշակի համալիրը, գիտակցված պետք է լինի, հենվի արվածը վերլուծաբար գնահատելու, գործողության իրականացման հնարավոր տարբերակներից ընտրություն կատարելու կարողության վրա: Այսինքն՝ մտածված գործունեությունն ենթադրում է նաև *մտածելու կարողության առկայություն*, ինչը դառնում է մարդու՝ որպես կենդանակերպի, և յուրաքանչյուր անհատի կարևորագույն բնութագիրը:

Սակայն, մարդուն ի ծնե տրվում է ոչ թե մտածելու որոշակի կարողություն, այլ այն ձևավորելու հիմք հանդիսացող ընդունակություններ: Եվ կախված վերջինի և այն կարողության վերածելու գործընթացի բնութագրերից, մարդու մեջ աստիճանաբար ձևավորվում է մտածելու և գիտակցված գործելու կարողությունը, իր կոնկրետ ուղղվածությամբ և տարողությամբ: Եթե ընդունակությունը պարզ է, ստացողը դրա ձևավորմանն ըստ էության մասնակից չէ, այն մեծ մասամբ պայմանավորված է նրանից անկախ գործոններով<sup>1</sup>, ապա կարողության ձևավորման վրա ազդող գործոնները շատ ավելի մեծաթիվ են և բազմակողմ: Դրանք թվում, բնածին ընդունակություններից բացի, կարևոր դեր ունեն ընտանեկան դաստիարակությունը, շրջապատի օրինակը և ազդեցությունը, աճող անհատի կյանքի փորձը և գործադրվող ջանքերը:

Բնածին ընդունակությունների ձևավորման, դրանք՝ մտածելու և գիտակցված գործելու մարդկային կարողության վերածելու գործընթացների և ակնկալվելիք արդյունքների վրա, ինչպես նշեցինք, կարող են իրենց ազդեցությունն ունենալ բազմազան գործոններ: Դրանք իրենց էությամբ, ազդեցության ուղղվածությամբ ու չափով, ինչպես նաև նոր ձևավորվող էակի կյանքի տարբեր ժամանակաշրջաններում խիստ տարբեր կարող են լինել: Կարծում ենք, ճիշտ կլինի ազդող գործոններն առանձնացնել հենց այդ ժամանակաշրջանների առանձնահատկությունների հաշվառումով: Էակի ձևավորման յուրահատկությունների տեսանկյունից այդպիսի ժամանակաշրջաններ կարելի է համարել.

- պտղի սաղմնավորում և հղիության (ներարգանդային զարգացման) շրջան,
- ծնունդ ու նորածնի խնամքի շրջան,

<sup>1</sup> Ինչպես պատգամում է պարսիկ մեծ բանաստեղծ Սաադին. «Ծնվում ենք ականա, ապրում ենք զարմանքով, մեռնում՝ կարոտով»:

- մանուկ երեխայի տնային /ընտանեկան/, բակային, նախադպրոցական կյանքի ու դաստիարակության շրջան,
- դպրոցական կրթության և շրջապատի /այդ թվում ընկերական/ հետ շփման ու ազդեցությունների շրջան,
- բանակային կամ այլ ծառայությունների և տարաբնույթ հավաքների ազդեցության շրջան,
- բուհական և հետբուհական կրթության շրջան,
- աշխատանքի, փորձի կուտակման, վերապատրաստման, որակավորման բարձրացման շրջան,
- ինքնակազմակերպում և ինքնուսուցում, շարունակական կրթության այլ ձևեր,
- գիտական մասնագիտացման գիտաստեղծագործական մտածելակերպի ձևավորման, գիտահետազոտական գործունեության շրջան:

Այս շրջափուլերը հիմնականում ժամանակային սահմանազատում ունեն, առնչվում կամ համընկնում են մարդու կյանքի ժամանակահատվածներին: Բայց չի բացառվում նաև դրանցում որոշ գործընթացների /օրինակ՝ ինքնագարգացման, ինքնուսուցման, աշխատանքի կատարման և այլ/ տարածումը մեկից ավելի ժամանակաշրջանների վրա: Սակայն դա, կարծում ենք, զգալի կարևորություն չպետք է ունենա այդ գործընթացների ազդեցությունը նշված կարողության ձևավորման վրա գնահատելու, ինչպես նաև այդ ազդեցությունը կառավարելու արդյունավետ միջոցառումներ մշակելու հարցում: Այս դեպքում, իհարկե, հաշվի պետք է առնվեն նաև տարիքային առանձնահատկությունները:

Թվարկած ժամանակաշրջաններում, ինչպես նշեցինք, որպես կանոն, տարբեր են նաև մտածելու ընդունակության ձևավորման, այն գործելու կարողության վերածելու, վերջինն աշխատանքում կիրառելու գործընթացների վրա ազդող գործոնները: Այսպես, օրինակ, եթե սկզբնավորման շրջանում գերակայում են էմբրիոնի, ապա մանուկի կամ պատանու ծնողներին առնչվող և նրանց միջոցով ազդող գործոնները, ապա հետագայում դրանք համարյա ամբողջությամբ վերաբերում են տվյալ անձին:

Այդ գործոններն, անկախ այն բանից, թե մարդու կյանքի որ ժամանակահատվածում և ինչ ձևով են ազդում դրանք գիտակցված գործելու կարողության ձևավորմանը, պետք է բացահայտվեն, բնութագրվեն, հետազոտվեն ու գնահատվեն դրանց ազդեցության ձևերն ու մասշտաբը, ձևավորվող կարողության ի հայտ գալու ժամանակի, մակարդակի և օգտագործման հնարավորությունների վրա: Մշակվելու են մոտեցումներ և միջոցառումներ՝ ուղղված գործոնների կառավարմանը և այդ միջոցով դրանց բացասական ազդեցությունները հնարավորինս կրճատելուն և մարդկային զարգացման ավելի բարձր մակարդակ ապահովելուն:

4. Նկատի ունենալով մարդու մոտ մտածելու և ստեղծագործաբար գործելու կարողության առկայության օգտակարությունը, այդ կարո-



ղության՝ որպես մարդկային կապիտալի արտահայտություն, օգտագործելու կարևորագույն դերը հասարակության զարգացման գործում, աներկբայորեն կարելի է եզրահանգել, որ հասարակության անդամների մոտ այդ հատկությունների ձևավորման վրա ազդող գործոնները պետք է մշտապես և շարունակաբար խորը գիտագործնական հետազոտությունների առարկա դառնան: Ավելին, այդ հետազոտությունները և դրանց շնորհիվ արդյունավետ լուծումների ստացումը տվյալ հասարակության, հետևաբար և դրա կառավարող համապատասխան /պատասխանատու/ մարմինների հոգածության առաջնային խնդիրների թվում պետք է դիտվեն: Պետք է ստեղծվեն և բնականոն աշխատանքային պայմաններում արդյունավետ գործեն այդպիսի հետազոտություններ իրականացնող և դրանց արդյունքների կիրառությանն օժանդակող մասնագիտացված կազմակերպություններ՝ համալրված բարձր որակավորման մասնագետ կադրերով:

5. Մտածելու և գիտակցված գործելու կարողության ձևավորման գործոնների թվում կարևոր են, եթե չասենք, կարևորագույններից են, անհատի անձնական ծագումն ու ցանկությունը, նրա կողմից կիրառվող ջանքերը, հաստատականությունը, աշխատասիրությունը<sup>1</sup>: Դրանք, պայմանավորված են ինչպես արտաքին, անհատից անկախ գործոններով, այնպես և նրա անձնական հատկություններով՝ մտածելակերպով, առաջնայնությունների համակարգով, մոտիվացիայով, ինչպես նաև արտաքին գործոնների ազդեցության նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքով /ռեակցիայով/: Ընդ որում, ժամանակի ընթացքում անհատի հատկություններով պայմանավորված գործոնների ազդեցությունն աստիճանաբար աճում է և որոշակի տարիքից հետո փաստորեն վճռորոշ է դառնում մարդու մտածելու և գիտակցված գործելու կարողության ձևավորման գործում:

Եթե ընտանիքը, շրջապատը, հասարակությունը և իհարկե, ինքը՝ անհատը, ինչ-ինչ պատճառներով բավարար ջանքեր չեն կիրառում, ապա մտածելու ընդունակությունը չի վերափոխվում համապատասխան կարողության: Ընդհակառակն այն աստիճանաբար նվազում է, դրան համեմատ կրճատվում է նաև մտածելու և բարձր մակարդակով գիտակցված գործունեություն իրականացնելու կարողություն ձևավորելու հնարավորությունը: Դրա փայլուն ապացույցը մանուկ հասակում մարդկային հասարակությունից դուրս մնացած և այլ կենդանակերպերի շրջանում աճած երեխաների զարգացման նկարագիրն է, մասնագիտական, նաև գեղարվեստական գրականությունում դրա մասին առկա բավարար թվով օրինակներն ակնհայտ ապացուցում են, որ այլ կենսաշրջանում անցկացված մանկությունից հետո երեխան շատ մեծ դժվարություններով և ոչ բավարար ծավալով է ձեռքբերում միջին

<sup>1</sup> Ըստ Ֆ. Էնգելսի՝ բարձր աշխատասիրությունն ի գորու է տաղանդավոր մարդուն հանճարի մակարդակի բարձրացնել, իսկ ծուլությունը հանճարին կարող է զրկել նույնիսկ որպես տաղանդ ներկայանալու հնարավորությունից:

մարդուն հատուկ, այդ թվում նաև մտածածը խոսքով արտահայտելու կարողությունները:

6. Մարդու մտածելու և գիտակցված գործելու կարողության հնարավոր մեծությունը սկզբնապես սահմանափակող հիմնական գործոնը նրան բաժին ընկած բնածին ընդունակություններն են: Վերջինները կարող են տարատեսակվել և գնահատվել ըստ տարբեր բնութագրերի: Դրանց թվում, մեր կարծիքով, կարևորվում են ընդունակությունների ուղղվածությունը /ըստ գործունեության ոլորտների, օրինակ՝ քաղաքական կամ տնտեսական գործունեություն, արվեստ, երաժշտություն, գիտություն և այլն/ և տարողությունը /ըստ մասշտաբի կամ խորության, օրինակ՝ ցածր, միջին, բարձր օժտվածություն, տաղանդ, հանճար կամ այլ/: Եթե կարողությունը ձևավորվում է ընդունակությունների հիմքի վրա, ապա այդ գործընթացում հաշվի պետք է առնվի ինչպես բնության պարզևած ընդունակությունների ուղղվածությունը, այնպես և տարողությունը: Կարծում ենք, շատ չեն այն դեպքերը, երբ որոշակի ուղղվածության բարձր ընդունակությունները նույն չափով և հաջողությամբ կարողության վերածվեն նաև այլ ուղղվածություն ունեցող գործունեություններում, եթե նույնիսկ մարդն անցնի այդպիսի վերափոխման ամբողջական և բարձր որակի ուսուցում<sup>1</sup>:

7. Առկա է մարդու բնածին ընդունակությունների և դրանք մտածված գործելու կարողության վերածելու փոխհարաբերության մի այլ ասպեկտ ևս: Գիտակցված գործելու բարձր կարողություն ունենալու ձգտումը և դրան հասնելու զգալի ծավալի աշխատանքը նույնիսկ նպատակահարմար պայմանների առկայության դեպքում, հազիվ թե հնարավորություն տան անձին իր մոտ ձևավորելու զգալիորեն ավելի բարձր կարողություն, քան դա հնարավոր է նրան ի ծնե բաժին ընկած ընդունակությունների սահմաններում:

Այստեղից հետևում է անձին տրված բնածին ընդունակությունների ուղղվածության և տարողության հնարավոր կամ բավարար ճշգրիտ բնութագրման կարևորությունը: Նախապես գիտենալով օժտվածության (ընդունակության) ուղղվածությունը, տվյալ անձի մոտ նույն ջանքերով, հաճախ նաև ավելի կարճ ժամանակահատվածում կարելի կլինի զգալիորեն ավելի բարձր կարողություն ձևավորել, քան եթե ձևավորման գործընթացը տարվեր բոլորովին այլ ուղղվածությամբ: Այսպիսի մոտեցումը, ինչպես նաև բնածին ընդունակությունների իրական ուղղվածության և տարողության հնարավոր վաղ կանխորոշումը, մեծապես կօժանդակեն մտածված գործելու կարողության ձևավորման և գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Դա, վերջին հաշ-

<sup>1</sup> Գրականությունում օգտագործվում է նաև «հանճարեղ ապուշներ» հասկացությունը, երբ որոշակի ուղղվածության /օրինակ՝ շախմատում/ շատ բարձր ընդունակություններ ունեցող անձն անկարող է իրեն դրականորեն ցուցաբերել այդ ուղղվածությունից խիստ տարբերվող այլ ոլորտներում:

վով, ծառայելու է նաև հասարակության զարգացմանը՝ այդ կարողության արդյունավետ օգտագործման դեպքում:

Բնածին ընդունակությունների ուղղվածության և տարողության հավաստի և հնարավոր վաղ կանխորոշման օգտակարությունն ու նպատակահարմարությունը, ինչ խոսք, կասկած չի կարող հարուցել, սակայն այսպիսի դրվածքի լայն կիրառությունն այժմ հազիվ թե հնարավոր է խնդրի տեսագործնական մշակվածության առկա անբավարար մակարդակի պայմաններում: Սակայն հասկանալի է նաև հասարակության զարգացմանը խոչընդոտող այդ պատճառի հնարավոր շուտ վերացման անհրաժեշտությունը: Ուստի, այս ուղղությամբ ևս հասարակությունը՝ ի դեմս պետական կառավարման մարմինների և առկա գիտական ներուժի, համապատասխան քայլեր պետք է ձեռնարկի:

Գ Ր Ա Վ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. **Маркарян К.В.**, Общая теория постиндустриального государства. Эдиториал, УРСС, М., 2002, с.352.
2. Эффективность государственного управления. Пер. с англ. Изд. Консалтбанкир, М., 1998, с.848.
3. **Хан Д.**, Планирование и контроль: концепция контролинга. Пер. с нем. Финансы и статистика, М., 1997, с.800.
4. Экономический и юридический словарь. Под ред. А.М. Азрилияна Институт новой экономики, М., 2004, с.1088.
5. **В.В. Глухов и др.**, Экономика знаний. Питер, СПб., 2003, с.528
6. История и философия экономики: пособие для аспирантов. КНОРУС, М., 2006, с.664.
7. **Աղաջանյան Յ.**, Ռացիոնալի և իռացիոնալի փոխհարաբերության հարցի շուրջ. Բանբեր Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, Երևան, 2005, 3(6), էջ 37-53:
8. Управление организацией. Энциклопедический словарь. Изд-й Дом ИНФРА, М., 2001, с.822.
9. Управление человеческими ресурсами. Энциклопедия. Пер. с англ. Питер, СПб., 2002, с.1200.
10. **Армстронг М.**, Практика управления человеческими ресурсами. Пер. с англ. Питер, СПб., 2004, с. 832.
11. Human Development Report 2001. Making new technologies work for human development, Oxford, Oxford University press, New York, 2001.
12. **Էլվին Քոֆլեր**, Գիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ, «Զանգակ-97», հրատ., Երևան, 2006, էջ 232:

**BENYAMIN YEGHIAZARYAN**

*Economic Research Institute at the RA Ministry  
of Finance and Economy Deputy Director,  
Doctor of Sciences (Economics), Professor*

**ARA GYURJYAN**

*Presidency of the Republic of Armenia  
Deputy Chief of Staff, Doctor of Economics*

**FORMATION OF THE CAPABILITY OF CONSCIENTIOUS ACTING  
AS A STRATEGIC ASPECT OF HUMAN RESOURCE  
DEVELOPMENT**

The mankind is entering the period of the establishment of a knowledge-based society, where a knowledge-based, i.e. purposeful and effective activity becomes a most powerful engine for development. Its base is the in-born capacity of a human being which transforms into a capability to act conscientiously for any individual and by acquiring practical utilization in the society, turns into the main factor of his/her development. The article discusses a large number of issues directly related to these processes. Among those issues of special importance are the in-born capacities granted to an individual; concreteness of their vector and possible limitations; the capability to turn those capacities into an ability of conscientious acting, their means, mechanisms, factors and the evaluation of their impact, issues present in this area or the level of their development, as well as clarifications and recommendations elaborated in this regard.

**ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր*

**ԼԵՎՈՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

*ՀՀ պետական կառավարման  
ակադեմիայի հայցորդ*

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հայաստանում սահմանադրական բարեփոխումները, ակնհայտորեն, հանրապետության ամբողջ օրենսդրական համակարգում ենթադրում են լուրջ փոփոխություններ՝ այն բարեփոխված Սահմանադրության նորմերին համապատասխանեցնելու համար: Դա նաև վերաբերում է վերահսկողությանը, որի տրամաբանական և համակարգված կազմակերպումը կհանգեցնի տնտեսական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Վերահսկողության համակարգում հատկապես կարևորվում է բյուջետային միջոցների, պետական և համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողությունը: Սրա վերաբերյալ առկա է համապատասխան հստակ ամրագրում ՀՀ Սահմանադրությունում: Համաձայն վերջինիս՝ վերը նշված գործառույթը պետք է իրականացվի ՀՀ վերահսկիչ պալատի կողմից, որն, ըստ էության, պետք է դառնա պետական մասնագիտացված մարմինների համակարգի մաս: Սահմանադրությամբ ամրագրված է նաև, որ այն անկախ մարմին է, որի գործունեության կարգը և իրավասությունը սահմանվում են օրենքով: Փաստորեն, վերահսկիչ պալատի գործունեությունը կարգավորող օրենսդրության՝ սահմանադրական փոփոխություններից բխող բարեփոխումները ՀՀ հանրային կառավարման համակարգի կատարելագործման կարևոր բաղադրիչներից են:

Հարկ է նշել, որ Սահմանադրությամբ, ՀՀ վերահսկիչ պալատի վերաբերյալ նշված դրույթներից բացի, ամրագրված են նաև ուրիշները: Մասնավորապես, «Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը:

Վերահսկիչ պալատը տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:

ՀՀ վերահսկիչ պալատի նախագահը նշանակվում է ՀՀ Նախագահի առաջարկությամբ՝ Ազգային ժողովի կողմից՝ 6 տարի ժամկետով: Վերահսկիչ պալատի նախագահ կարող է նշանակվել պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող անձը: Նույն անձը չի կարող ավելի, քան երկու անգամ անընդմեջ նշանակվել վերահսկիչ պալատի նախագահ» [1]:

Սահմանադրության վերոնշյալ դրույթները ենթադրում են միանգամայն նոր վերահսկիչ պալատի առկայություն՝ իր նոր անվանմամբ, կառավարման նոր համակարգով, բարեփոխված գործառույթներով և այլն:

Վերահսկիչ պալատի մասին օրենքի ընդունմամբ հանրապետությունում, ըստ էության, ձևավորվելու է անկախ պետական մասնագիտացված նոր մարմին, որով համալրվելու է պետական մասնագիտացված կառույցների համակարգը՝ ՀՀ կենտրոնական բանկը, քաղաքացիական ծառայության խորհուրդը, ազգային վիճակագրական ծառայությունը, տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը, հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը և կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Օրենսդրության մեջ դրանք սովորաբար անվանվում են օրենքով ստեղծված, մշտապես գործող մարմիններ:

Վերահսկիչ պալատի կառավարման մոդելի ընտրության առումով նոր օրենքի հայեցակարգային հիմնադրույթների մշակման համար կառույցի անկախության և մասնագիտացված լինելու գործոններն ունեն սկզբունքային նշանակություն: Այս հանգամանքն իմաստավորելու և վերահսկիչ պալատի գործունեության առանցքային սկզբունքները մշակելու համար նպատակահարմար է իրականացնել ՀՀ անկախ պետական մասնագիտացված մարմինների համակարգի ընդհանուր վերլուծություն:

Հարկ է նշել, որ ժամանակակից աշխարհում նախարարությունների և գերատեսչությունների հետ զուգահեռ գործում են հարաբերականորեն ինքնուրույն, որոշակի վարչական և ֆինանսական ինքնավարությամբ օժտված պետական մարմիններ: Նման ապակենտրոնացված մարմինները գնալով մեծ տարածում ու ազդեցություն են ձեռքբերում պետական կառավարման համակարգում: Հատկապես տնտեսական լիբերալ հարաբերություններ ձևավորող երկրներում շուկայական կառուցակարգերի ստեղծման և դրանց արդյունավետ գործունեության ապահովման նպատակով չափազանց կարևորվում են պետական մասնագիտացված կառույցների դերը, որոնց անհրաժեշտությունը, ըստ էության, պայմանավորված է հանրային կառավարումն որակապես նոր մակարդակի հասցնելու համար:

Այդպիսի մարմինների ձևավորումը սկսվել է հնուց: Անգլիայում նման մարմինների ձևավորումն սկսվել է դեռևս Թյուրդորների օրոք: Սակայն կառավարման անկախ մարմիններն առավել լայն տարածում

ստացան XX դարի սկզբին, երբ տնտեսական ճգնաժամերը, մենաշնորհներն սկսեցին լրջորեն սահմանափակել ազատ տնտեսական մրցակցությունը՝ սպառնալով խարխլել շուկայական տնտեսության հիմքերը: Փաստորեն, այս հանգամանքը դարձավ տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը հիմնավորող կարևոր գործոն:

Մասնագիտացված, հարաբերականորեն անկախ մարմինների ստեղծման իրավական ձևակերպումը սկսվեց նախորդ դարի սկզբից, մասնավորապես՝ ԱՄՆ-ում Շերմանի (1904) և Կլեյտոնի (1914) հակատրեստային օրենքներով՝ անկախ գործակալություններ, Մեծ Բրիտանիայում՝ հանրային կորպորացիաներ և Ֆրանսիայում՝ հանրային հիմնարկներ [2, c. 59]:

Ապակենտրոնացված մարմինների ստեղծումը լայն թափ ստացավ Ֆ. Ռուզվելտի «նոր կուրս» քաղաքականության իրականացման ժամանակ: Ինքնավար մարմինների արդյունավետ գործունեությունը կարևոր դեր խաղաց ամերիկյան տնտեսության հիմքերը ցնցած 1929-1933 թթ. «մեծ ճգնաժամի» հաղթահարման գործում [3, c. 223]:

Երկրորդ աշխարհամարտից հետո խառը տնտեսությամբ երկրներում ապակենտրոնացված մարմիններն աստիճանաբար դարձան պետության և մասնավոր սեկտորի միջև կապի կայուն օղակ: Ժամանակակից փուլում ապակենտրոնացված մարմինները հանրային կառավարման կարևորագույն օղակներից են: Ներկայումս համընդհանուր ճանաչում է ստացել այն դրույթը, որ նման մարմինները հաջող են գործում հատկապես տնտեսական և սոցիալական ոլորտներում:

Դրանք, կատարելով գործադիր լիազորություններ, միևնույն ժամանակ չեն ենթարկվում կառավարությանը և իրականացնում են հատուկ գործառույթներ, որոնք սահմանվում են համապատասխան օրենքներով: Մյուս կողմից, լինելով հատուկ իրավասության կառույցներ, նրանք պարտավոր են լինել հասարակական շահերի արտահայտիչը: Ունենալով յուրահատուկ իրավական կարգավիճակ՝ դրանք հանդիսանում են պետական կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս և իրենց լիազորությունները ստանում են պետությունից: Վերջինս է սահմանում այդ մարմինների գործունեության շրջանակներն ու ուղղությունները, այդ մարմինների առջև դրված նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև պատասխանատվության շրջանակները:

Փորձելով դասակարգել Հայաստանի ապակենտրոնացված պետական մասնագիտացված մարմիններն ըստ կառավարման սկզբունքի՝ դրանք կարող են պայմանականորեն բաժանվել կոլեգիալ և ոչ կոլեգիալ մարմինների (տես գծապատկերը): Վերջինիս վկայություն կարող է հանդիսանալ այն, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է մարդու իրավունքների պաշտպանի անկախության ինստիտուտը [1] :





Հայաստանի Հանրապետության ապակենտրոնացված, կոլեգիալ կառավարում ունեցող մարմինները կարող են պայմանականորեն բաժանվել երեք խմբի՝

1. քաղաքական և վարչական՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ,

2. տնտեսական՝ ՀՀ կենտրոնական բանկ [4], արժեթղթերի հանձնաժողով(համաձայն ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին ՀՀ օրենքի՝ [5] 2006թ. հունվարի մեկից արժեթղթերի հանձնաժողովի լիազորությունները փոխանցվել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին), տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, ազգային վիճակագրական ծառայություն [6], հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով,

3. սոցիալ-մշակութային՝ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով, հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ:

Կոլեգիալ կառավարմամբ մարմիններին բնորոշ ընդհանուր կարևորագույն հատկանիշը, թերևս այն է, որ դրանք օժտված լինելով գործադիր լիազորություններով, չեն մտնում կառավարության կազմի մեջ: Գծապատկերում այն արտացոլված է ՀՀ կառավարության՝ վերոնշյալ մարմինների հետ ուղղահայաց կապերի բացակայությամբ: Այս տեսանկյունից ուշագրավ է ՀՀ Նախագահի կողմից 2003 թվականին նախաձեռնած Սահմանադրության փոփոխությունների նախագիծը [7], որի 5-րդ գլուխը վերնագրված էր «Գործադիր իշխանություն» և նրա առաջին մասը ձևակերպված էր հետևյալ կերպ. «Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանությունը իրականացնում են ՀՀ կառավարությունը և օրենքով սահմանված գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող այլ մարմիններ»: Ըստ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի՝ այս դրույթը հնարավորություն էր տալիս օրենքով հիմնել կառավարությունից դուրս անկախ մարմիններ՝ հնարավորինս սահմանելով նրանց գործունեության բնագավառը և դատական վերահսկողության առարկա հանդիսանալը [8]: ՀՀ Սահմանադրության բարեփոխված տարբերակում 5-րդ գլուխը, ճիշտ է, պահպանում է «Կառավարությունը» վերնագիրը, սակայն նրա 85-րդ հոդվածում առկա՝ «Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների» դրույթը սահմանադրական երաշխիքներ է ապահովում կառավարության կազմից դուրս, օրենքով գործող այլ պետական կառավարման մարմինների համար:

Վերոնշյալ կոլեգիալ մարմինների ձևավորումը, լիազորությունների և պատասխանատվության շրջանակը սահմանվում են ՀՀ համապատասխան օրենքներով: Օրենքով ստեղծված լինելու հանգամանքն այդ մարմինների կայունության, գործունեության հարաբերական ինքնուրույնության, անկախության իրավական երաշխիք է: Վերջինս իր

անմիջական ամրագրումն է գտել մի շարք օրենքներում: Մասնավորապես, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» [9] օրենքի 5-րդ, «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» օրենքի [10] 1-ին, 2-րդ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» [11] օրենքի 17-րդ հոդվածներում նշված է ինքնուրույնության կամ անկախության սկզբունքը: ՀՀ անկախ մարմինների մեծամասնությունը կոչված է ներդաշնակեցնել պետական և մասնավոր շահերը, պաշտպանել հասարակության որոշակի խմբերին: Օրինակ՝ սպառողների շահերի պաշտպանության մասին դրույթներ են անմիջականորեն պարունակում «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» (հոդված 4) և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» (հոդված 18) օրենքները: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 4-րդ հոդվածում [12] նշված է, որ սպառողներն իրավունք ունեն ազատ ընդունել հեռուստառադիոհաղորդումները: Այս տեսանկյունից կարևորվում է քաղաքական չեզոքության, անկողմնակալության ապահովումը:

«Իրավական ակտերի մասին» [13] ՀՀ օրենքի համաձայն՝ վերոնշյալ բոլոր մարմինները, բացառությամբ հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի, նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասություն ունեն: Ընդ որում, այդ մարմինները որոշումներ կարող են ընդունել միայն օրենքով նախատեսված դեպքերում և սահմաններում, որոնք չեն կարող հակասել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին:

ՀՀ անկախ հանձնաժողովների (խորհուրդ, ծառայություն) բարձրագույն կառավարման մարմինները, ինչպես արդեն նշվեց, ունեն կոլեգիալ բնույթ, ի տարբերություն նախարարությունների և կառավարությանն առընթեր գերատեսչությունների, որտեղ գործում է միանձնյա կառավարման սկզբունքը: Կոլեգիալ մարմինների անդամների թիվը հստակ նշված է համապատասխան օրենքներում՝ 5-7 հոգի, իսկ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի համար՝ 9 հոգի: Որոշակի առանձնահատկություն ունի ԿԸՀ-ն, որի անդամների քանակը, համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի [14], պայմանավորված է նաև Ազգային ժողովի խումբ, խմբակցությունների քանակով: Համաձայն համապատասխան օրենքների՝ կառավարման մասնագիտացված մարմինների անդամներին նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը 5, 6 կամ 7 տարի ժամկետով: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ՔԾԽ անդամների թեկնածությունները ՀՀ Նախագահին ներկայացնում է ՀՀ վարչապետը: Նախագահը, համաձայն ներկայումս գործող ընտրական օրենսգրքի, ԿԸՀ անդամներից նշանակում է միայն մեկին: Որպես կանոն, հանձնաժողովի (խորհրդի) նախագահը ղեկավարում և կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքը, նախագահում և վարում է հանձնաժողովի նիստերը, ստորագրում է կոլեգիալ մարմնի ընդունած որոշումները և այլն: Հարկ է նաև նշել, որ կոլեգիալ մարմնի

նախագահները խորհրդակցական ծայնի իրավունքով մասնակցում են ՀՀ կառավարության նիստերին: Այս կառուցակարգը կարևոր է տարբեր մարմինների միջև համագործակցությունն ապահովելու համար:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում վերոնշյալ մարմինների կառավարման խորհուրդների անդամների նշանակման գործընթացում բարձրանալու է ՀՀ Ազգային ժողովի դերը:

Վերոնշյալ մարմինների անկախության համար կարևոր երաշխիք է այն, որ խորհուրդների կամ հանձնաժողովների անդամները պաշտոնանկ են արվում բացառիկ դեպքերում, ոչ թե վարչական, առավել ևս - քաղաքական նկատառումներից ելնելով, այլ օրենքի խախտման դեպքում: Այս հանգամանքն ընդունված է նաև միջազգային պրակտիկայում: Խորհուրդների և հանձնաժողովների անդամների վաղաժամկետ պաշտոնանկության հիմքերը հստակ սահմանված են օրենքներով:

Պետական կառավարման մանագիտացված մարմինների՝ կառավարությունից անկախության կարևոր երաշխիք է նաև պետական բյուջեից դրանց առանձին տողով ֆինանսավորելու պահանջը: Վերահսկողության համակարգում հույժ կարևոր դեր ունի ֆինանսական վերահսկողությունը: Որպես ֆինանսական վերահսկողության մեթոդ կարելի է դիտարկել հանձնաժողովների (խորհուրդ, ծառայություն) անդամների տարեկան եկամուտների հայտարարագրման՝ օրենսդրորեն ամրագրված պահանջը: Հայաստանում անկախ մարմինները, ունենալով իրավաբանական անձի կարգավիճակ, դատարանում հանդես են գալիս որպես հայցվոր և պատասխանող, նրանց վրա տարածվում են դատավարական ընդհանուր սկզբունքները:

ՀՀ վերահսկիչ պալատը, մեր կարծիքով, պետք է հանդես գա այդ համակարգում՝ հնարավորություն ստեղծելով օրենքի ընդունմամբ և կիրարկմամբ իրականացնել ՀՀ վերահսկիչ պալատի անկախության՝ սահմանադրորեն ամրագրված պահանջը:

Վերահսկիչ պալատի գործունեության հիմնարար սկզբունքները պետք է լինեն անկախությունը, կոլեգիալությունը և հրապարակայնությունը: Գիշտ է, դեռևս գործող ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին օրենքում նույնպես ամրագրված են այս սկզբունքները, սակայն նոր օրենքում դրանք պետք է ստանան միանգամայն նոր բովանդակություն՝ կապված վերահսկիչ պալատի կառավարման բարձրագույն մարմնի՝ դրա խորհրդի ձևավորման նոր մոտեցմամբ: Վերահսկիչ պալատի անկախ լինելու պարտադիր սկզբունքն ամրագրված է Լիմայի հռչակագրում, որին միացել են բազմաթիվ երկրներ: Դեռևս XIX դարում Լեհաստանում, որպես երկրի վերահսկիչ պալատի արդյունավետ գործունեության հիմք, ընդունված էին հետևյալ սկզբունք

ները՝ անկախությունը գործադիր իշխանությունից, հաշվետու լինելը խորհրդարանին, քաղաքական անկողմնակալությունը [15]: Ակնհայտ է, որ արդեն այդ ժամանակակաշրջանում վերահսկիչ պալատը՝ որպես պետական իշխանության մարմին, չէր տեղավորվում իշխա-

նությունների տարանջատման դասական համարվող երեք թևերի շրջանակներում:

Հայաստանում վերահսկիչ պալատի խորհուրդը կարող է բաղկացած լինել 5 կամ 7 անդամից /նախագահ, նախագահի տեղակալ և անդամներ/, որոնք նշանակվում են որոշակի` 5 կամ 6 տարի ժամկետով: Անդամների կեսին նշանակում է Ազգային ժողովը, մյուսներին` ՀՀ Նախագահը: Ի տարբերություն ներկա Ազգային ժողովի վերահսկիչ պալատի կառավարման կոլեգիալ մարմնի [16], որի անդամներն են վերահսկիչ պալատի նախագահը, նրա տեղակալը և պալատի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, վերահսկիչ պալատի կառավարման բարձրագույն մարմնի ձևավորման սկզբունքը տեղավորվում է ՀՀ սահմանադրական բարեփոխումների տրամաբանության շրջանակներում և ներդաշնակեցվում է վերոնշյալ այլ անկախ կոլեգիալ մարմինների հետ` կիրառելով իրավունքի անալոգիայի սկզբունքը: Մասնավորապես, այդ սկզբունքով է ձևավորվելու հեռարձակվող լրատվության միջոցների գործունեությունը կարգավորող անկախ մարմինը: Նպատակահարմար կլիներ նոր օրենքում ներառել վերահսկիչ պալատի անդամների նկատմամբ մասնագիտական և աշխատանքային փորձի որոշակի պահանջներ: Համապատասխան ոլորտը կարգավորող օրենքներով նմանատիպ պահանջներ առկա են հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ԱՎԾ կառավարման բարձրագույն մարմնի` վիճակագրության պետական խորհրդի, ՔԾԽ, հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների նկատմամբ: Այստեղ ևս, վերահսկիչ պալատի նախագահը պետք է խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցի ՀՀ կառավարության նիստերին: Վերահսկիչ պալատի անդամներն աշխատանքից ազատվում են բացառիկ` օրենքով հստակ սահմանված դեպքերում, որն ապահովվում է վերահսկիչ պալատի անկախությունը, անկողմնակալությունը և հաշվետու լինելը միայն օրենքին` դառնալով այդ մարմնի քաղաքական չեզոքության ևս մեկ երաշխիք:

Վերահսկիչ պալատի նախագահը վարում է նիստերը, ստորագրում է խորհրդի որոշումները, համակարգում է խորհրդի անդամների աշխատանքը, ներկայացնում է վերահսկիչ պալատը պետական և այլ մարմիններում, միջազգային կազմակերպություններում և այլն: Վերահսկիչ պալատի առջև օրենքով դրված պարտականությունների կատարման նպատակով պետք է ձևավորվի աշխատակազմ, որտեղ ծառայությունը պետք է համարվի պետական ծառայության առանձին տեսակ և նպատակահարմար է, որ վերահսկիչ պալատի աշխատակազմի գործունեությունը կարգավորվի օրենքով, որտեղ կհստակեցվի վերահսկիչ պալատի ծառայողների նկատմամբ ներկայացվող մասնագիտական և աշխատանքային ընդհանուր, նաև նեղ պահանջները: Այստեղ հարկ ենք համարում նաև նշել, որ ծառայությունը օրենքով ստեղծված, մշտապես գործող մարմինների (հանձնաժողով, ծառայություն, խորհուրդ) աշխատակազմերում, բացառությամբ ՀՀ կենտրոն-

նական բանկի աշխատակազմի, ներառված է ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում [17]:

Վերահսկիչ պալատի բյուջետային հայտը պետք է առանձին տողով ներկայացվի ՀՀ Ազգային ժողով և պետական բյուջեի մասին օրենքի ծախսային մասում ներկայացվի առանձին՝ ապահովելով վերահսկիչ պալատի անկախության ֆինանսական հիմքերը:

Որպես գործադիր իշխանության գործունեության նկատմամբ արտաքին աուդիտ իրականացնող մարմին և հաշվի առնելով արդեն ավանդական դարձած Ազգային ժողովի հետ համագործակցությունն ու նրան հաշվետու լինելը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության պահանջները՝ անհրաժեշտ է բարեփոխված տարբերակով պահպանել վերահսկիչ պալատի և Ազգային ժողովի համագործակցությունը: ՀՀ Ազգային ժողովը պետք է լինի վերահսկիչ պալատի՝ գործադիր իշխանությունից անկախության երաշխավորը: Սա աշխարհի բազմաթիվ երկրներում լայնորեն ընդունված և գործող մոդել է: Եթե կենտրոնական բանկի կողմից Ազգային ժողով ներկայացված ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիրն ենթակա չէ օրենսդիր մարմնի կողմից հաստատման, և որն ունի իր տնտեսագիտական հիմնավորումները, ապա նույնը չի կարելի ասել վերահսկիչ պալատի մասին: ՀՀ Ազգային ժողովը, լինելով կառավարության գործունեությունը վերահսկող քաղաքական մարմին, չի կարող չհամագործակցել Սահմանադրությամբ ամրագրված՝ բյուջետային միջոցների և պետական ու համայնաքային սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի՝ ՀՀ վերահսկիչ պալատի հետ: Առավել ևս, երբ այդ պահանջն ամրագրված է հանրապետության բարեփոխված Սահմանադրությունում: Երկրի օրենսդիր մարմինը պետք է հիմնարար դերակատարում ունենա վերահսկիչ պալատի աշխատանքների արդյունքների վերահսկման գործում: Մասնավորապես, չափազանց կարևոր է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հաշվետվությունների և եզրակացությունների ներկայացումը: Կարծում ենք, անհրաժեշտ է ԱՄՆ Կոնգրեսի օրինակով զգալիորեն մեծացնել վերահսկիչ պալատի ներկայացուցիչների մասնակցությունը Ազգային ժողովի հանձնաժողովների միատերին:

Կայացած, օրենքով գործող, գործադիր իշխանությունից իրապես անկախ, բարձր մասնագիտական գիտելիքներով և աշխատանքային ունակություններով օժտված, ինչպես նաև միշտ հավաստի փաստերի հիման վրա հենվող անձնակազմ ունեցող վերահսկիչ պալատը ժողովրդավարական, իրավական պետության կարևոր հիմքերից է:

Ամփոփելով՝ նշենք, որ ՀՀ անկախ մարմինների մեծ մասը ձևավորվել են 2000թ. հետո, որը որոշակիորեն բարդացրել է նրանց առջև դրված խնդիրների և գործառույթների հստակ տարանջատումը: Հանրային կառավարման համակարգի բարեփոխումներն իրականացնելիս հարկ է հաշվի առնել նաև այս հանգամանքը:

Այսպիսով, անկախ մարմինների վարչական ինքնուրույնությունը բոլորովին էլ չի նշանակում նրանց լիակատար անկախություն: Այս տեսանկյունից կարևորվում է այդ մարմինների համագործակցությունը պետական այլ կառույցների հետ: Ելնելով Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների տրամաբանությունից՝ կարևոր է վերոնշյալ մարմինների կառավարման ոլորտում Ազգային ժողովի դերի բարձրացումը և ՀՀ Նախագահի լիազորությունների որոշակիորեն հակակշռումը:

Հայաստանի Հանրապետությունը թևակոխել է հանրային կառավարման բարեփոխումների վճռորոշ փուլ: Այս փոփոխություններին նոր որակ և բովանդակություն են հաղորդել բարեփոխված Սահմանադրության պահանջները: ՀՀ վերոնշյալ մարմիններից շատերը, հատկապես ՀՀ վերահսկիչ պալատը գտնվում են կայացման փուլում և այս առումով դժվար է դեռևս նրանց գործունեության արդյունավետության որոշակի ընդհանրական գնահատական տալ: Սակայն մի բան ակնհայտ է, որ ինքնավար մասնագիտացված մարմինների արդյունավետ գործունեությունն ունի սկզբունքային նշանակություն Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության և ազատ շուկայական հարաբերությունների կայացման համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն:
  2. Административное право зарубежных стран, под. ред. **Козырина, Штатиной**, М., 2003, с.59.
  3. **Макконнел, Брю**, ЭКОНОМИКС, том 2, , М., 1992 с. 223.
  4. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք:
  5. «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենք:
  6. «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենք:
  7. ՀՀ Սահմանադրական փոփոխությունների 2003թ., նախագիծ:
  8. Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախնական կարծիք ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ, երրորդ հանդիպման արդյունքներ, 06/02/2001:
  9. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք:
  10. «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենք:
  11. «Տնտեսական նրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք:
  12. «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք:
  13. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք:
  14. ՀՀ ընտրական օրենսգիրք:
  15. //http://www.ach.gov.ru-официальный сайт Счетной Палаты РФ.
  16. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենք:
  17. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք:
- Օրենքների աղբյուրը` //http://www.parliament.am/legislation.



**VARDAN BOSTANJYAN**

*Professor of the Public Administration Academy of RA  
Doctor of Sciences (Economics),*

**LEVON MOVSISYAN**

*Post-Graduate Student of the Public  
Administration Academy of RA*

**THE CONSTITUTIONAL REFORMS AND THE CONTROL IN THE  
SYSTEM OF INDEPENDENT AGENCIES OF THE REPUBLIC OF  
ARMENIA**

After the constitutional reforms of 2005 are expected essential changes in Armenian legislation system included the adoption of the Law on Control Chamber of RA.

The authors of the article focus on the main features of the future Control Chamber, present and analyze the Constitution articles referred to Control Chamber. In the research the authors also present the system of independent agencies of RA and Control Chamber is observed as one of important parts of that system.

The authors come to the conclusion, that the autonomy of the agencies does't mean the fully independence at all.. The independent agencies of RA have an important role in the reformation and democratization process in RA.

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ՊԿԱ քաղաքագիտության ամբիոնի վարիչ,  
քաղաքագիտության դոկտոր

ԸՆՏՐԱՆՈՒ ՏԻՊԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԱՐՑԸ

Իշխանությունը գաղափարների, ռեսուրսների և արժեքների բազմաչափ գործողությունների հանրագումար է: Քաղաքական ընտրանին, հաշվի առնելով իշխանության բազմաչափությունը, հնարավորություն պետք է ընձեռի բնականոն կերպով ժողովրդավարական արժեքներ նուրբագրել հանրային և քաղաքական կառավարման համակարգ: Քաղաքակրթության փորձը վկայում է, որ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում դրսևորվող իշխանությունը և քաղաքական ընտրանու հետ նրա փոխհարաբերությունը բացարձակ մեծություն չէ: Ինչպես նշում է ռուս քաղաքագետ Գ. Աշինը, «Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանում հասարակության ընդերքում տեղի ունեցող բազմաբնույթ փոփոխությունների (հեղափոխություններ – հակահեղափոխություններ) ազդեցության տակ մոդելավորվում է իշխանության գաղափարական-քաղաքական ուղղվածությունը և ըստ այդմ էլ ձևավորվում և գործունեություն են ծավալում ընտրանու տիպերը» [1, c.19-20]:

Համաձայն կառավարման ոլորտների՝ ընտրանու տիպերը կարելի է ստորակարգել.

**1. Ըստ ձևավորման աղբյուրների՝**

ա) **արիստոկրատական՝** ժառանգական կամ փոխանցված իշխանություն, բ) **ժողովրդավարական՝** հատուկ է խմբային բարձր ինտեգրում և ներկայացուցչություն, իշխանությունը ձևավորվում է ընտրությունների միջոցով, գ) **ռազմավարական՝** հեղինակություն (authority) վայելող, հասարակական ու պետական ազդեցություն ունեցող **ռազմավարական** մտածողությամբ անհատներ կամ մարդկանց խմբեր են, որոնք զլոբալ ժողովրդավարական կառավարման սկզբունքների մշակման օգնությամբ ցանկանում են ձևավորել համամարդկային արժեքների հիմքով կառավարվող հասարակություն. ինչպես օրինակ՝ «Հռոմեական ակումբը», դ) **գործառական՝** մասնագետ կառավարիչներ, որոնք արդյունավետ **կատարում** են ստացած հրամանները և **իրավունք ունեն** ընդունված ծրագրային դրույթներով հրամաններ **տալ:**

**2. Ըստ պետական (էտատիստական) իշխանության հետ ունեցած հարաբերության՝**

ա) **կառավարող՝** գերիշխանություն իրականացնող ինտելեկտուալ անհատներ՝ իհարկե, իրենց թիմով, բ) **ընդդիմադիր՝** անհրաժեշտ է, որ ունենա ոչ միայն հեղինակություն, այլև ծրագիր, որի օգնությամբ հասարակությունը կարող է բնականոն արդիականալ:

**3. Ըստ ռազմավարական որոշումների վրա ունեցած ազդեցության՝**

ա) **բարձրագույն - ռազմավարական (ծրագրավորողներ)՝** ազդում է համապետական նշանակություն ունեցող որոշումների ընդունման, կատարման վրա (արևմտյան ժողովրդավարական երկրներում յուրաքանչյուր 1 միլիոն բնակչին ընկնում է 50 հոգի, որոնցից էլ առանձնացնում են գերազդեցություն ունեցող շուրջ 200-400 մարդ), բ) **կատարող (ռազմավարական)՝** բնակչության մոտ 5%-ը՝ (հակում կա այդ տոկոսայնությունը մեծացնել), առանձնացված՝ ըստ հետևյալ երեք հատկանիշների՝ **եկամուտներ, պրոֆեսիոնալ կարգավիճակ, պրոֆեսիոնալ կրթություն:** Նշված հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը տվյալ անհատին (կամ խմբին) դնում է **մարզինալ ընտրանու** վիճակում: Ընտրանու տիպերից յուրաքանչյուրը յուրովի է իրականացնում իր իշխանությունը: Այդ կառուցակարգում որոշիչն իրականացվող քաղաքական իշխանության լեգիտիմության խնդիրն է: Քաղաքացիների կողմից իշխանության օրինականության ընդունումը, կառավարողների գերիշխանության իրավունքի ճանաչումը և նրանց հպատակվելու համաձայնությունը կոչվում է լեգիտիմություն: Լեգիտիմությունը հանրագումարում է ընտրանու իրականացրած իշխանության հեղինակության նկատմամբ քաղաքացիների վարքաբանության մեջ տիրող այն հանդուժմանը, թե տվյալ երկրի համար ժողովրդավարական արժեքների բնագավառում ձեռք բերված քաղաքացիական փոխհամաձայնությունը և առկա վարչակարգը լավագույնն են: Իշխանության լեգիտիմությունը նախ՝ հասարակության (կամ նրա զգալի մասի) պատկերացումներն են իրականացվող կառավարման կարգի օրինականության վերաբերյալ, ապա՝ կառավարողների մոտ իրենց իրականացրած իշխանության իրավունքի գիտակցումը:

**Գերիշխանության տեսությունը և լեգիտիմությունը**

Կառավարողների կողմից իրականացվող իշխանության հարցերը համակարգված ուսումնասիրել է Մ. Վեբերը (1864-1920թ.)՝ հիմնադրելով գերիշխանության տեսությունը, համաձայն որի լեգիտիմությունը ենթադրում է կառավարողների և կառավարվողների միջև դերային գործառնությունների հստակեցում՝ հիմնված **հավատի, կամքի և աջակցության** վրա: Այս առումով ֆրանսիացի քաղաքագետ Դ. Կոլան գրել է. «... Ամբողջ տեսությունը հիմնված է հավատի վրա» [2, c.91]: Դիտարկելով ենթարկման հակվածությունը՝ որպես որոշակի կամքի և հավատի արդյունք՝ Մ. Վեբերը գերիշխանությունը վերլուծում է որպես բազ-

մաչափ երևույթ: Մի կողմից այն կարող է լինել որոշակիացված շահերի և սովորույթների, մյուս կողմից գերզգայականության, օտարվածության, հուսահատության արդյունք: Որպես այդպիսին, այն ոչ թե ուժերի պարզունակ հարաբերակցության արդյունք է, այլ՝ կուռ կառուցակարգ, որը «...Համարյա պայմանավորված չէ առանձին անձանց վարքաբանությամբ» [2, c.96]:

Ուսումնասիրելով երեք տիպի գերիշխանություն (ավանդական, խարիզմատիկ, ռացիոնալ-իրավական (լեգալ))՝ Մ. Վեբերը նպատակամետ հարցադրում է կատարում՝ նրանցից որի՞ն է պատկանում առավելագույն ուժը և ի՞նչու: Միանշանակ պատասխան չտալով՝ Մ. Վեբերը եկավ այն եզրակացության, որ ռացիոնալ գերիշխանությունն առավել արդյունավետ կարելի է դարձնել այն՝ ամրապնդելով խարիզմայով և ավանդույթով: Կիրառական առումով, ըստ Վեբերի, դա նշանակում է, որ խորհրդարանական արիստոկրատիան (այսինքն՝ խորհրդարանական ընտրանին) ժողովրդական լայն շրջաններում չի կարող ունենալ բավականին լեգիտիմացնող ուժ և պետք է զուգամիտվի կամ ժառանգական միապետությամբ (որի իրավունքները սահմանափակվում են խորհրդարանի կողմից), կամ էլ ընտրված քաղաքական լիդերով (նախագահով)՝ որին շրջապատած՝ քաղաքական ընտրանի պետք է կարողանա իրատեսական հիմքերի վրա համակարգել յուրաքանչյուրի շահերը: Վեբերը տարբերակում է գերիշխանության ձևերն ըստ իրենց աղբյուրի կամ հեղինակության: Ահա թե ինչ է գրում նա. «...հավերժ արժեքի հեղինակություն, բարքերի հեղինակություն: Այնուհետև՝ անհատական հեղինակություն, առաջնորդին լիարժեք անհատական նվիրվածություն և վստահություն՝ նրա որակով, տեսակով՝ խարիզմով պայմանավորված: Եվ վերջապես՝ ռացիոնալ կերպով ընդունված օրենքներով՝ պայմանավորված գերիշխանությամբ, հիմնված բանիմացության, հավատի և հեղինակության վրա» [3, c.481]:

Գերապատվություն տալով իրատես գերիշխանությանը՝ Մ. Վեբերը կառավարման գործընթացում կարևորում է բյուրոկրատիայի դերը. «աստիճանահարթակի վերին մասում նստած են կամ իշխանությունը ժառանգած միապետը, կամ ժողովրդի կողմից ընտրված նախագահը, կամ խորհրդարանական արիստոկրատիայի կողմից ընտրված լիդերները: Երկրորդ, քաղաքականությունը մշակվում է նրանց կողմից, սակայն ամենօրյա աշխատանքն իր բարդությամբ և բազմաչափությամբ հատուկ ապարատի օգնությամբ իրականացնում են բյուրոկրատները» [3, c.484]: Հենց այս նկատառումներն էլ հաշվի առնելով՝ Պ. Սորոկինը գրում է. «Ինչպես երևում է պատահական չէ, որ Մ. Վեբերը թույլատրեց իրեն ենթադրություն անել, որ ապագան պատկանում է բյուրոկրատիային՝ այսինքն բարձր կատեգորիայի ծառայողների դասակարգին» [4, c.369]:

Իրականացվող գերիշխանության լեգիտիմության կառուցակարգը քննարկելով որոշակի պատմամշակութային արժեքների հիմքի վրա՝ Մ. Վեբերը կատարեց հետևյալ ընդհանրացումը. «Բյուրոկրատիան միայն արևմտյան հասարակություններին չէ, որ հատուկ է... Ցանկա-

ցած հասարակություն, եթե ուզում է գերծ մնալ ավելորդ հակասություններից, պետք է ունենա կիրթ, բարոյական սկզբունքներ ունեցող բյուրոկրատիա» [3, c.442]: Ըստ Վեբերի՝ բյուրոկրատ կարող է լինել այն անձը, որը՝ 1) ունի մասնագիտական կրթություն և այդ պաշտոնում աշխատում է՝ ըստ կնքված պայմանագրի, 2) իշխանություն է իրականացնում օրենքների հիման վրա. նրա ընտրյալությունն որոշվում է պաշտոնական պարտականությունների կատարման ժամանակ՝ օրինապահության պահպանմամբ, 3) տվյալ պաշտոնում նշանակվելիս հաշվի է առնվել մասնագիտական որակավորման աստիճանը, 4) աշխատում է ոչ թե դեպից դեպք, այլ՝ անընդհատ, 5) ունի մասնագիտական հպարտություն և աչքի է ընկնում ջանասիրությամբ: Բյուրոկրատիայի տեսության մեջ Մ. Վեբերը տարբերակեց «իշխանություն» և «գերիշխանություն» հասկացությունները: ***Գերիշխելը կառավարողների և կառավարվողների միջև եղած այնպիսի հարաբերություն է, որում առաջինը պարտավորեցնող հրամանների միջոցով երկրորդին թելադրում է իր կամքը:*** Փաստորեն գերիշխանությունը քաղաքականորեն ամրագրված ***կարգ է***, որի դեպքում ընտրյալ փոքրամասնություն կազմող կառավարողները հրամայում են, իսկ մյուսները՝ ենթարկվում: Այսպիսի ***կարգը*** պետք է ներդաշնակի քաղաքական ընտրանու, հասարակության տարբեր շերտերի՝ ցանկալի է ողջ ընտրագանգվածի շահերի հետ:

Այս հիմքի վրա Մ. Վեբերը մշակել է «իդեալական տիպերի» տեսությունը, համաձայն որի, լեգիտիմ իշխանություն իրականացնողը հնարավորություն է ստանում դասակարգել կառավարման ընթացքում ստացած փորձնական նյութը՝ փոփոխման ենթարկելով կամ նոր տեքստ գրել՝ գերիշխանություն իրականացնելով:

«Իդեալական տիպերը», ըստ Մ. Վեբերի, չեն արտացոլում իրականությունը, դրանք միայն միջոց են փաստերի զուգամիտման համար. արժեքային մի համակարգ, որի հետ ուսումնասիրողը համեմատում է իրականությունը: Իր բովանդակությամբ «իդեալական տիպերի» տեսությունն ուղղված էր հասարակական-տնտեսական հասարակարգերի մարքսիստական ուսմունքի դեմ: Համաձայն «իդեալական տիպերի» տեսության՝ իշխանության լեգիտիմության համար որոշիչը հասարակության ***տնտեսական կյանքի, տարբեր սոցիալական խմբերի և կրոնական գիտակցության*** միջև առկա կապերի բացահայտումն ու վերլուծությունն է: Մեծ տեղ հատկացնելով սոցիալական կառուցվածքին և դասակարգային բախումներին՝ Վեբերը մարքսիզմի պրոլետարական հեղափոխության (հատկապես պրոլետարիատի դիկտատուրայի) տեսությամբ հակադրում է իր տեսակետը, որտեղ ընդգծում է հասարակությունում դասակարգային տարբերությունների բազմաձևության անհրաժեշտությունը՝ իշխանության լեգիտիմության հաստատման համար: Մ. Վեբերն ի սկզբանե մերժում է խորհրդային հասարակության լեգիտիմությունը՝ համարելով, որ գործող խորհրդանիշների

պայմաններում իրականացվող իշխանությունը ոչ միայն լեգիտիմություն, այլև լեգալություն էլ չունի [3, c. 122]:

Այսպիսով, իշխանությունը լեգիտիմ է, եթե այն համապատասխանում է իրավունքի և արդարության մասին մարդկանց գաղափարներին, նրանց հիմքում ընկած արժեքներին ու նորմերին, որոնցով հիմնվում է բոլորի կողմից ընդունված պետական իշխանությունը: Յուրաքանչյուր պետական իշխանություն վստահության, օրինականության՝ լեգիտիմության կարիք ունի: Այն կարող է վկայուցիոն զարգացում ապրել և հարատևել որպես գլխավոր քաղաքական արժեք՝ փոխհարաբերության, այլ ոչ միայն հոգեբանական և ֆիզիկական ներգործության ու, առավել ևս, ահաբեկչության միջոցով: Քաղաքական ընտրանու իշխանությունը լեգիտիմ է, եթե ա) այն ժողովրդից է բխում և իրագործվում է մեծամասնության կամքին համապատասխան. այսինքն՝ պետական իշխանություն ունեցողն ուղղակի կամ էլ անուղղակի ընտրված է ժողովրդի կողմից որոշակի ժամանակով և նրա կողմից էլ կարող է վերահսկվել, բ) պետական իշխանությունը իրականացվում է սահմանադրական սկզբունքներին համապատասխան: Իշխանության լեգիտիմության էության մեջ որոշիչը գերիշխանության արժեքաշահային համակարգի քաղաքական բովանդակությունն է, որը պետական իշխանության իրականացման մակարդակով արտացոլում է տարբեր տիպերի ընտրանիների վերաբերմունքը՝ մեկը մյուսի նկատմամբ: Այս ամենը նկատի ունենալով՝ Մ.Վեբերը գերիշխանության և իդեալական տիպերի տեսության շրջանակներում համակարգել է հպատակեցման դրդապատճառների առանձնահատկություններն արտահայտող եռաստիճան (ավանդական, խարիզմատիկ, ռացիոնալ-իրավական (լեգալ)) դասակարգման օգնությամբ [3, c.140, 141]:

Հանրագումարենք. Մ. Վեբերին, քանի որ նա արդյունաբերական հասարակության կառավարման կառուցակարգի մշակողներից է, հետաքրքրել է գերիշխանությունը և տիրապետությունը: Այս տեսանկյունից նա կարևորել է իշխանության լեգիտիմության բովանդակությունը, քանի որ այն պայմանավորված է քաղաքական ընտրանու որակով: «Իշխանությունը որպես գերիշխանություն, սոցիալական փոխհարաբերությունների ժամանակ ընտիր դերասանի կողմից սեփական կամքի իրականացման հնարավորությունն է՝ հակառակ ընդդիմության» [3, c.152]: Կյանքի վերջին տարիներին վերջնականապես ընդունելով առաջնորդի հանրաքվեական լեգիտիմությամբ խորհրդարանական ժողովրդավարության ներքո գործող ընտրանու համալրման սկզբունքները, Մ.Վեբերը գտնում էր, որ միայն ժողովրդի կողմից ընտրված քաղաքական առաջնորդը կարող է անմիջականորեն դիմել նրան: Փաստորեն լեգիտիմ գերիշխանության տիպերի միաձուլման արդյունքում Մ. Վեբերն առաջարկում է լեգիտիմության նոր ձև՝ *«առաջնորդի հանրաքվեական ժողովրդավարություն»*, որտեղ գերակա է հեղափոխականացվող մեծ ուժ ունեցող խարիզմատիկ առաջնորդի *կամքի* գերիշխանությունը [3 c.152, 153]:

**Լեզվատիրության հիմնահարցը ժողովրդավարական  
հասարակություններում**

Ժողովրդավարական հասարակություններն ուսումնասիրող ֆրանսիացի քաղաքագետ Ռ. Արոնը, հիմնականում ընդունելով Մ. Վեբերի «գերիշխանության տեսությունը», քննադատել է նրա «առաջնորդի հանրաքվեական ժողովրդավարության» գաղափարը, քանի որ «...նա բոլորից վեր է դասում ոչ թե ժողովրդավարությունը կամ մարդու ազատությունը, այլ իր երկրի ազգային վեհությունը, որին հասնելու համար կարևորվում է առաջնորդի խարիզմատիկ գերիշխանությունը՝ որպես փրկության միջոց, բյուրոկրատիայի անանուն թագավորության դեմ» [5, c.228]: Բազմադեմ ազատության գաղափարախոս Ռ. Արոնն այն կարծիքին էր, որ Մ. Վեբերի տեսության մեջ հստակ տարաբաժանված չեն խարիզմատիկ կառավարման սահմանները և թերագնահատված է ինստիտուցիոնալ կառույցների դերը ժողովրդավարական արժեքների հաստատման գործընթացում [6, c.124-125]: Բացի դրանից, Մ. Վեբերի ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, որ հանրաքվեի ճանապարհով ընտրված լիդերը կարող է դաշինք կնքել բյուրոկրատիայի հետ, ինչը, ըստ Ռ. Արոնի, գործնականում տեղի ունեցավ XX դարի ամբողջատիրական և մենիշխանական վարչակարգերում: Մ. Վեբերի գերիշխանության տեսությունը վերանայելով անգլո-սաքսոնական (Դ. Իստոն, Մ. Լիպսետ) և ֆրանսիական (Ռ. Արոն, Ժ. Շաբոն) դպրոցի ներկայացուցիչները միաձայն հանգեցին այն եզրակացության, որ քաղաքական գերիշխանությունը ժողովրդավարական հասարակություններում կարիք ունի ոչ այնքան խարիզմատիկ լիդերների, որքան զանգվածների աջակցության: Քաղաքական համակարգի նկատմամբ ունեցած աջակցությունը հաստատում է նրա գոյության օբյեկտիվությունը և որ ամենակարևորն է, հավատը համակարգի լեզվատիրության նկատմամբ: Դ. Իստոնը լեզվատիրությունը դիտարկում է արդարության և ճշմարտության (իսկության) հետ համատեղ [9, p. 10]: Լեզվատիրությունն այն փաստի արտահայտությունն է, համաձայն որի անհատն ակնհայտ կամ ոչ ակնհայտ ընկալում է քաղաքական օբյեկտը՝ իր բարոյական սկզբունքներին համապատասխան, իսկ արդարության և ճշմարտության նրա սեփական պատկերացումները համընկնում են քաղաքական դաշտում առկա արդարության և ճշմարտության հետ: Այսպիսով, կառավարողների և կառավարվողների միջև **որոշակի** արժեքային փոխհամաձայնության հիմքի վրա հաստատվում են **որոշակի** սոցիալ-հոգեբանական հարաբերություններ: Կատարելով քաղաքական իշխանության համակարգային վերլուծություն՝ Դ. Իստոնը ստեղծեց լեզվատիրության նոր և առավել գործառական հայեցակարգ, որի օգնությամբ հնարավոր դարձավ այն ուսումնասիրել կուտակված փորձարարական նյութի համակարգման միջոցով [9, p. 80]: Համաձայն Դ. Իստոնի հայեցակարգի՝ քաղաքական համակարգի աջակցությունը կարող է տարբեր լինել՝ ինչպես ըստ օբյեկտի բովանդակության, այն-

պես էլ ըստ գործունեության ժամանակի: Պայմանավորված ժամանակի բովանդակությամբ Դ. Իստոնն առաջարկեց տարբերակել աջակցության երկու տիպ՝ անորոշ և հատուկ [9, p. 100, 101]: Առաջինի պայմաններում քաղաքական կարգը, անկախ իր գործունեության արդյունքներից, աֆեկտի վրա հիմնված առավել ընդհանուր աջակցություն է ստանում: Այս պարագայում լեգիտիմությունը հիմնված է **հավատի և վստահության** վրա: Երկրորդի պայմաններում իշխանությունը լեգիտիմ է համարվում այնքան ժամանակ, քանի դեռ նրա գործողություններն արդյունավետ են, որի արդյունքում նրա նկատմամբ ցուցաբերվում է **գործիքային, կարճաժամկետ և գիտակցված** աջակցություն: Փաստորեն քաղաքական ընտրանու իրականացրած իշխանության նկատմամբ ունեցած երկարաժամկետ և կարճաժամկետ աջակցությունը համակարգը կարող է գերծ պահել անկայունությունից (նույնիսկ ճգնաժամից, քաոսից), եթե նրա առանձին կառուցվածքային տարրերը (կուսակցություն, քաղաքական լիդեր, ընտրանի), կենտրոնացնելով իրենց ուժերը, կարողանան կերպավորվել և կանխել լեգիտիմության՝ արդեն սկսած քայքայումը: Այս նկատառումներով Դ. Իստոնը տարբերակում է լեգիտիմության երեք աղբյուր՝ **գաղափարախոսություն, կառուցվածք և անձնական հատկություններ**: Համաձայն աղբյուրների՝ դիտարկվում են լեգիտիմության երեք մակարդակ՝ գաղափարական, կառուցվածքային և անձնավորված:

**1. Գաղափարախոսականը** համակարգում է այն արժեքները և նորմերը, որոնք տարբերակում են քաղաքական վարչակարգերը: Փաստորեն այս լեգիտիմությունը հիմնվում է քաղաքացիների այն համոզմունքների վրա, ըստ որի իրենց դավանած գաղափարները, ընդունած արժեքները և նորմերը ճշմարիտ են և արդար:

**2. Կառուցվածքային** լեգիտիմությանը բնորոշ է քաղաքացիների ճշգրտված դերային վերաբերմունքը քաղաքական վարչակարգի կառուցվածքին, նորմերին և իշխանական հարաբերություններին: Այս լեգիտիմության համար առանձնահատուկ տեղ ունի քաղաքացիների համոզմունքները, համաձայն որի առկա քաղաքական համակարգը իր կառուցվածքից արդյունավետ կերպով կարողանում է իրենց պահանջներին համապատասխան արժեքներ **ստեղծել և իրականացնել**: Այս լեգիտիմությունը ենթադրում է քաղաքական համակարգի օպտիմալացված կառուցվածք և մերժում է քաղաքական ժամանակի մեջ չորոշակիացված դեգերումների գործընթացը: Այս մասին ռուս քաղաքագետ Ս. Ելիսեևը գրում է. «Պատահական չէ, որ քաղաքական իշխանության կայունությամբ և արդյունավետությամբ աչքի ընկնող շատ երկրներում օպտիմալ կառուցվածքի փնտրտուքը տևել է ոչ թե տարիներ, այլ՝ տասնամյակներ, իսկ մի շարք դեպքերում՝ հարյուրամյակներ: Բավական է այստեղ հիշել Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի օրինակները» [7, c.128]:

**3. Անձնավորված լեգիտիմության** հիմքում ընկած է քաղաքացիների համոզվածությունը, որ տվյալ քաղաքական գործիչը (նաև ընտրանին) «լավ է խաղում իր դերը», որ տվյալ քաղաքական գործիչ անձ-



նական ունակությունները համապատասխանում են իր իշխանությամբ պայմանավորված դերակատարներին, իսկ դերակատարները կարողանում են համոզել քաղաքացիներին, որ իրենք անփոխարինելի են: Այս լեգիտիմությունը իր զգայական երանգավորությամբ կարողանում է կանխել քաղաքական գործընթացի անդեմությունը:

Հանգամանակից ուսումնասիրելով լեգիտիմության մասին Մ. Վեբերի և Դ. Իստոնի պատկերացումները՝ մեզ համար ակնհայտ դարձավ, որ վերջինիս համար իշխանությունը լեգիտիմ է, եթե ոչ միայն իրատես է, ինչպես կարծում է Մ. Վեբերը, այլև համապատասխանում է (արտահայտում է) քաղաքացու անձնական, բարոյական սկզբունքներին: Լեգիտիմության նման ընկալումը կարևորում է քաղաքացիների ակտիվ դերը և պատասխանատվությունը լեգիտիմացման գործընթացում՝ նրանց վերապահելով իշխանությունների գործունեությունը լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ ճանաչելու համար վերջնական որոշման ընդունումը: Հարցի նման ընկալումը հիմք ընդունելով՝ Ս. Լիփսեթը կարևորեց կառավարողների իշխանության լեգիտիմության և արդյունավետության փոխհարաբերությունները [10, p. 240]: Իր «Քաղաքական մարդը» գրքում պնդում է՝ օրինականությունը ենթադրում է, որ (քաղաքական) համակարգը պետք է կարողանա ստեղծել ու պահպանել այն բանի հանդեպ հավատը, որ գոյություն ունեցող քաղաքական հաստատություններն ամենից համապատասխան են տվյալ հասարակությանը [10, p. 43, 50, 54]: Համաձայն Ս. Լիփսեթի՝ արևմտյան հասարակությունները ստիպված են եղել գործ ունենալ դժվար և ապակայունացնող երեք խնդրի հետ.

- եկեղեցու կամ տարբեր կրոնների դերը պետության մեջ,
- աշխատավոր դասի տնտեսական և քաղաքական լիակատար իրավունքների ճանաչումը,
- ազգային եկամտի բաշխման համար շարունակվող պայքարը:

Այդ պատճառով լեգիտիմությունը քաղաքական զարգացման համար անհրաժեշտ որոշակիացված մակարդակ է, որտեղ քաղաքական համակարգի անդամները ընդունում են այն որպես իրենց աջակցությանն արժանի փաստ: Ռ. Արոնը, Դ. Իստոնը և Ս. Լիփսեթը, մեկնաբանելով Մ. Վեբերի «գերիշխանության տեսությունը» ըստ պոստմոդեռնիստական հարահոս փոփոխվող իրականության, փաստորեն համակարգային վերլուծության են ենթարկում լեգիտիմությունը: Մեր կարծիքով, բացի քննարկված ձևերից, քաղաքական զարգացման արդյունավետությունը կարելի է որոշել նաև լեգիտիմացման այլ եղանակներով և տեսակներով: Այդ իմաստով նրանցից առավել ուշագրավն ազգային արժեքային համակարգի քաղաքական էության արդիականացմամբ պայմանավորված լեգիտիմությունն է, որը հակված է ազգային գաղափարախոսության օգնությամբ արդյունավետ իշխանության իրականացման:

Գաղափարախոսությունը հիմնավորում է իշխանության լեգիտիմության համապատասխանությունը ժողովրդի, ազգի կամ հասարակության արժեքային համակարգին: Որոշիչն այն է, թե գաղափարախոս-

սությունն արժեքաշահային համակարգի որ շերտն է օգտագործում, ու՞ն և ի՞նչ է վերարժևորում կամ արժևորում: Իշխանության լեգիտիմությունը, որպես արժեքաշահային համակարգի հաստատման հնարավորության կառուցակարգ, երկակի վիճակ ունի. առաջին՝ դեպքում հաստատվում է գաղափարի իշխանություն, երկրորդ՝ իշխանության (հատկապես գերիշխանության) գաղափարը: Երկու դեպքում էլ լեգիտիմացվող իշխանությունն ենթարկվում է որոշակի կաղապարման: Գաղափարի իշխանությունն որոշակի կարգախոսային բովանդակությամբ ճնշում և բևեռացնում է հասարակության տարբեր ենթաշերտեր՝ շահարկելով նրանց արժեքաշահային համակարգի հոգեբանական առանձնահատկությունները: Իշխանության գաղափարի կարգախոսային շահարկումը հասարակությանը հնարավորություն չի տալիս քաղաքական իրականությունը ռեալ գնահատել՝ իր ելքի և մուտքի բազում տարբերակներով: Հաստատված իշխանությունը դառնում է ինքնանպատակ, իսկ իշխանություն իրականացնողները՝ «ինքնիշխաններ»: Ստեղծվում է օտարված վիճակ իշխանության գաղափարը իրականացնող, կառավարող ընտրանու և նույն այդ գաղափարի դրոշիներքո կառավարվող սոցիալական ենթաշերտերի միջև:

Ինքնիշխանությունը, իր իսկ ծնած օտարվածությունը զանգվածների ենթագիտակցությանն ուղղելով, բախումներից խուսափելու համար շահարկում է գաղափարը: Վերջինիս տրվում է տնտեսական, քաղաքական, հոգևոր բովանդակության՝ ելնելով նրանց ընտրանիների տրամաբանական, գաղափարական առանձնահատկություններից: Այդ իմաստով ուշագրավ են գաղափարի իշխանության շահարկման նրբերանգները, որոնք որոշիչ դեր ունեն գերիշխանության իրականացման համար: Քաղաքակրթության փորձն ապացուցում է, որ այս կառուցակարգը դրսևորման երկու ձև ունի՝ դասակարգային և ազգային: Սոցիալիզմի համաշխարհային համակարգի երկրներում, հատկապես ԽՍՀՄ-ում, գերիշխանություն էր իրականացվում կառավարման վարչա-իրանայական մեթոդով, որի կրողը պարտոկրատ ընտրանին էր: Նրա առաջադրած կարգախոսները զուտ դասակարգային բովանդակություն ունեին: Մինչդեռ ժողովրդավարացման ուղին թևակոխած երկրներում կառավարողները բնակչության աջակցությունն ստանալու համար կարևորում են ազգային ինքնիշխանության գաղափարը և այդ հիմքի վրա էլ բովանդակում կարգախոսները: Լեգիտիմության այս տեսակն այսօր հատուկ է ժողովրդավարացման գործընթացում գտնվող բոլոր պետություններին, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությանը:

Այսպիսով, իշխանության լեգիտիմացման գործընթացն անհրաժեշտ է դիտարկել ընտրանու տիպերի կողմից իշխանության գաղափարի և գաղափարի իշխանություն՝ հասկացությունների էության քննարկմամբ: Նման մոտեցման օգնությամբ մենք հնարավորություն ենք ստանում դիտարկել իշխանության իրականացման կառուցակարգերը, բացահայտել արժեքաշահային համակարգով պայմանավորված լեգիտիմությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ашин Г.К.**, История элитологии. М.: Издатель А.В.Соловьев, 2005.
2. **Кола Доминик**, Политическая социология / Пер. с фр.; Предисл. А.Б.Гофмана – М.: Изд. «Весь мир», ИНФРА – М., 2001.
3. **Вебер М.**, Избранные произведения. М., 1990.
4. **Сорокин П.А.**, Человек. Цивилизация. Общество / Общ. ред сост. и предисл. А.Ю.Согомонов. Пер. с англ., М.: Политиздат, 1992, с.369.
5. **Арон Р.**, История XX века. Пер. с фр. Г.А.Абрамова, М.: НИЦ «ЛАДОМИР», 2003.
6. **Арон Р.**, Мемуары, 50 лет размышлений о политике. Пер. с фр. Г.А.Абрамова, М.: НИЦ «ЛАДОМИР», 2002.
7. Политология [проблемы теории], СПб.: Изд. «Лань», 2000.
8. Политическая наука: новые направления, под ред. **Р. Гудина** и **Х.Д.Клингемана**, М., Вече, 1999.
9. **Iston David**, Political systems, N. Y., 1992.
10. **Lipset Samuel**, Political man, Oxford. 1985.

**MARIAM MARGARYAN**

*Head of the Chair of Political Science of Public  
Administration Academy of the RA,  
Doctor of Sciences (Political Sciences)*

**TYPES OF ELITE AND THE ISSUE OF  
LEGOTIMACY OF THE POWERS**

Political power has been studied as a relation of idea, will, resources and values. Various elite groups are revealed in policy time and territory as bearers of such relations and they define the essence and nature of legitimacy. From this viewpoint ideas of M. Veber, Lipsetti and Aaron have been analysed in comparison.

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավորությամբ տպագրվել են՝

- **Հրանուշ Հակոբյանի «Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում»,**
- **Միքայել Գրիգորյանի «Քրեական իրավունք» (ընդհանուր մաս) գրքերը**



**ԲԱՐՉՐԱՐԺԲ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՆԿԻՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆԸ**

Իրավագիտության դոկտոր, ՀՀ ԱԺ պատգամավոր Հրանուշ Հակոբյանի «Պառլամենտի և պառլամենտարիզմի զարգացման հիմնահարցերը ՀՀ-ում» աշխատությունն առաջին համակողմանի և ամփոփ հետազոտությունն է, որ ընդգրկում է հայ իրականության մեջ պառլամենտի և պառլամենտարիզմի ձևավորման տեսական ու մեթոդական հիմքերն ու զարգացման փուլերը:

Պառլամենտական ժողովրդավարության հարցերն աշխատության մեջ քննարկվել և պարզաբանվել են պատմական փորձի ընդհանրացման, մեծածավալ նորմատիվ-իրավական նյութի վերլուծության, հայրենական և արտասահմանյան իրավագիտության մեջ տեղ գտած հետազոտությունների հիման վրա, որն էլ Հ. Հակոբյանի այս աշխատության արժանիքներից մեկն է: Որպես արժանիք ընդգծենք նաև, որ հեղինակը ճիշտ մեթոդների ընտրությամբ հետազոտել է Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակի տարրերը, ներկայացրել «պառլամենտարիզմը»-ը՝ դրա դեֆինիցիայից մինչև ամենաընդարձակ ու բազմակողմ մեկնաբանությունները:

Հ. Հակոբյանն Ազգային ժողովի լիազորությունները ներկայացնելիս հատուկ անդրադարձել է Հայաստանի քաղաքական կյանքում կանանց դերին և, հիմք ընդունելով ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի հիմնարար դրույթներն ու սկզբունքները, նկատել. «Ժամանակն է, որ օրենքի փոխարեն հռչակվի իրավունքի գերակայությունը, որովհետև օրենքն իրավունքի կեցությունն է, հետևաբար օրենքը պետք է բխի իրավունքից, իսկ բոլոր մարդիկ (կի՞ն, թե՞ տղամարդ) ծնվում են անօտարելի իրավունքով, որն ամրագրված է միջազգային փաստաթղթերով և մեր երկրի սահմանադրությամբ»:

ՀՀ Ազգային ժողովի լիազորությունների հետ կապված՝ Հ. Հակոբյանն առաջարկում է դրանց ընդարձակումը կառավարության գործունեության վերահսկողության առումով: Բացի այդ, նա առաջարկ է ներկայացնում օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների ավելացման վերաբերյալ:

Հ. Հակոբյանի «Պառլամենտի և պառլամենտարիզմի զարգացման հիմնահարցերը ՀՀ-ում» աշխատության հիմնական շեշտադրումը և նպատակն Ազգային ժողովի գործունեության կատարելագործումն է, որի կապակցությամբ արված նրա եզրակացություններն ընդգրկում են անհրաժեշտ և հիմնավորված այն բոլոր չափանիշները, որոնք կապահովեն անհրաժեշտ օրենքների ընդունումը և նորանկախ մեր երկրի տնտեսական ու քաղաքական հիմնախնդիրների պատշաճ լուծումը:



### ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՄՓՈՓՈՂ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ իրավաբանական գրականությունը համալրվեց և մեկ արժեքավոր գիտական աշխատությամբ:

Իրավագիտության թեկնածու, դոցենտ, ՀՀ արդարադատության առաջին դասի պետական խորհրդական, ոստիկանության գնդապետ Միքայել Գրիգորյանի «Քրեական իրավունք» (ընդհանուր մաս) մենագրությունը քրեաիրավական ընդհանուր բոլոր հիմնախնդիրներին նվիրված համալիր և համակարգված աշխատություն է, որը նոր «մուտք» և լիարժեք հնարավորություն կապահովի ՀՀ քրեական օրենսգրքում կատարված (2003 թ.) լրացումների ու փոփոխությունների մեկնաբանություններում և ճիշտ պրակտիկա իրականացնելու գործում՝ նոր սահմանված դրույթների կիրառման հետ կապված բարդություններում:

Մ. Գրիգորյանը զուգակցելով գիտամանկավարժական երկարամյա փորձն ու դատավորի աշխատանքի գործնական դասերը, իր աշխատությամբ պարզաբանում է քրեական իրավունքի, քրեական օրենքի, հանցագործության և պատժի ուսմունքի, քրեական պատասխանատվության և դրա հիմքի, նաև քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմնահարցերը՝ կատարելով ինչպես մասնագետներին, այնպես էլ լայն հասարակայնությանը գործող քրեական օրենսդրությանն առավել մատչելի ձևով հաղորդակից դարձնելու կարևոր առաքելությունը:

Մ. Գրիգորյանի «Քրեական իրավունք» մենագրության գիտատեսական և գործնական-կիրառական կարևոր արժեքը պայմանավորված է նրանով, որ այն հանրապետության դատական պրակտիկայի գիտական ուսումնասիրության ու հետազոտական ընդհանրացումների



«Հանրային կառավարում» գիտական հանդեսն իր էջերում հրապարակում է հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները:

Խմբագրությանն ուղարկված հոդվածները չեն վերադարձվում, հանդեսի պայմաններին չհամապատասխանող նյութերը չեն ընդունվում: «Հանրային կառավարում» հանդեսի հրապարակումներում ներկայացված մոտեցումներն արտահայտում են հեղինակների տեսակետը:

### **Հոդվածների ներկայացման ձևը**

1. Հոդվածները ներկայացվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, տպագիր (1 օրինակ) և համակարգչային շարվածքով՝ կրիչով (*MS WORD* ծրագրով), հայերենը՝ «Arial Armenian», ռուսերենը՝ «Times New Roman» (*Unicode*) և անգլերենը՝ «Times New Roman» տառատեսակներով, 11 տառաչափով (Font): Պարտադիր է «և» տառի օգտագործումը: Բացակը (*space, пробел*) համարվում է առանձին նիշ: Բառերը տարանջատել միայն մեկ բացակով:

2. Էջը պետք է համապատասխանի A5 (Width 14.8 cm, Height 21 cm) չափսին, ունենա լուսանցքեր՝ ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 1 սմ: Էջերը պետք է համարակալված լինեն էջի ներքևում կենտրոնում: Տողերի միջև բացվածքը՝ 1,5 (1,5 lines): Ձեռագիրը պետք է ունենա կողմնորոշում էջի աջ և ձախ եզրերից (Justify):

3. Հոդվածն սկսվում է վերնագրով առաջին տողի կենտրոնում՝ մեծատառերով, որին հետևում է **հեղինակ(ներ)ի անունը և ազգանունը, պաշտոնը և կոչումը**: Հոդվածի վերջում ներկայացվում է ամփոփագիրն անգլերեն՝ ոչ ավելի, քան 0.5 էջ ծավալով (անգլերեն ներկայացված հոդվածների ամփոփագիրը պետք է լինի ռուսերենով): Հոդվածի ընդհանուր ծավալը՝ ոչ ավելի, քան 15 էջ:

4. Հոդվածը պետք է ձևակերպված լինի հստակ, վերջում պետք է տրվի գրականության ցանկը: Հոդվածը եզրափակվում է հեղինակ(ներ)ի ստորագրությամբ (ձախից) և աջից՝ նյութը խմբագրության հանձնելու թվականը (օրինակ՝ 15.04.2005 թ.):

5. Նկարները, գրաֆիկները և այլ վիզուալ նյութերը ներկայացվում են էլեկտրոնային տեսքով՝ առանձին ֆայլով կամ ներմուծված հոդվածի մեջ WORD ծրագրում իբրև նկարներ (*paste special/as picture*) և առանձին EXCEL ֆայլով (գրաֆիկների, դիագրամների և այլ դեպքերում): Միևնույն նյութի ներկայացումն աղյուսակի և նկարի ձևով չի թույլատրվում: Հոդվածում նկարների հղումները բերվում են հապավումով [օրինակ՝ «(տես նկ. 8)» կամ «ինչպես հետևում է նկ. 4-ից»:

6. Ընդունված խորհրդանշանների (% , \$) օգտագործումն անհրաժեշտ է: Թվականի հապավումները բերվում են բացակով և կետով (օրինակ՝ «1824 թ. պայմանագրով» կամ «1980-2000 թթ. ընթացքում»):

7. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մե-



կից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Եջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ «էջ» (հայերեն), с. (ռուսերեն), р. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ), օրինակ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով: Հաջորդաբար նշվում են կարգային համարը (առանց քառակուսի փակագծերի), հեղինակների ազգանուններն ու անվանատառերը՝ **նզացված (Bold)** և *շեղ (Italic)*, հրատարակության վերնագիրը, հրատարակչության անունը, վայրը (քաղաքը), թվականը, նաև էջ(եր)ը, եթե հղված աղբյուրը միայն մեկ անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Պարբերական հրատարակությունների համար հեղինակի անվան և ազգանվան ու հրապարակման վերնագրին հաջորդում են պարբերականի անվանումն առանց չակերտների, հրատարակման թվականը, հատորի հ/կամ թողարկման համարները, վայրը, հերթական համարը և էջ(եր)ը: Էլեկտրոնային աղբյուրների դեպքում վերնագիրը (եթե կա), web-հասցեն ամբողջությամբ և անսաթիվը, ամիսը, տարին: Օրինակ՝

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հարությունյան Ա.*, Եվրոպական Միության հանրային ծառայությունը, «Հանրային կառավարում», 2004 թ., թիվ 3-4, էջ 4:

2. *Борисов А.Б.*, Большой экономический словарь, М., Книжный мир, 2006, 860 с.

3. *Yasha Lange*. Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>,

4. <http://www.oecd.org/dsti/sti>.

8. Ենթատողային մեկնաբանությունները կամ հավելումները (footnotes) բերվում են տվյալ էջի ստորին հատվածում՝ յուրաքանչյուր էջում սկսելով 1 թվային համարակալումով (Restart each page), 9 տառաչափով:

9. Հոդվածի վերջում գրել հոդվածի վերնագիրը 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն (մեծատառերով):

10. Անձնական տվյալներ.

- անուն, ազգանուն, պաշտոն, կոչում՝ 3 լեզուներով,
- հեռախոսի համարը, էլեկտրոնային հասցեն:

*Խմբագրական խորհուրդ*

Խմբագիր՝	<b>ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐԶՈՅԱՆ</b>
Համակարգչային շարվածքը և ձևավորումը՝	<b>ԱՆՆԱ ՂՈՒՇՉՅԱՆԻ</b>
Սրբագրիչ՝	<b>ՊԱՏՎԱԿԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ</b>
Տեխնիկական խմբագիր՝	<b>ԱՍՅԱ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ</b>

Չափսը՝ 70x100<sup>1/16</sup>, թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ,  
ծավալը՝ 6.6 տպ. մամուլ, տպաքանակը՝ 300:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» տպագրատանը  
(հասցեն՝ Երևան, Արշակունյաց 2)